

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ, ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ
ՍԻՋԱԶԳԱՅԻՆ 2-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ
նյութերի ժողովածու

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ECONOMICS
CURRENT ECONOMIC PROBLEMS
2ND INTERNATIONAL CONFERENCE OF
STUDENTS, POSTGRADUATES AND YOUNG SCIENTISTS
proceedings

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ЭКОНОМИКИ
СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ЭКОНОМИКИ
2-ая МЕЖДУНАРОДНАЯ НАУЧНАЯ КОНФЕРЕНЦИЯ
СТУДЕНТОВ, АСПИРАНТОВ И МОЛОДЫХ УЧЕНЫХ
труды конференции

ԵՊՀ ԵԳՄ – YSU UYS – ОМУ ЕГУ
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН 2014

ՀՏՂ
ԳՄՂ
Տ

**Հրատարակվում է ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի երաշխավորությամբ**

***Published by the recommendation of the Academic Council
of the Faculty of Economics of YSU***

***Рекомендовано к печати Ученым советом
Экономического факультета ЕГУ***

Խմբագրական խորհուրդ

տ.գ.դ., պրոֆ. **Հ.Լ.Սարգսյան** (նախագահ), ԳԱԱ թղթ. անդամ **Գ.Ա.Ղարիբյան**, տ.գ.դ.,
պրոֆ. **Ա.Հ.Առաքելյան**, տ.գ.դ., պրոֆ. **Ս.Լ.Ղանթարջյան**, տ.գ.դ. , պրոֆ. **Մ.Վ.Միքայելյան**,
տ.գ.դ., պրոֆ. **Թ.Շ.Թորոսյան**, տ.գ.դ. **Հ.Գ.Սնանգականյան**, տ.գ.թ. **Բ.Ա.Ասատրյան**, տ.գ.թ.
Կ.Գ.Խաչատրյան (քարտուղար)

Editorial board

Doctor of Economics, Professor **H.L.Sargsyan** (Chairman), Corresponding Member of National Academy of Sciences of RA **G.A.Gharibyan**, Doctor of Technical sciences, Professor **A.H.Arakelyan**, Doctor of Economics, Professor **S.L.Gantarjyan**, Doctor of Economics Professor **M.V.Mikayelyan**, Doctor of Economics, Professor **T.Sh.Torosyan**, Doctor of Economics **H.G.Mnatsakanyan**, Candidate of Economics **B.A.Asatryan**, Candidate of Economics **K.G.Khachatryan** (Secretary)

Редакционная коллегия

դ.է.ն., проф. **Г.Л.Саргсян** (председатель), член кор. НАН РА **Г.А.Гарибян**, д.т.н., проф.
А.А.Аракелян, д.է.ն., проф. **Ս.Լ.Կանթարձյան**, դ.է.ն., проф. **Մ.Վ.Միքայելյան**, դ.է.ն., проф.
Թ.Մ.Թորոսյան, դ.է.ն. **Ա.Գ.Մնացականյան**, կ.է.ն. **Բ.Ա.Ասատրյան**, կ.է.ն. **Կ.Գ.Խաչատրյան** (секретарь)

**Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր: Միջազգային 2-րդ
գիտաժողովի նյութեր: - Եր., 2014 - 273 էջ:**

Ժողովածուի մեջ ներառված են ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների «Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր» խորագիրը կրող միջազգային գիտաժողովի նյութերը:

The collection includes proceedings of the international scientific conference of students, postgraduates and young scientists “Current economic problems”.

В сборнике включены труды международной научной конференции студентов, аспирантов и молодых ученых “Современные проблемы экономики”.

ՀՏՂ
ԳՄՂ

ISBN

© ԵՊՀ Երիտասարդ գիտնականների միավորում, 2014

Գիտաժողովի կազմակերպիչներ
Conference organizers
Организаторы конференции



ԵՊՀ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
FACULTY OF ECONOMICS OF YSU
ЭКОНОМИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ ЕГУ



ԵՊՀ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՄԻԱԿՈՐՈՒՄ
UNION OF YOUNG SCIENTISTS OF YSU
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЕНЫХ ЕГУ



ԵՊՀ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒԳԸ
STUDENT SCIENTIFIC SOCIETY FACULTY OF
ECONOMICS OF YSU
СНО ЭКОНОМИЧЕСКОГО ФАКУЛЬТЕТА ЕГУ

Ֆինանսական աջակիցներ
Financial support
Финансовая поддержка



ՀՀ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF SPORT AND YOUTH AFFAIRS OF THE RA
МИНИСТЕРСТВО СПОРТА И ПО ДЕЛАМ МОЛОДЕЖИ РА



ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՐ
ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ
YOUNG SCIENTISTS' SUPPORT PROGRAM
ПРОГРАММА ПОДДЕРЖКИ МОЛОДЫХ УЧЕНЫХ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԱՄ
YOUTH FOUNDATION OF ARMENIA
МОЛОДЕЖНЫЙ ФОНД АРМЕНИИ

ՄՊԱՌՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՍԻՄՈՒԼՅԱՑԻՈՆ ՄՈԴԵԼԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ալեքսանյան Րաֆֆի

*ԵՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ, մագ. 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ տ.գ.դ. պրոֆ. Ա. Առաքելյան*

Ներկայումս տարբեր երկրներում մեծապես կարևորվում են զանազան մակրոտնտեսական ցուցանիշների ապագա արժեքների կանխատեսումը և դրանց փոխադարձ ազդեցության գնահատումը:

Նշված արդյունքների ստացումը թույլ է տալիս պատկերացում կազմել, թե այս կամ այն ցուցանիշի բարենպաստ կամ անբարենպաստ փոփոխությունը ինչ չափի փոփոխության կբերի մեկ այլ ցուցանիշի արժեքներում: Վերջինս հնարավորություն է ընձեռում գնահատել պետության կողմից իրականացվող տարբեր նպատակային միջոցառումների համախառն ազդեցությունը տնտեսության վրա:

Միևնույն ժամանակ, ցուցանիշների կանխատեսումը բացահայտում է դրանց իրական և կանխատեսված արժեքների միջև առկա շեղումները՝ թույլ տալով գտնել և վերացնել այդ շեղումների պատճառները:

Նման ինֆորմացիայի ստացման նպատակով տարբեր հետազոտողների կողմից կիրառվում են տարբեր մեթոդներ: Այդ մեթոդների շարքում իր ուրույն տեղն է զբաղեցնում միաժամանակյա հավասարումների սիմուլյացիոն մոդելների գնահատումը: Այս մոդելների գնահատման և վերլուծության արդյունքները շատ հաճախ հիմք են ծառայում պետական քաղաքականության մշակման համար:

Միաժամանակյա հավասարումների համակարգը բաղկացած է մի քանի հավասարումներից և նույնություններից, որտեղ էնդոգեն փոփոխականները արտահայտվում են իրենց և այլ փոփոխականների ներկա և նախորդ ժամանակաշրջանների արժեքներով: Հայտնի է, որ չնայած առանձին ռեգրեսիոն հավասարումները գնահատելիս կարող ենք ստանալ իրականությանը շատ մոտ տվյալներ, այնուամենայնիվ, շատ հաճախ միաժամանակյա հավասարումների համակարգի սիմուլացման արդյունքները կարող են շատ քիչ համապատասխանել փաստացի արձանագրված միտումներին:

Այսպիսով, աշխատանքի հիմնական նպատակներն են՝

- կառուցել սպառման և ներդրումների սիմուլյացիոն մոդելը ՀՀ օրինակով

- ստուգել ռեգրեսիոն հավասարումների վիճակագրական նշանակալիությունը

- հաշվարկել յուրաքանչյուր հավասարման պատահական բաղադրիչի ստանդարտ շեղումը

- ստացված արդյունքների հիման վրա բացահայտել ներկայացված մակրոտնտեսական ցուցանիշների փոխադարձ ազդեցության ուժգնությունը

- կատարել վերջնական եզրակացություն ՋՅ տնտեսության համար մոդելի կիրառելիության վերաբերյալ:

Աշխատանքում օգտագործվել է հետևյալ գծային մակրոտնտեսական մոդելը¹

$$\begin{aligned}C_t &= a_0 + a_1 * Y_t + a_2 * C_{t-1} + \varepsilon_{1t} \\I_t &= b_0 + b_1 * (Y_{t-1} - Y_{t-2}) + b_2 * Y_t + b_3 * R_{t-4} + \varepsilon_{2t} \\R_t &= k_0 + k_1 * Y_t + k_2 * (Y_{t-1} + Y_{t-2}) + k_3 * (M_t - M_{t-1}) + k_4 * (R_{t-1} + R_{t-2}) + \varepsilon_{3t} \\Y_t &= C_t + I_t + G_t\end{aligned}$$

Գնահատելով տվյալ մոդելի պարզեցված տարբերակը ՋՅ օրինակով և օգտագործելով Լոուրենս Կլեյմի մոդելի պայմանները՝ ստացվել է, որ, ըստ էության մոդելը կիրառելի է կանխատեսումներ կատարելու համար: Բայց նշված հարցի շուրջ վերջնական համոզմունք արտահայտելու համար անհրաժեշտ է դիտարկել գործոնների շոկերը (ցնցումները):

Նախ, վերոնշյալ միաժամանակյա հավասարումների համակարգի առանձին հավասարումները ՋՅ օրինակով գնահատելու համար դիտարկվել են ՋՅ Ազգային վիճակագրական ծառայության, ԿԲ և Ֆինանսների նախարարության պաշտոնական կայքերում ՅՆԱ-ի, մասնավոր սպառման, պետական ծախսերի, փողի զանգվածի, ներդրումների և կարճաժամկետ տոկոսադրույքի վերաբերյալ տվյալները՝ 1997-2012 թվականների միջև ընկած ժամանակահատվածի համար:

Առաջին հավասարումն արտահայտում է մասնավոր սպառման կախվածությունը ՅՆԱ-ի մեծությունից (մուլտիպլիկատոր) և իր առաջին կարգի լագային արժեքից: Երկրորդ հավասարումը պարունակում է և մուլտիպլիկատոր, և աքսելերատոր, բացի այդ արտահայտում է ներդրումների կախվածությունը կարճաժամկետ տոկոսադրույքից: Երրորդ հավասարումը ներկայացնում է կարճաժամկետ տոկոսադրույքի կախվածությունը ՅՆԱ-ից, փողի զանգվածից և իր նախորդ ժամանակահատվածների արժեքներից, իսկ չորրորդը՝ մակրոտնտեսական հիմնական նույնությունն է (ՅՆԱ-ն ծախսային մոտեցմամբ փակ տնտեսության պայմաններում): Այսինքն՝ այստեղ

¹ Pyndick R., Rubinfeld D., Econometric models and Econometric forecast, McGrawhill.- New York, 1998, p. 431

ունենք չորս էնդոգեն և երկու էկզոգեն փոփոխական(փողի զանգվածը և պետական ծախսերը):

Առաջին հերթին իրականացվել է ռեգրեսիոն հավասարումների գնահատում առանձին-առանձին: Պատմական տվյալների հիման վրա երկրորդ և երրորդ հավասարումների համար չեն ստացվել վիճակագրորեն նշանակալի արդյունքներ: Այդ է պատճառը, որ նրանց համար կիրառվել են ողորկման մեթոդներ: Վերջիվերջո գնահատված երեք ռեգրեսիաներն էլ ստացվել են լավ որակի՝ դետերմինացիայի ճշգրտված գործակցի ավելի քան 90% արժեքով:

Հետագայում աղյուսակային տվյալների և գնահատված գործակիցների հիման վրա յուրաքանչյուր հավասարման համար ստացվել է պատահական բաղադրիչի շարքը կախված ժամանակից, և հաշվարկվել է շարքի ստանդարտ շեղումը:

Ստանդարտ շեղումների արժեքի հիման վրա գտնվել են էնդոգեն փոփոխականների արժեքները, որոնք ներառում են համակարգի էնդոգեն փոփոխականներին առնչվող շոկերը: Վերջինի հիման վրա կառուցվել են համեմատական գրաֆիկներ սպառման, ներդրումների և տոկոսադրույքի ստացված շարքերի համար:

Աշխատանքի իրականացման արդյունքում պարզվել է, որ չնայած նրան, որ առանձին ռեգրեսիոն հավասարումների գնահատականները եղել են լավ որակի, սիմուլյացիոն մոդելը որպես ամբողջություն չի արտահայտում տնտեսությունում արձանագրված փաստացի միտումները:

Քանի որ միաժամանակյա հավասարումների համակարգում ներդրումները, մասնավոր սպառումը, տոկոսադրույքը և ՀՆԱ-ն փոխադարձաբար արտահայտված են մեկը մյուսով, բավարար է, որ առաջանա շոկ որևէ փոփոխականի հանդեպ, և բոլոր փոփոխականների արժեքները կշեղվեն իրական տվյալներից:

Այսպիսով, նշված մոդելը հնարավոր է կիրառել ՀՀ տնտեսության համար տարբեր ցուցանիշների գծով կանխատեսումներ կատարելու նպատակով: Սակայն երբեք պետք չէ անտեսել այն հանգամանքը, որ տնտեսությունում միշտ առկա են պատահական ազդեցություններ և բոլոր ցուցանիշները փոխկապված են միմյանց հետ: Հետևաբար, կանխատեսումներ կատարելիս պետք է հաշվի առնվի այդ փոխկապվածությունը, որպեսզի ստացվեն առավել որակյալ արդյունքներ:

Հետագայում նախատեսված է ուսումնասիրել նշված մոդելի փոփոխականները՝ տատանողականության և կայունության տեսանկյունից, կանխատեսելու համար դրանց ապագա միտումները, ինչպես նաև նախատեսվում է ՀՀ օրինակով կառուցել Լոուրենս Կլեյնի առավել ընդգրկուն մոդելը, որը նա կառուցել է ԱՄՆ, Իսրայելի, Մեքսիկայի և ճապոնիայի տնտեսությունների համար՝ ներառելով նաև

իրացվելի ակտիվներին, աշխատավարձի դրույքների փոփոխություններին, կորպորատիվ շահույթին և այլ տնտեսական կատեգորիաներին առնչվող ցուցանիշներ:

Համեմատական վերլուծության համար հետաքրքիր կլինեն մոդելը կիրառել եվրասիական տնտեսական տարածքի երկրների օրինակով՝ ինչն էլ մենք նախատեսել ենք կատարել: Դրա արդյունքում հնարավորություն կստեղծվի համեմատել ետխորհրդային տնտեսական տարածքի երկրների տնտեսությունների նմանությունները:

ՓՈԽԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՒՐՍԵՐԻ ՏԱՏԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Գասպարյան Գուրգեն

ԵՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ, տ. գ.թ.

Դիտարկվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ մի շարք երկրների փոխանակային կուրսերի եկամտաբերությունների վարքը: Աշխատանքում օգտագործված են հայկական դրամի (AMD), ռուսական ռուբլու (RUB), ճապոնական իենի (JPY), շվեյցարական ֆրանկի (CHF), ուկրաինական գրիվնայի (UAH), եվրոյի (EUR), վրացական լարիի (GEL), անգլիական ֆունտի (GBP) օրական տվյալները:

Ակաիկեի և Բայեսի ինֆորմացիոն կրիտերիաների ու ճշմարտանմանության LRT թեստի միջոցով կատարենք կարճ և երկար հիշողությամբ մոդելների համեմատումը “պատահական դեգերումներ” մոդելի հետ: Իհարկե, այսպիսի համեմատությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ մի մոդելը բերվում է մյուսին: Գնահատման արդյունքները ներկայացնենք միայն դրամի եկամտաբերության համար: Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս, որ 2 չափանիշով էլ ARFIMA մոդելը լավագույնն է այլընտրանքային մոդելների համեմատ: Համանման արդյունքներ են ստացվել նաև մնացած փոխանակային կուրսերի համար:

Աղյուսակ 1

Մոդելների համեմատություն

	Պատահական դեգերում	ARMA(1,0)	ARMA(1,1)	ARMA(2,1)	ARMA(1,2)	ARMA(2,2)	ARFIMA (1,d,1)
AIC	2.018449	2.018820	2.019366	2.018086	2.017717	2.019337	2.017651
BIC	2.039265	2.039754	2.039611	2.039657	2.039273	2.045221	2.039207
LRT	-1185.85	-1184.066	-1183.387	-1180.625	-1181.417	-1180.360	-1179.379

Մասնավորապես այսպիսի վարքը կարող է կապված լինել այլ տնտեսական փոփոխականների դինամիկ հատկությունների հետ, ինչպիսիք են օրինակ հարաբերական գները, փողի հարաբերական պահանջարկը կամ եկամտի հարաբերական մակարդակը, որոնք տարբեր հետազոտությունների համաձայն համարվում են մասնակի ինտեգրացված: Քանի որ այս փոփոխականների փոփոխությունները ընկած են փոխանակային կուրսերի տատանման հիմքում, որը բխում է փոխանակային կուրսերի ձևավորման ստանդարտ մոդելներից, ապա այս շարքերում երկար հիշողության առկայությունը փոխանակային շարքերի եկամտաբերություններում նման էֆեկտի առաջացման գործոն կարող է հանդիսանալ: Սակայն այս հիպոթեզը ունի թերություն.

կիրառվող մակրոտնտեսական փոփոխականների և փոխանակային կուրսերի շարքերի դիտարկումների հաճախականությունները տարբերվում են, ինչը բարդեցնում է ֆորմալ փոխկախվածության հայտնաբերումը:

Եթե երկար հիշողության ֆենոմենը իրականում պարունակվում է եկամտաբերությունների շարքերում, այլ ոչ թե փոխանակային կուրսի վրա ազդող ֆունդամենտալ փոփոխականների շարքերում, ապա այսպիսի էֆեկտի հիմնական հետևությունը այն է, որ գոյություն ունի երկարատև խզում փոխանակային կուրսի դիտարկված և ֆունդամենտալ արժեքների միջև: Այս ֆենոմենը վկայում է նոր ինֆորմացիայի նկատմամբ զների ադապտացման երկարատև ժամանակահատվածի մասին, որը հակասում է արդյունավետ շուկայի հիպոթեզին: Ֆինանսական շուկաներում երկար հիշողության առկայության հնարավոր բացատրությունը կայանում է հետերոգեն տնտեսական գործակալների փոխազդեցության մեջ: Այդպիսի փոխազդեցության առանձնահատուկ դեպք է “ընդօրինակման” երևույթը: Մինյոնի կողմից կատարված հետազոտությունները հաստատում են ֆինանսական ակտիվների զնի և ֆունդամենտալ արժեքի միջև խզման առաջացման տեսական հնարավորությունը: Մինյոնը ցույց է տվել, որ եթե ֆունդամենտալ փոփոխականների նկատմամբ տնտեսական գործակալների վստահության աստիճանը նվազում է, ապա շուկայի օպերատորները հակված են ընդօրինակել մյուսների վարքը: Դրա արդյունքում ֆունդամենտալ փոփոխականների նկատմամբ վստահության կորուստը ծնող շուկը կունենա երկարատև հետևանքներ:

Երրորդ բացատրությունը ունի զուտ տեխնիկական բնույթ և կապված է ինֆորմացիայի ստացման տարբեր պրոցեսների ազդեցացման և հավաքագրման հետ:

Բոլոր փոխանակային կուրսերում բացի AMD-ից հայտնաբերվել է երկար հիշողություն նաև տատանողականության մեջ: Տատանողականության կանխատեսման կառուցման նպատակով ուսումնասիրվել է բարձր և ցածր փոփոխականության ժամանակահատվածների կանխատեսման հնարավորությունը: Քանի որ տատանողականությունը միշտ ոչ բացասական մեծություն է, ապա անհրաժեշտ է ընտրել որոշակի դրական թիվ “էտալոնային” մակարդակի դերում, որը սահման կհանդիսանա բարձր և ցածր փոփոխականության միջև: Սողելով գնահատված փոփոխականությունը ունի ավելի բարձր միջնաթիվ, քան իրական փոփոխականության գնահատականը: Այդ պատճառով որպես էտալոնային մակարդակ վերցվում է մեդիանայի երկու արժեք, և եթե իրական ու կանխատեսված փոփոխականության արժեքները միաժամանակ մեծ են կամ փոքր համապատասխան մեդիաններից,

ապա կանխատեսումը հնարավորություն է տալիս որոշել շուկան տվյալ պահին հանգիստ է, թե՛ ոչ: Ստացված համընկնումների քանակը գտնվում է 62-68% միջակայքում: Այնուհետև կիրառվել է Բրիճի և Գլոստենի առաջարկած թեստը, որի էությունը կայանում է ստորև բերված ռեգրեսիոն հավասարման գործակիցների նշանակալիության ստուգման մեջ՝

$$I_{\{h_t > c_1\}} = \alpha_0 + \alpha_1 \times I_{\{\tilde{h}_t > c_2\}} + v_t$$

որտեղ $I_{\{\cdot\}}$ - իրենից ներկայացնում է ֆունկցիա-ինդիկատոր, որը հավասար է մեկի, եթե արգումենտի համար պայմանը կատարված է և զրոյի՝ հակառակ դեպքում, c_1 , c_2 - էտալոնային մակարդակներն են: Թեստի արդյունքները ներկայացված են ստորև՝

Աղյուսակ 2

Բրիճի և Գլոստենի թեստի արդյունքները

AMD	RUB	EUR	CHF	GBP	GEL	UAH
0.39 (14.77)	0.44 (14.02)	0.43 (14.13)	0.45 (14.05)	0.44 (14.2)	0.44 (14.2)	0.39 (14.8)
0.2 (5.27)	0.11 (2.39)	0.12 (2.64)	0.09 (2.2)	0.11 (2.62)	0.1 (2.75)	0.22 (5.51)

Գործակիցները նշանակալի են, ինչը նշանակում է, որ կարելի է կանխատեսել, թե փոփոխականության մակարդակը կլինի բարձր կամ ցածր, հետևաբար որոշում կայացնել շուկայական գործողությունների կատարման ժամանակահատվածի մասին:

ՀՀ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶՄՅԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՆՀՐԱՎԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Գրիգորյան Նաիրա

Երևանի Եվրոպական Կրթական Տարածաշրջանային

Ակադեմիա, հայցորդ

Գիտական ղեկավար՝ տ.գ.թ. Ն. Կիրակոսյան

Անշարժ գույքի շուկան ազգային շուկայական տնտեսության սեկտոր է, որն անշարժ գույքի օբյեկտների, շուկայում տնտեսավարող սուբյեկտների, շուկայի գործունեության գործընթացների, այսինքն՝ արտադրության (ստեղծման), օգտագործման, անշարժ գույքի օբյեկտների փոխանակության և շուկայի կառավարման գործընթացների և շուկայի գործունեությունն ապահովող մեխանիզմների (շուկայի ենթակառուցվածքներ) համախումբ է:

Անշարժ գույքի շուկայի ենթակառուցվածքի ձևավորումն ապահովվում է շուկայի ինստիտուցիոնալ և ոչ ինստիտուցիոնալ մասնակիցների համընդհանուր ջանքերով: Դրա հետ մեկտեղ մասնագիտական ուղղվածություն ունեցող կազմակերպությունների և անձանց առանձին խմբեր իրենց ուշադրությունը կենտրոնացնում են շուկայի գործունեության տարբեր ոլորտների վրա: Հետևաբար անշարժ գույքի գնահատման ոլորտում մեծ դեր է ունենում տեղեկատվության հավաստիության բարձրացման առավել արդյունավետ մեթոդների օգտագործումն ու խմբավորումը մեկ ընդհանուր տեղեկատվական բազայում:

Հարկ ենք համարում նշել, որ անշարժ գույքի շուկան Հայաստանի Հանրապետությունում դեռևս գտնվում է կայացման փուլում: Առկա են բազում գերակա խնդիրներ՝ կապված ինչպես բնագավառի օրենսդրական կարգավորման, այնպես էլ մասնագետների որակական հատկանիշների բարձրացման, համապատասխան կրթական ծրագրերի ներդրման, տեղեկատվության մատչելիության ապահովման, անշարժ գույքի շուկայի կայացման ու զարգացման, ինչպես նաև այլ խնդիրների հետ:

Հատկանշական է, որ անշարժ գույքի շուկան, բազմաթիվ չափանիշներից ելնելով, հեռու է կատարելությունից:

Վերլուծաբանները մի կողմից բախվում են անշարժ գույքի շուկայում տնտեսական փոխադարձ կապերը ճշգրտորեն և միարժեքորեն ձևակերպելու դժվարություններին, երբեմն էլ՝ դրա

անհնարինությանը, իսկ մյուս կողմից՝ անհեռանկար է այլ շուկաներում օգտագործվող վերլուծական տեխնոլոգիաները Հայաստանի անշարժ գույքի շուկա փոխանցելը, քանի որ դրանք հարմարեցված են այլ շուկայական միջավայրում օգտագործելու համար:

Ուսումնասիրելով զարգացած երկրների անշարժ գույքի շուկայի գործունեության շուրջ մեկդարյա պատմությունը՝ կարելի է եզրակացնել, որ անշարժ գույքի շուկաներում առաջացած խոշոր ճգնաժամերից շատերի գլխավոր պատճառներից մեկը եղել է վերլուծական աշխատանքի ոչ պատշաճ որակը¹: Ոչ միայն ճգնաժամերի վտանգը, այլև ընթացիկ ամենօրյա խնդիրները (աճող մրցակցություն, կարճ ժամկետում գերշահույթ ստանալու հնարավորությունների նվազում, անշարժ գույքի զարգացման երկարաժամկետ և կապիտալատար նախագծերի իրականացում, որոշումների հիմնավորվածության նկատմամբ բարձր պահանջներ ունեցող արտասահմանյան ներդրողների մուտքը շուկա) օբյեկտիվորեն հանգեցրել են այն համոզմանը, որ Հայաստանի անշարժ գույքի շուկայում որակյալ վերլուծության նշանակությունը ձեռք է բերում ավելի ու ավելի մեծ կշիռ:

Ներկայումս անշարժ գույքի շուկայի վերլուծությամբ զբաղվում են ինչպես մասնավոր ընկերություններն ու գիտական կազմակերպությունները, այնպես էլ պետական կառույցներն ու հասարակական կազմակերպությունները: Սակայն նրանց կողմից իրականացվող վերլուծությունները չունեն միասնական մեթոդաբանական հիմք, և երբեմն էլ ստացվող արդյունքները կտրուկ տարբերվում են միմյանցից: Սիա թե ինչու շուկայում տիրող իրավիճակի վերաբերյալ կարող են տրվել տարբեր մեկնաբանություններ:

Հետևաբար՝ լիարժեք և հավաստի տեղեկատվությունն այսօր անհրաժեշտություն է ոչ միայն միջնորդների, այլ նաև անշարժ գույքի շուկայի այլ մասնակիցների՝ գնահատողների, վերլուծաբանների, ներդրողների, ապահովագրական ընկերությունների, բանկերի և այլ կազմակերպությունների համար: Նման տեղեկատվության կարևորագույն սպառողներից է դարձել պետությունը, որը լուծում է մի շարք խնդիրներ կապված հարկման նոր համակարգի կազմակերպման, գույքագրման, անշարժ գույքի հաշվառման ու կառավարման հետ:

Սակայն գոյություն ունեցող նկարագրման ձևաչափերը թույլ չեն տալիս շուկայի մասնակիցներին ստանալ հիմնավորված և համադրելի տվյալներ, քանի որ դրանք բազմատեսակ են, իսկ նկարագրումների ու դասակարգման ճշգրտությունը՝ անբավարար:

¹ Мирзоян Н., Оценка стоимости недвижимости. / – М., 2005. – 45 с.

Հետևաբար՝ անշարժ գույքի հայաստանյան շուկայի նոր իրականությունը և խնդիրների տեսանկյունից օբյեկտիվ իրավիճակը թելադրում է անշարժ գույքի օբյեկտների նկարագրման ստանդարտացման անհրաժեշտություն:

Մասնավորապես՝ տեղեկատվության գործընթացը պայմանականորեն կարելի է բաժանել երեք հիմնական փուլերի՝ *տեղեկատվության հավաքագրում, վերամշակում և վերլուծություն:*


Տեղեկատվության հավաքագրումը վերը թվարկված գործընթացներից առավել աշխատատարն է: Անշարժ գույքի շուկայում տեղեկատվության հավաքագրումից առաջ անհրաժեշտ է կատարել տեղեկատվության նախնական դասակարգում և աղբյուրների ընտրություն՝ ելնելով դրանց հավաստիության աստիճանից: Տեղեկատվության նախնական դասակարգումը կախված է անշարժ գույքի շուկայի մասնակցի առջև դրված խնդրի պայմաններից, որից ելնելով մասնագետը ընտրում է տվյալների այն ամբողջությունը, որ պետք է հավաքագրվի համապատասխան աղբյուրներից¹:

Տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են անշարժ գույքի շուկայի մասնակիցների առջև դրված խնդիրների լուծման համար, առաջնահերթ պետք է ներառեն ընդհանուր տեղեկություններ շուկայի վիճակի, առանձնահատուկ տվյալներ դիտարկվող անշարժ գույքի տեղադրության, գտնվելու կոնկրետ վայրի և համեմատվող օբյեկտների վերաբերյալ: Այսինքն՝ անշարժ գույքի շուկայում գնային իրավիճակի, գների փոփոխման շարժընթացի և գնահատման հետ կապված խնդիրների լուծման համար անհրաժեշտ է իրականացնել հավաքագրված տեղեկատվության վերլուծություն (տես՝ գծապատկեր 1): Ուսումնասիրությունների արդյունքում կարելի է փաստել, որ շուկայի ամբողջ վերլուծության ժամանակ համընդհանուր խնդրի առավել բնութագրականը համարվում է անշարժ գույքի շուկայում գնային վիճակի գնահատումն ու կանխատեսումը:

Հատկանշական է, որ ընդհանուր տեղեկությունները ներառում են սոցիալ-տնտեսական, պետաիրավական և էկոլոգիական գործոններ, որոնք կարող են ազդեցություն ունենալ անշարժ գույքի արժեքի վրա²: Առանձնահատուկ տեղեկությունների հավաքագրումը հանդիսանում է ընդհանուր աշխատանքի առավել աշխատատար մասը, հատկապես, երբ անշարժ գույքը տեղակայված է անժանոթ տարածաշրջանում կամ ունի առանձնահատուկ որակական կամ քանակական բնութագիր:

¹ Տես՝ Ստեփանյան Ս., Հովհաննիսյան Վ., Գրիգորյան Ա. «Անշարժ գույքի էկոնոմիկա և կառավարում»: Ուսումնական ձեռնարկ.- ԵՃԵԴՀ.- Երևան, 2008.- էջ 75:

² Տես՝ Топман Л. Оценка недвижимости. М.: ЮНИТИ, 2002. էջ 24:



Գծապատկեր 1. Անշարժ գույքի շուկայի վերլուծության կառուցվածքը¹

Անշարժ գույքի շուկայի ուսումնասիրության համար հավաքագրվող սոցիալ-տնտեսական, պետաիրավական, էկոլոգիական գործոնների վերաբերյալ տվյալների հիմնական աղբյուր են հանդիսանում հանրային տեղեկատվության այնպիսի միջոցները,

¹ Գծապատկերը կառուցված է հեղինակի կողմից:

ինչպիսիք են մամուլը, համացանցային տարբեր կայքերը և այլն: Առանձնահատուկ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ մասնագիտական ուղղվածություն ունեցող համացանցային կայքերը, պաշտոնական տեղեկագրերը, թերթերը, ամսագրերը և այլ տպագիր նյութեր, ուր զետեղված են լինում ընդհանուր տնտեսության, այդ թվում՝ անշարժ գույքի շուկայի վերաբերյալ այնպիսի տվյալներ, ինչպիսիք են բանկային տոկոսադրույքները, գնողունակության, շինարարական ծախսերի ցուցանիշները, ֆինանսական միջոցների մատչելիությունը, արտարժույթի փոխարժեքը, անշարժ գույքի շուկայական գների մակարդակը և փոփոխման գործընթացը, պետական գրանցում ստացած առք ու վաճառքի, վարձակալության, վաճառքի առաջարկների վերաբերյալ տեղեկությունները և այլն:

Հարկ ենք համարում նշել, որ անշարժ գույքի շուկայում տեղեկատվության աղբյուրները մասամբ սահմանափակ են, իսկ երբեմն էլ՝ անհասանելի շուկայի մասնակիցներին: Որոշ դեպքերում դիտարկվող անշարժ գույքի օբյեկտի համադրման համար անհրաժեշտ տվյալների քանակը, կախված տեղադրությունից, տեղեկատվության աղբյուրներից, խիստ սակավաթիվ է, ուստի անհրաժեշտություն է առաջանում ընդլայնել ուսումնասիրվող տարածաշրջանի սահմանները՝ հենվելով դիտարկվող տարածաշրջանին հարող շրջանի առկա տվյալների վրա կամ օգտվելով նմանատիպ անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրներից:

Տեղեկատվության աղբյուր է համարվում նաև ՀՀ ԿԱ ԿՊԿ-ի «Տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ը¹: Սակայն տրամադրվող տվյալների ոչ լիարժեք լինելը և տրամադրվող տվյալների դիմաց 2012թ. հունվարից վճարների չափի ավելացումը բերել է տվյալներից օգտվողների քանակի նվազման:

Տեղեկատվության աղբյուրների թվում են նաև անշարժ գույքի ռիելտորական գործունեությամբ զբաղվող մի շարք խոշոր կազմակերպությունների համացանցային կայքերը²: Հետևաբար՝ երբեմն միևնույն անշարժ գույքի վերաբերյալ տեղեկությունը տարբեր կայքերում կրկնվում է, երբեմն էլ տարբերվում: Այն հետևանք է ռիելտորական գործունեությամբ զբաղվող ընկերությունների փոխադարձ համագործակցության պակասի, կամ ճիշտ կլինի ասել՝ բացակայության:

Մեր կարծիքով առավել նպատակահարմար կլինի անշարժ գույքի շուկայի ակտիվ մասնակիցների միավորումը մեկ ընդհանուր միության մեջ՝ ստեղծելով էլեկտրոնային տեղեկատվական բազա, սահմանելով տեղեկատվության տրամադրման վճար կամ բազայից

¹ Տես՝ http://cadastre.am/page/texekatvutyan_tramadrum-կայքը:

² Տես՝ http://am.myrealty.am/Real_Estate_Agencies-կայքը:

օգտվողների անդամավճար: Նման տեղեկատվական բազայում ներառված պետք է լինեն միության մեջ ընդգրկված բոլոր ռիելթորական ընկերությունների կողմից փաստացի իրականացված անշարժ գույքի առք ու վաճառքի և վարձակալության գործարքների պայմանների, ինչպես նաև վաճառքի և վարձակալության առաջարկների վերաբերյալ տվյալները: Նման հավաստի տեղեկատվական բազայի առկայությունը հնարավորություն կտա իրականացնել անշարժ գույքի շուկայի մշտադիտարկում, ճշտել շուկայում առաջարկի և պահանջարկի մակարդակը, պատկերացում կազմել շուկայում գների մակարդակի, դրա գործընթացի վերաբերյալ և այլն: Որի միջոցով հնարավոր կլինի կենտրոնացնել ոչ միայն անշարժ գույքի շուկայի վերաբերյալ հնարավորին չափ ամբողջական տեղեկատվությունը, այլ նաև լուծել մեկ կարևոր խնդիր. տվյալների հավաքագրման և պահպանման ստանդարտացումը: Որն էլ իր հերթին ինքնաբերաբար կբերի գործարքների վերաբերյալ տեղեկատվության քանակական ու որակական բարելավմանը, ինչպես նաև բաժրորակ վերլուծությունների իրականացմանը: Հետևաբար՝ հավաքագրված տեղեկությունը համակարգչային բազայում հնարավոր կլինի խմբավորել որոշակի օրինաչափությամբ՝ ըստ տարածաշրջանի, ժամանակաշրջանի, գործարքի տեսակի, գույքի նպատակային նշանակության, գործառական օգտագործման և այլն:

Այսպիսով նշենք, որ ծրագրային փաթեթի ընտրությունը համապատասխան կազմակերպության իրավունքն է, սակայն արդեն մշակված տեղեկատվությունը, որպես վերջնական ապրանք, պետք է ունենա միասնական տեսք:

ՀԵՌՈՒՄՏԱԼԻՔՆԵՐՈՎ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՏԵՍԱՅՈՒՈՎԱԿՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ

Թումանյան Գայանե

*ԵՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ, հայցորդ
Գիտական ղեկավար՝ պրոֆ. Մ. Սահակյան*

Հոդվածում ներկայացված են հեռուստաալիքների միջև գովազդային տեսահոլովակների բաշխման խնդրի երեք փոխադարձ մոդելներ և դրանց գործնական օրինակների լուծումները:

Տեսահոլովակների բաշխման խնդրների դրվածքը:

Խնդիր 1¹: Ընկերությունը ցանկանում է m տարբեր հեռուստաալիքների ($h/w_i \leftrightarrow i, i = 1, 2, \dots, m$) միջոցով գովազդել իր արտադրանքը և ստանալ առավելագույն համախառն վարկանիշի աստիճան՝ միաժամանակ ապահովելով

- 1) գովազդման հատկացված բյուջեի վրա դրված սահմանափակումը,
- 2) որոշակի հավելյալ եկամուտ,
- 3) գովազդման համար նախատեսված տեսահոլովակների որոշակի քանակ:

Խնդիր 1-ի փոխադարձ խնդիր 2:

Խնդիր 1-ին բավարարող պայմանների առկայությամբ գտնել գովազդման բյուջեի նվազագույն արժեքը պայմանով, որ

- 1) համախառն վարկանիշի աստիճանը լինի առնվազն 300^2
- 2) որոշակի հավելյալ եկամուտ,
- 3) գովազդման համար նախատեսված տեսահոլովակների որոշակի քանակ:

Խնդիր 1-ի փոխադարձ խնդիր 3:

Խնդիր 1-ին բավարարող պայմանների առկայությամբ ստանալ առավելագույն հավելյալ եկամուտ պայմանով, որ բավարարվեն

- 1) գովազդման հատկացված բյուջեի վրա դրված սահմանափակումը
- 2) առնվազն 300 միավոր վարկանիշի աստիճան,
- 3) որոշակի տեսահոլովակների քանակ:

¹ Մ.Սահակյան, Գ.Թումանյան Հեռուստատեսային գովազդարշավի պլանավորում և արդյունավետության

² <http://imcarmenia.blogspot.com>

Հեռուստաալիքների /i=1,2,...,m/ սկզբնական տվյալները

$\bar{U} \bar{B}^3 \bar{Y}^3 \bar{I} \gg \bar{Y} \bar{U} \bar{A}$

q_i - եթերի տվյալ ժամանակահատվածի հեռուստաալիքի վարկանիշը

d_i - գովազդի մեկ թույլի արժեքը / դրամ/

r_i - գովազդման մեկ թույլից ակնկալվող եկամուտը /դրամ/

C - գովազդի ընդհանուր բյուջեն /դրամ/

N - գովազդման տեսահոլովակների /սփոթերի/ ընդհանուր քանակը

R - ակնկալվող եկամուտ/դրամ/

t – մեկ սփոթի տևողությունը արտահայտված վայրկյաններով

Խնդրի փոփոխականներն են. յուրաքանչյուր հ/ա-ին տրամադրված սփոթերի քանակը՝ n_i ($i=1,2,...,m$):

Տեսահոլովակների բաշխման խնդիրների ամբողջաթիվ գծային ծրագրման մոդելներ

Մոդել 1: Նպատակային ֆունկցիա՝ ընտրված նպատակային լսարանի համախառն վարկանիշի մաքսիմացում

$$GRPs = \sum_{i=1}^m q_i \rightarrow \max \quad (1)$$

Հետևյալ սահմանափակումների համակարգի առկայությամբ.

սահմանափակում սփոթերի ընդհանուր քանակի վրա

$$\sum_{i=1}^m n_i = N \quad (2)$$

սահմանափակում գովազդման բյուջեի վրա՝

$$\sum_{i=1}^m d_i \cdot n_i \leq C \quad (3)$$

սահմանափակում ակնկալվող եկամուտի վրա՝

$$\sum_{i=1}^m r_i \cdot n_i \geq R \quad (4)$$

սահմանափակումներ փոփախականների մշանի վրա՝

$$n_i \geq 0, \text{ ամբողջ թվեր են } (i=1,2,...,m): \quad (5)$$

Քանի որ գովազդի գները արտահայտված են 1թույլի արժեքով, ապա (3)-րդ և (4)-րդ սահմանափակումներում սփոթերի քանակը վերածված է թույլի՝ $n_i \cdot t$ / (1թույլ) արտահայտված վարկյանով $= n_i \cdot \frac{t}{60}$: t - ն բաժանում ենք 60-ի, բազմապատկում համապատասխան սփոթերի քանակով և ստանում ընդհանուր գովազդման տևողությունը թույլով:

Լուծելով (1) - (5) խնդիրը կստանանք սփոթերի այնպիսի ($n_1, n_2, ..., n_m$) բաշխում ըստ հ/ա-րի, որի դեպքում GRPs-ը առավելագույնն է:

Մոդել 2 (Փոխադարձ խնդիր): Նպատակային ֆունկցիա՝ բյուջեի մվազեցում՝

$$\sum_{i=1} d_{i,i} * /60 \rightarrow \min \quad (6)$$

Յետևյալ սահմանափակումների համակարգի առկայությամբ.

$$GRPs = \sum_{i=1} q_{i,i} \geq 300 \quad (7)$$

սահմանափակում սփռքերի ընդհանուր քանակի վրա`

$$\sum_{i=1} i \geq N \quad (8)$$

սահմանափակում ակնկալվող եկամուտի վրա`

$$\sum_{i=1} r_{i,i} * /60 \geq R \quad (9)$$

սահմանափակումներ փոփոխականների նշանի վրա`

$$n_i \geq 0, \text{ ամբողջ թվեր են } (i=1,2,\dots,m): \quad (10)$$

Մոդել 3: Նպատակային ֆունկցիա` ակնկալվող եկամտի մաքսիմացում

$$\sum_{i=1} r_{i,i} * /60 \rightarrow \max \quad (11)$$

Յետևյալ սահմանափակումների համակարգի առկայությամբ.

$$GRPs = \sum_{i=1} q_{i,i} \geq 300 \quad (12)$$

սահմանափակում գովազդման բյուջեի վրա`

$$\sum_{i=1} d_{i,i} * /60 \leq C \quad (13)$$

սահմանափակումներ փոփոխականների նշանի վրա`

$$n_i \geq 0, \text{ ամբողջ թվեր են } (i=1,2,\dots,m): \quad (14)$$

$$n_i \geq 0, \text{ ամբողջ թվեր են } (i=1,2,\dots,m): \quad (15)$$

Գործնական օրինակների լուծումներ¹

Սկզբնական տվյալներ

Ընկերությունը արտադրանքը գովազդելու համար դիմել է երկու հեռուստաալիքների: Խնդրի լուծման համար անհրաժեշտ տվյալները բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

1	Գովազդի մոդել 1-ի գործակիցների բովանդակությունը	h/w 1	h/w 2
		Գործ. արժեքը	Գործ. արժեքը
2	18:00 - 24:00 եթերաժամի հեռուստաալիքի վարկանիշը	$q_1=7.4$	$q_2 = 0.5$
3	գովազդման 1րոպ. արժեքը` d, /դրամ/	$d_1=120000$	$d_2=24000$
4	1 րոպ. ակնկալվող եկամուտը` r /դրամ/	$r_1=200000$	$r_2= 60000$

¹ Lek a Sandoz Company:

5	գովազդման բյուջեն՝ C, /դրամ/	5100000
6	գովազդման սփոթերի ընդհանուր քանակ՝ N, /րոպե/	110
7	ակնկալվող եկամուտը՝ R, /ՀՀ դրամ/	9500000
8	Գովազդվող սփոթի տևողությունը /վայրկյան/	t = 60

Սույն աշխատանքի ծավալի սահմանափակումը թույլ չի տալիս ներկայացնել մոդելավորման արդյուքների ամբողջ փաթեթը, որը մենք կներկայացնենք զեկուցման ժամանակ: Մենք կքննարկենք ընդամենը երեք դիտարկում: Ստորև կբերենք միայն վերը դիտարկվող խնդիրների լուծումները առանց մեկնաբանումների:

Խնդիր 1: Լուծենք (1)-(5) խնդիրը այն պայմանով, որ ապահովենք առավելագույն համախառն վարկանիշ՝ GRPs: Արդյունքում ստանում ենք. յուրաքանչյուր հեռուստաալիքի սփոթերի օպտիմալ քանակը՝ $n_1 = 25$, $n_2 = 85$; GRPs = 227.5, իսկ բյուջեն կազմում է 5040000 դրամ՝ պահանջված բյուջեից 60000 ցածր:

Խնդիր 2ա: Լուծենք (6)-(10) խնդիրը ստանում ենք՝ $n_1 = 36$, $n_2 = 74$; GRPs = 303.4, բյուջեն՝ 6096000, $R = 11640000$: Այսինքն, եթե ընկերությունը՝ իր ռազմավարության շրջանակներում, պարտադիր պայման է համարում նշված սահմանափակումների պահպանումը, ապա պետք է ավելացնի բյուջեն 996000 դրամով, առնվազն 300 GRPs հավաքելու համար: Հաշվարկները ցույց են տալիս, որ ավելի ցածր բյուջե կարող ենք ստանալ, եթե անտեսենք սպոտերի ընդհանուր քանակի սահմանափակումը:

Խնդիր 2բ: Լուծենք (6, 7, 9, 10) խնդիրը: Լավագույն լուծումը ստացվում է՝ $n_1 = 39$, $n_2 = 29$;

GRPs = 303.1 բյուջեն՝ 5376000, $R = 9540000$: Այսպիսով ընկերությունը ավելացնելով ընդամենը 276000 կարող է ստանալ 303.1 GRPs: Առաջին դեպքում հավելյալ եկամուտը 2140000-ով ավելի է, քան 9500000-ն է: Եվ չնայած, այս դեպքում բյուջեն ավելացվում է 996000-ով, այնուհանդերձ հավելյալ եկամուտը ծածկում է այդ ծախսը, ինչը չի դիտվում երկրորդ տարբերակում, երբ հավելյալ եկամուտը ընդամենը 40000-ով է ավելի:

Խնդիր 3ա: Լուծենք (11 -15) խնդիրը: Նշված սահմանափակումների դեպքում խնդիրը լուծում չունի:

Լուծում ստանալու տարբերակներից մեկը բյուջեի մեծացումն է: Լուծում կստացվի եթե բյուջեն լինի առնվազն 6096000, որը համապատասխանում է խնդիր 1. 2ա-ի լուծմանը:

Բյուջեի սահմանափակումը պահպանելով՝ հնարավորինս առավելագույն հավելյալ եկամուտ կստացվի, եթե անտեսենք(14) սահմանափակումը:

Խնդիր 3բ: Լուծենք (11 -13, 15) խնդիրը: Այս դեպքում կստանանք՝ $n_1 = 40$, $n_2 = 12$; $R = 8720000$:

GRPs = 302, բյուջեն = 5088000: Ստացվում է ակնկալվող եկամուտը կստացվի 8720000 դրամ, ամեն դեպքում ավելի ցածր, քան ի սկզբանե նախատեսված էր:

Կարող ենք եզրակացնել, որ խնդիր 1.1–ը արդյունավետ է այնքանով, որ պահպանվում են բոլոր սկզբնական սահմանափակումները, սակայն այս դեպքում GRPs-ը փոքր է 300-ից: Եվ եթե ընկերությունը այնուամենայնիվ ցանկանում է, որ GRPs լինի 300-ից մեծ, և ունի հնարավորություն ավելացնել բյուջեն, ապա ավելի արդյունավետ տարբերակը կլինի խնդիր 1.2ա, որտեղ չնայած բյուջեն բավականին մեծ է սկզբնականից, սակայն հավելյալ եկամուտը ծածկում է այդ ծախսերը, ինչպես նաև այս տարբերակը նպատակահարմար է նաև հավելյալ եկամտի մաքսիմացման տեսանկյունից:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Իսահակյան Ռազմիկ

*ԵՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ, ասպիրանտ
Գիտական դեկանար՝ ԳԱՍ ԹՂԹ. անդամ Գ. Ղարիբյան*

Մարդկային կապիտալի տեսությունը՝ որպես հետազոտման ինքնուրույն ոլորտ, ձևավորվեց XX դ-ի 60 ական թվականներին ամերիկացի տնտեսագետներ Թ. Շուլցի և Յ. Բեքերի կողմից: Մարդկային կապիտալը արդյունք է այն ներդրումների, որ ընտանիքը, հասարակությունը և ձեռնարկությունները կատարում են մարդու առողջության պահպանման, կրթության և աշխատուժի որակավորման բարձրացման մեջ: Ընդգծվեց, որ մարդկային կապիտալը ավելի արժեքավոր է, քան ֆիզիկական, բնական և կապիտալային ռեսուրսները:

Ամերիկացի տնտեսագետ Զ.Գրեյսանը նշել է, որ մարդկային կապիտալը «Ավելի արժեքավոր ռեսուրս է, քան բնական ռեսուրսները կամ կուտակված հարստությունը՝ հենց մարդկային կապիտալն է և ոչ թե գործարանները, սարքավորումները և արտադրական պաշարները արդյունավետության և տնտեսական աճի, մրցակցության անկյունաքարը»¹:

Մարդկային կապիտալը կապիտալի մյուս տեսակներից տարբերվում է նաև նրանով, որ այն իր կառուցվածքով և ֆունկցիոնալ դրսևորումներով ամենաբարդ կապիտալն է: Մարդկային կապիտալի կառուցվածքում որակավորման չափանիշներն են մարդու առողջությունը և վերարտադրությունը, կյանքի տևողությունը, կրթությունը և գիտելիքները, աշխատանքային փորձը և հմտությունը, ձեռնարկատիրական ունակությունները, մշակույթը, բարոյականությունը և կուլտուրան:

Մարդկային կապիտալի նշված տեսակներից ելակետայինը և հիմնավորն անհատական մարդկային կապիտալն է: Այն դրսևորվում և կայանում է հասարակության սոցիալ-տնտեսական բջիջը ներկայացնող ընտանիքում կամ տնային տնտեսությունում: Երկրորդ ձեռնարկության մարդկային կապիտալն է, որը դրսևորվում է ձեռնարկության արտադրական գործունեության, մարդու հմտության բարձրացման և մասնագիտության կատարելագործման, արտադրության մրցունակության ու արդյունավետության բարձրացման առնչություններում: Երրորդը հասարակական կամ

¹ Грейсон Д.К., О’Делл К. Американский менеджмент на пороге XXI века м. экономика 1991 стр. 196, 275

ազգային մարդկային կապիտալն է: Դա, այլ կերպ ասած, մարդկային կապիտալ է հասարակության մակրոտնտեսական մակարդակում, որը ներկայացնում է ինչպես նրա քանակական բնութագրիչները, ասենք երկրի բնակչության թվաքանակը՝ իր բազմազան դրսևորումներով, այնպես էլ նրա որակական զարգացումները:

Մարդկային կապիտալը իր բարդ դրսևորումներում և զարգացումներում ենթարկվում է քանակական և որակական փոփոխությունների, քանակական և որակական զարգացումների: Քանակական զարգացումները ամենից առաջ արդյունք են առողջական մարդկային կապիտալի զարգացման, ընդ որում առողջական մարդկային կապիտալի հիմքը ժառանգականությունն է, իսկ հիմնական գործոնը այդ ոլորտում արվող ներդրումներն են: Դեռևս իր ժամանակին Ալ. Մարշալը գրել է. «Բնակչության ուժն ու առողջությունը արտադրողականության հիմքն է, որից կախված է նյութական հարստության ստեղծումը, երբ իր հերթին նյութական հարստությունն է օգտագործվում խելամիտ, ապա նրա գլխավոր նշանակությունն այն է, որ վերջինս ավելացնում է մարդկային ցեղի ուժն ու առողջությունը՝ ֆիզիկական, մտային և բարոյական»¹:

Մարդկային կապիտալն իր քանակական բնութագրում դրսևորվում է բնակչության թվաքանակով և դրա փոփոխություններով: Այդպես, ըստ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի նախնական արդյունքների՝ բնակչության թվաքանակի փոփոխությունները ՀՀ-ում ունեցել են հետևյալ պատկերը:

Աղյուսակ 1. ՀՀ մշտական բնակչության քանակը ըստ 1926-2011թթ. մարդահամարների²

Տարիներ	Ամբողջ բնակչությունը (հազար մարդ)	Այդ թվում			
		Քաղաքային		Գյուղական	
		Հազար մարդ	%	Հազար մարդ	%
1926թ.	881.3	167.1	19	714.2	81
1939թ.	1282.3	366.4	29	915.9	71
1959թ.	1763.0	881.8	51	881.2	49
1970թ.	2491.9	1481.5	60	1010.4	40
1979թ.	3030.7	1992.5	66	1038.2	34
1989թ.	3448.6	2368.5	69	1080.1	31
2001թ.	3213.0	2066.1	65	1146.9	35
2011թ.	3018.9	1911.3	63.3	1107.6	36.7


¹ Маршал А. Принципы экономической науки, 1933, стр. 268

² Տես Հայաստանի Հանրապետության 2011 թ. մարդահամարի նախնական արդյունքները Երևան 2013, էջ 6

Աղյուսակ 1-ի տվյալներից հետևում է, որ Հայաստանում բնակչության աճի բարձր մակարդակին է հասել 1989թ. (շուրջ 3.5 միլիոն) այնուհետև 1988թ. Սպիտակի երկրաշարժից սկսած անընդհատ նվազել է և այսօր շուրջ 3 միլիոն է:

Մարդկային կապիտալի որակավորման զարգացումները կապված են կրթական կապիտալի ներդրումների և դրանց արդյունավետ օգտագործման հետ: Մարդկային կապիտալում կրթական ներդրումները կարելի է ներկայացնել հետևյալ կառուցվածքով.

Կրթական մարդկային կապիտալում ներդրումների կառուցվածքի մոտավոր մոդելը



Մարդկային կապիտալի որակական վերարտադրության ընդհանուր համակարգում կարևոր տեղ ունի աշխատունակ բնակչության զբաղվածության, ըստ մասնագիտությամբ աշխատելու և գործազրկության ու թերզբաղվածության առնչությունները: Կրթությունը, գիտելիքը մարդկային կապիտալի անբաժանելի ատրիբուտներն են դառնում միայն մասնագիտությամբ աշխատելու

պրոցեսում և դրա շնորհիվ: Եթե ֆիզիկական կապիտալը, օրինակ՝ հաստոցները ժամանակավոր անգործ վիճակում կարելի է յուզել և պահպանել դրանց սպառողական արժեքը, ապա նույնը չի կարելի ասել մարդկային կապիտալի մասին: Դեռևս Կ.Մարքսը «Կապիտալ» աշխատությունում գրել է. «Մարդ-մեքենաներն այն հատկությունն ունեն, որ անգործ վիճակում ժանգոտվում են, որքան էլ դուք նրանց յուզ քսեք կամ շփեք»¹: Այժմ Հայաստանի Հանրապետությունում առկա է շուրջ 200 հազար գործազուկ, իսկ աշխատողների մի զգալի մասը իրենց մասնագիտությամբ չեն աշխատում:

¹ Կ.Մարքս «Կապիտալ» հտ. 1, 1933, էջ 136-137

ԱԿՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊԱՅՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄՆ ԱՆՀԱՄԱՁԱԾ ՏԵԴԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Կարապետյան Լուսինե

*ԵՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ, մագ. 1-ին կուրս
Գիտական դեկանատի տ.գ.թ. Բ. Ասատրյան*

Աշխատանքում առաջարկվել է ավտոտրանսպորտային միջոցների շահագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (այսուհետ նաև ԱՊՊԱ) համակարգի ռիսկերի գնահատման և ապահովագրավճարների հաշվարկման այլընտրանքային մոտեցում՝ հիմնված ապահովագիրների ունեցած ապահովագրական դեպքերի քանակի, այդ դեպքերի արդյունքում պատճառված վնասների մեծության և ապահովագիրներին բնութագրող ապրիորային տեղեկատվության վրա: Առաջարկված մոտեցման շրջանակներում նախևառաջ հաշվի է առնվել ՀՀ ԱՊՊԱ շուկայում անհամաչափ տեղեկատվության խնդրի առկայությունը, քանի որ ԱՊՊԱ համակարգի ռիսկերի գնահատման և ապահովագրավճարների հաշվարկման մոտեցումները էապես տարբերվում են կախված ԱՊՊԱ շուկայում անհամաչափ տեղեկատվության առկայությամբ կամ բացակայությամբ: ՀՀ ԱՊՊԱ շուկայում անհամաչափ տեղեկատվության առկայությունն ուսումնասիրելու համար կիրառվել է «դրական կորելացիայի թեստը»¹: Ապահովագրական դեպքերի քանակը մոդելավորելու համար օգտագործվել է բացասական-բինոմական ռեգրեսիոն վերլուծությունը: Ապահովագրական դեպքերի արդյունքում ծագած վնասների մեծությունը մոդելավորվել է ընդհանրացված գծային մոդելներով՝ ռեգրեսիոն վերլուծության միջոցով:

Ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրության հետ կապված ռիսկերի գնահատումը պայմանավորված է ճանապարհատրանսպորտային երթևեկության հետ առնչվող բազմաթիվ գործոններիսերտ փոխներգործությամբ (ճանապարհների որակ, մեքենաների տեխնիկական վիճակ, երթևեկության մասնակիցների վարվելակերպ և այլն): Այդ ռիսկերի ճիշտ գնահատման հիմնական նպատակն է «արդար» ապահովագրավճարների հաշվարկը, դրանց դինամիկայի մոդելավորումն ու կանխատեսումը՝ կախված տարբեր գործոններից, ինչն էլ իր հերթին պայմանավորում է

¹ Chiappori, P., and B. Salanie, 2000, Testing for Asymmetric Information in Insurance Markets, Journal of Political Economy, 108: 56-78

արդյունավետ սակագնային քաղաքականության իրականացումը և ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունությունը:

Աշխարհի տարբեր երկրներում ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրությամբ զբաղվող ընկերությունները կիրառում են ռիսկերի գնահատման և դասակարգման Բոնուս-Մալուս համակարգեր¹: Բոնուս-Մալուս համակարգը «տուգանում» է այն ապահովադիրներին, ովքեր ապահովագրական պոլիսի գործողության ընթացքում ունեցել են մեկ և ավել ապահովագրական դեպքեր, սահմանելով հավելյալ ապահովագրավճարներ («մալուս»-ներ) յուրաքանչյուր ապահովագրական դեպքի համար և «պարգևատրում» է այն ապահովադիրներին, ովքեր ապահովագրական պոլիսի գործողության ընթացքում ապահովագրական դեպքեր չեն ունեցել՝ նվազեցնելով նրանցից գանձվող ապահովագրավճաները (տրամադրելով «բոնուսներ»): Այս կերպ Բոնուս-Մալուս համակարգերը խրախուսում են ապահովադիրներին առավել կարգապահ լինել երթևեկության ժամանակ և գնահատում են յուրաքանչյուր ապահովադիրի՝ ապահովագրական դեպք ունենալու ռիսկը:

Բոնուս-Մալուս համակարգերի արդյունավետությունը կարելի է գնահատել Պարրետո օպիտմումի սկզբունքով՝ իհարկե, յուրաքանչյուր մասնակցի համար նախօրոք որոշելով օրենսդրական և տնտեսական գործընթացներով պայմանավորված սահմանափակումները:

ԲՄ համակարգերը կարելի է բաժանել երկու խմբի.

- համակարգեր, որոնք հիմնված են միայն ապոստերիորային դասակարգման չափանիշների վրա,

- համակարգեր, որոնք հիմնված են միաժամանակ և՛ ապրիորային, և՛ ապոստերիորային դասակարգման չափանիշների վրա:

Որպես ապոստերիորային դասակարգման չափանիշներ կարելի է դիտարկել ապահովադիրների ունեցած ապահովագրական դեպքերի քանակը և այդ դեպքերից յուրաքանչյուրի արդյունքում պատճառված վնասների մեծությունը: Որպես ապրիորային դասակարգման չափանիշներ ընտրվում են այնպիսի մեծություններ, որոնց արժեքներն ապահովագրողին հայտնի են դառնում ապահովադիրի կողմից ապահովագրական պայմանագիրը ձեռք բերելու պահին: Որպես այդպիսին կարող են դիտարկվել ապահովադիրի անհատական և նրա մեքենայի տեխնիկական տվյալները:

Հարկ է նշել, որ ներկայումս ՀՀ-ում ներդրվել և գործում է միայն ապոստերիորային դասակարգման չափանիշների վրա հիմնված

¹ Lemaire J., Hongmin Z. A Comparative Analysis of 30 Bonus-Malus Systems. Wharton School, University of Pennsylvania, 1994

համակարգ¹: Այսինքն, այս համակարգի դեպքում ապահովագրական սակագները սահմանվում են՝ հաշվի առնելով ապահովադիրների՝ որոշակի ժամանակահատվածում ունեցած ապահովագրական պատահարների քանակը: Սակայն այս մոտեցումը թերի է և չի ապահովում ապահովագրավճարների արդարացի բաշխումը, քանի որ այլ հավասար պայմաններում միևնույն քանակով, սակայն վնասի տարբեր մեծությամբ ունեցող ապահովագրական պատահարների դեպքում ապահովադիրներից գանձվում են միևնույն ապահովագրավճարները:

ՀՀ ԱՊՊԱ շուկայում անհամաչափ տեղեկատվության առկայությունը պարզելու համար գնահատվել են երկու պրոբիթ մոդելներ՝ մեկը ապահովագրական ծածկույթի ընտրության համար (C_i) և մյուսը՝ ապահովագրական պատահարների տեղի ունենալու համար (A_i): Գնահատվող հավասարումներն ունեն հետևյալ տեսքը.

$$C_i = \begin{cases} 1, & \text{եթե } C_i^* = \beta X_i + \varepsilon_i > 0 \\ 0, & \text{հակառակ դեպքում} \end{cases}$$

$$(1a) A_i = \begin{cases} 1, & \text{եթե } A_i^* = \gamma X_i + \eta_i > 0 \\ 0, & \text{հակառակ դեպքում} \end{cases} \quad (1բ)$$

Համաչափ տեղեկատվության առկայության գրոյական վարկածի պայմաններում՝ վերոնշյալ երկու հավասարումների մնացորդները՝ ε_i -ը և η_i -ն, պետք միմյանց հետ կորելացված չլինեն: Հակառակ դեպքում նրանց միջև վիճակագրորեն նշանակալի դրական կորելացիայի առկայությունը ենթադրում է գրոյական վարկածի մերժում: Մոդելավորման արդյունքում հաստատվել է շուկայում անհամաչափ տեղեկատվության առկայության վարկածը:

Առաջարկված մոտեցման շրջանակներում ապահովադիրներից գանձվող ապահովագրավճարները դիտարկվել են որպես ֆունկցիա՝ կախված հետևյալ գործոններից.

- ժամանակի միավորների քանակից (սովորաբար տարիների քանակը), որոնց ընթացքում ապահովադիրը գտնվում է ապահովագրական պորտֆելում,
- ապահովադիրի ունեցած ապահովագրական դեպքերի քանակից,
- ապահովագրական դեպքերի արդյունքում պատճառված վնասի մեծությունից,
- վիճակագրորեն նշանակալի ապրիորային դասակարգման տարբեր ցուցանիշներից:

Ապահովագրական դեպքերի քանակի մոդելավորումը

¹Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի ԻԱՄ խորհրդի 2012 թվականի թիվ 19-Լ որոշում:

Ապահովագրական դեպքերի քանակը մոդելավորելու համար օգտագործվել է Ջ. Դիոննի և Ս. Վանասսի կողմից առաջարկված մոդելը^{1,2}, համաձայն որի՝

$$P(K_i^j = k) = \frac{\Gamma(k+a)}{k! \Gamma(a)} \left[\frac{\exp(c_i^j \beta^j)}{a} \right]^k \left[1 + \frac{\exp(c_i^j \beta^j)}{a} \right]^{-(k+a)}, \quad (1)$$

ինչը *Բացասական-Բինոմական* բաշխում է a և $\exp(c_i^j \beta^j)$ պարամետրերով, և որի համար՝

$$E(K_i^j) = \exp(c_i^j \beta^j) \text{ և } Var(K_i^j) = \exp(c_i^j \beta^j) \left[1 + \frac{\exp(c_i^j \beta^j)}{a} \right]$$

Վնասների մեծության մոդելավորումը

Ապահովագրական դեպքերի վնասները մոդելավորելու համար կիրառվել է հետևյալ մոդելը՝

$$P(X_{i,k}^j = x) = s \cdot \left[(s-1) \exp(d_i^j \gamma^j) \right]^s \cdot \left(x + (s-1) \exp(d_i^j \gamma^j) \right)^{s-1}, \quad (2)$$

որն էլ իր հերթին ունի **Պարրետտ** բաշխում՝ s և $(s-1) \exp(d_i^j \gamma^j)$ պարամետրերով:

Բայեսի թեորեմի կիրառման արդյունքում ստացվել է $t+1$ ժամանակահատվածում սպասվող վնասների միջին մեծության լավագույն գնահատականը՝ հետևյալ արտահայտությամբ.

$$\hat{y}_i^{t+1}(X_{i,1}, \dots, X_{i,K}; d_i^1, \dots, d_i^{t+1}) = \int_0^\infty y_i^{t+1}(X_i^{t+1}, w_i) f(y_i^{t+1} | d_i^1, \dots, d_i^{t+1}) dy_i^{t+1} = \frac{(s-1) \sum_{j=1}^t \exp(d_i^j \gamma^j) + \sum_{k=1}^K X_{i,k}}{s + K - 1}$$

Այսպիսով, վերջնական ապահովագրավճարները հաշվարկվել են՝ օգտագործելով ապահովագրավճարների հաշվարկման հետևյալ մոլտիպլիկատիվ բանաձևը.

$$P = \frac{1}{t} \sum_{j=1}^t \exp(c_i^j \beta^j) \left[\frac{a + \sum_{j=1}^t K_i^j}{a + t \exp(c_i^j \beta^j)} \right] ** \frac{(s-1) \sum_{j=1}^t \exp(d_i^j \gamma^j) + \sum_{k=1}^K X_{i,k}}{s + K - 1} \quad (3)$$

¹ Dionne G., Vanasse C. A generalization of actuarial automobile insurance rating models: the negative binomial distribution with a regression component, Astin Bulletin 19, 199-212, 1989.

² Picech L. The Merit-Rating Factor in a Multiplicating Rate-Making Model. Astin Colloquium, Cannes, (1994).

Մոդելավորման արդյունքները


(1) և (2) մոդելները գնահատվել են առավելագույն ճշմարտանմանության մեթոդով (Maximum Likelihood Method)՝ MatLab-2009b ծրագրային փաթեթի օգնությամբ: Մոդելների գնահատականների նշանակալիությունը ստուգելու համար կիրառվել է **Chi-square Goodness-of-fit** թեսթը: Եվ (1), և (2) մոդելները նշանակալի են եղել 95% վստահության տիրույթում: Ստորև ներկայացնում ենք մոդելավորման արդյունքները:

(1) մոդելի գնահատման արդյունքում a և τ պարամետրերի համար ստացվել են $a = 0.1398$ և $\tau = 3.048$ արժեքները:

Աղյուսակ 1. Ապահովագրական դեպքերի մոդելավորման արդյունքները

Distribution: Negative Binomial		
Log likelihood: -528.522		
Domain: $0 \leq y < \text{Inf}$		
Mean: 0.0376838		
Variance: 0.0394213		
Parameter	Estimate	Std. Err.
r	0.1398	0.682876
p	3.0480	0.035415
Chi-square	Statistic	Prob.
χ^2	= 6.74 df=2	0.003

Գծապատկեր 1. Ապահովագրական դեպքերի քանակի բաշխումը




(2) մոդելի գնահատման արդյունքում s և m պարամետրերի համար ստացվել են $s = 1.9860$ և $m = 548927$ արժեքները:

Աղյուսակ 2. Ապահովագրական վնասների մոդելավորման արդյունքները

Distribution: Pareto		
Log likelihood: -1730.8		
Domain: $-\text{Inf} < y < \text{Inf}$		
Mean: 885545		
Variance: $1.3594\text{e}+012$		
Parameter	Estimate	Std. Err.
k	1.9860	0.119363
sigma	548927	104362
Chi-square	Statistic	Prob.
χ^2	= 9.15	df=2 0.041

Գծապատկեր 2. Ապահովագրական վնասների բաշխումը



Այժմ արդեն մենք կարող ենք կառուցել ապահովագրավճարների մեծություններն արտացոլող ակտուարային աղյուսակները ցանկացած ապահովագրի համար: Օրինակ 250 000 ՀՀ դրամ վնասի մեծություն ունեցող ապահովագրի համար ապահովագրավճարների ակտուարային աղյուսակը կունենա հետևյալ տեսքը.

Աղյուսակ 3. Ապահովագրավճարները 250 000 ՀՀ դրամ վնասի համար

Տարի	Ապահովագրական դեպքերի քանակը					
<i>t</i>	<i>0</i>	<i>1</i>	<i>2</i>	<i>3</i>	<i>4</i>	<i>5</i>
0	25535					
1	19227	113270	141433	155465	163868	169463
2	15418	90832	113415	124667	131406	135893
3	12869	75813	94663	104054	109679	113424
4	11043	65056	81232	89291	94117	97331
5	9671	56973	71138	78196	82423	85237
6	8602	50676	63276	69554	73313	75817
7	7746	45633	56978	62631	66017	68271

Կառուցված ՔՄ համակարգի հատկությունները

- Համակարգն արդարացի է, քանի որ յուրաքանչյուր ապահովադիր վճարում է իր ապահովագրական դեպքերի հաճախությամբ և դեպքերի վնասների մեծությամբ համապատասխանող ապահովագրավճարներ:

- Ապահովագրական դեպքերի քանակների և վնասների գումարների ավելացմանը զուգահեռ ապահովագրավճարներն աճում են:

- Ապահովագրական դեպքերի բացակայությունն ուղեկցվում է ապահովագրավճարների նվազմամբ:

Փոքր վնասներ արձանագրած ապահովադիրները շահագրգռված չեն լինի ապահովագրողից թաքցնել ապահովագրական դեպք ունենալու փաստը, քանի որ այս դեպքում նրանք ստիպված չեն լինի վճարել նույն մեծությամբ ապահովագրավճար, ինչ-որ հաշվետու ժամանակահատվածում նույն քանակով, բայց շատ ավելի մեծ վնասի գումարներով ապահովագրական դեպքեր արձանագրած ապահովադիրները: Վերջինս շատ կարևոր է «բռնուսների նկատմամբ քաղցի» երևույթը մեղմելու տեսանկյունից:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Կարապետյան Կարինե

ՀԱԱՀ ասպիրանտ

Ոսկանյան Գոհար

ՀԱԱՀ ասպիրանտ

Գիտական ղեկավար՝ տ.գ.թ., դոց. Ա. Ոսկանյան

Գյուղատնտեսությունը հանդիսանում է տնտեսության ամենախոցելի ոլորտներից մեկը, ինչն էլ հիմնավորում է պետական կարգավորման անհրաժեշտությունը: Պետական կարգավորման տնտեսական մեթոդի բյուջետային կարգավորման տեսակներից է գյուղատնտեսության ապահովագրության աջակցությունը, ինչը կարևոր նշանակություն ունի ագրարային ոլորտի համակողմանի զարգացման համար:

Գյուղատնտեսության ապահովագրության պետական աջակցության ամենատարածված ձևը ապահովագրավճարների սուբսիդավորումն է, ինչը ՀՀ-ում կարող է հանդիսանալ գյուղատնտեսության կայուն զարգացման նախապայմաններից մեկը: Սուբսիդավորման չափը սահմանելու համար կարևոր է ապահովագրավճարի չափի ճիշտ որոշումը, ինչի համար անհրաժեշտ են երկարաժամկետ տվյալներ գյուղատնտեսության և եղանակային պայմանների վերաբերյալ: Պետական սուբսիդիաների չափերը պետք է լինեն հիմնավորված, որպեսզի չխախտվի շուկայի հավասարակշռվածությունը և այն «բեռ» չհանդիսանա պետության համար: Սուբսիդիաների չափերը տարբեր երկրներում տարբեր են և հիմնականում կախված են այն հանգամանքից, թե ինչ խնդիր է հետապնդում պետությունը (նպաստել գյուղատնտեսության որևէ ենթաճյուղի զարգացմանը, աջակցել ֆերմերների որոշակի խմբերի գործունեությանը և այլն): Օրինակ՝ Իտալիայում սուբսիդիա է տրամադրվում բազմակի ռիսկերից մշակաբույսերի ապահովագրության դեպքում, որը կազմում է ապահովագրավճարի 67%-ը, Իսպանիայում սուբսիդիան կազմում է ապահովագրավճարի 49%-ը, Ավստրալիայում՝ 46%-ը, Պորտուգալիայում՝ միջինը 55%-ը: Կիպրոսում 50%-ով սուբսիդավորվում են պարտադիր եղականով իրականացվող գյուղատնտեսության ապահովագրության պայմանագրերի բոլոր տեսակները:

Տարերային աղետներից տուժած գյուղացիական տնտեսություններին օգնելու նպատակով կիրառում են երկու

հիմնական գործիքներ՝ հետադետային օգնություններ և գյուղատնտեսության ապահովագրություն: Մի շարք երկրներում հետադետային օգնությունները տրամադրվում են այն դեպքում, երբ տվյալ ռիսկն ընդգրկած չէ գյուղատնտեսության ապահովագրության պայմանագրերում (Հունաստան, Իսպանիա, Ավստրալիա, Պորտուգալիա): Այն երկրներում, որտեղ զարգացած է գյուղատնտեսության ապահովագրության համակարգը, հետադետային օգնությունների ծավալն ավելի փոքր է, և՛ հակառակը: ԵՄ երկրներից ամենաշատ հետադետային օգնությունները տրամադրվել են Ֆրանսիայում, իսկ ամենաքիչը՝ Իսպանիայում, որն ունի բավականին զարգացած գյուղատնտեսության ապահովագրության շուկա: Ինչ վերաբերում է գյուղատնտեսության ապահովագրության գծով տրամադրված սուբսիդիաների ծավալներին՝ ապա նկատվում է հակառակ պատկերը. Իսպանիայում դրանք կազմում են տարեկան միջինը 230 մլն. եվրո, իսկ Ֆրանսիայում՝ ընդամենը 5 մլն. եվրո¹: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս երկու խումբ գործիքներից պետությունները ավելի մեծ տեղ են հատկացնում գյուղատնտեսության ապահովագրության համակարգին, որի դեպքում ռիսկը բաշխվում է գյուղացիական տնտեսությունների, ապահովագրական ընկերությունների և պետության միջև: Գոյություն ունեն գյուղատնտեսության ապահովագրության տարբեր մոդելներ, որոնցից ամենատարածվածը և ամենախիճ պատմություն ունեցողը անվանական ռիսկից ապահովագրությունն է: Այն իրականացվում է գրեթե բոլոր երկրներում, որտեղ գործում է գյուղատնտեսության ապահովագրության համակարգը: Ընդ որում, գյուղատնտեսության ապահովագրության համակարգը զարգացած է այն երկրներում, որտեղ պետական աջակցությունն ավելի մեծ է, ինչն արտահայտվում է հիմնականում ապահովագրավճարների սուբսիդավորման տեսքով: Շատ երկրներում (ԱՄՆ, Կանադա, ՌԴ, Իսպանիա և այլն) սուբսիդիաներ են տրամադրվում հիմնականում բազմակի ռիսկերից ապահովագրության դեպքում, իսկ ահա անվանական ռիսկից գյուղատնտեսության ապահովագրության ապահովագրավճարները գրեթե չեն սուբսիդավորվում: Պատճառն այն է, որ անվանական ռիսկից ապահովագրության պայմանագրերն ավելի էժան են և գյուղացիական տնտեսությունները կարողանում են վճարել ապահովագրավճարները, ինչը չի կարելի ասել բազմակի ռիսկերից ապահովագրության մասին: Առաձնացնում են սուբսիդիաների երկու տարատեսակ՝ շուկայի

¹ M. Bielza Diaz-Caneja, C.G.Conte, F.J. Gallego Pinilla, J.Stroblmair, R. Catenaro and C.Dittmann, Risk Management and Agricultural Insurance Schemes in Europe, 2009, p.12

զարգացմանը խթանող և սոցիալական բնույթի սուբսիդիաներ: Առաջինը նպաստում է շուկայական ենթակառուցվածքների զարգացմանը և մրցակցային ապահովագրական շուկաների ձևավորմանը: Այս սուբսիդիաները հիմնված են պետական ծառայությունների և տեխնիկական աջակցության վրա, որը նպաստում է ենթակառուցվածքների ձևավորմանը և մասնավոր ապահովագրական ընկերությունների ներգրավմանը: Երկրորդը տրամադրվում է գյուղացիական տնտեսությունների եկամուտների կայունացման և սոցիալական պաշտպանվածության ապահովման նպատակով:

Միջազգային վերաապահովագրական ընկերությունները խուսափում են վերաապահովագրության ընդունել գյուղատնտեսական ռիսկերը, ինչը բացատրվում է կորուստների անկանխատեսելի բնույթով և վնասների խոշոր ծավալներով: Այս դեպքում պետությունը կարող է հանդես գալ նաև որպես վերաապահովագրող: Օրինակ, Մեքսիկայում պետական վերաապահովագրական ընկերությունը՝ «Ագրոտեսենթսը», տրամադրում է վերաապահովագրական պաշտպանվածություն գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության դեպքում: Պետության այսպիսի մասնակցությունը նվազեցնում է ապահովագրավճարի չափը, այդ իսկ պատճառով այն գրավիչ է ապահովադիրների համար¹:

Կարևորելով պետական աջակցության դերը ապահովագրական համակարգի մեջ և գյուղատնտեսության կայուն զարգացման գործընթացում՝ խնդիր ենք դրել պարզել ՀՀ գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրման անհրաժեշտության, հնարավորությունների և այդ գործընթացում պետության մասնակցության վերաբերյալ գյուղացիական տնտեսությունների և ագրարային ոլորտի մասնագետների կարծիքը: Այդ նպատակով 2013թ.-ին ՀՀ 7 մարզերի 30 գյուղում անցկացրել ենք հարցում, որին մասնակցել է 200 գյուղացիական տնտեսություն, իսկ մասնագետների դիրքորոշումը պարզելու համար հարցում ենք անցկացրել ագրարային ոլորտի 60 մասնագետների միջև՝ գյուղատնտեսության նախարարության աշխատակիցներ, գիտական ոլորտի ներկայացուցիչներ (տնտեսագետներ, ագրոնոմներ և անասնաբուժության ոլորտի մասնագետներ), ասպիրանտներ և մագիստրանտներ, գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնի և գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների աշխատակիցներ, ՏԻՄ ներկայացուցիչներ:

¹ **Oliver Mahul, Charles J. Stutley**, Government Support to Agricultural Insurance, Challenges and options for developing countries, The World Bank, 2008, p.31

Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ մասնակից գյուղացիական տնտեսությունների 88%-ը կարևորում է ՀՀ գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրումը: Սակայն նրանցից միայն 78%-ն է պատրաստակամություն հայտնել ապահովագրելու սեփական տնտեսությունը, իսկ 22%-ը հրաժարվել: Վերջիններիս կողմից առաջ են քաշվել հետևյալ պատճառները.

- ֆինանսական միջոցների սղությունը,
- մասնավոր ապահովագրական ընկերությունների նկատմամբ անվստահությունը,
- ապահովագրական համակարգի անկատարությունը,
- առաջացած վնասների ոչ լիարժեք փոխհատուցման մտավախությունը,
- ապահովագրական համակարգի վերաբերյալ տեղեկատվության պակասը:

Հարցմանը մասնակցած գյուղացիական տնտեսությունների 63, իսկ մասնագետների 70%-ը գտնում են, որ գյուղացիական տնտեսությունների կողմից վճարվող ապահովագրավճարը պետք է սուբսիդավորվի: Կարևորելով համակարգի ներդրման անհրաժեշտությունը՝ հարցված գյուղացիական տնտեսությունների 11%-ը պատրաստակամություն են հայտնել ապահովագրավճարը ամբողջությամբ վճարել ինքնուրույն:

Բերքի և կենդանիների ապահովագրությունը կարևորել են գյուղացիական տնտեսությունների համապատասխանաբար 83 և 39%-ը, իսկ գյուղատնտեսական տեխնիկայի և ջերմոցների ապահովագրությունը՝ համապատասխանաբար 8 և 9%-ը՝ պատճառաբանելով տեխնիկայի հին և անսարք, իսկ ջերմոցների՝ ցածր ռիսկային լինելը: Մասնագետները նույնպես առավել անհրաժեշտ են համարել բերքի և կենդանիների ապահովագրությունը՝ համապատասխանաբար 92 և 64%-ը:

Հարցված գյուղացիական տնտեսությունների 60%-ը և ագրարային ոլորտի մասնագետների 71%-ը առաջնահերթ են համարում առաջարկված մշակաբույսերից (հացահատիկ, կարտոֆիլ, պտուղ, բանջարեղեն, խաղող) հացահատիկի ապահովագրությունը: Առաջարկված կենդանիներից (կով, խոզ, ոչխար, թռչուն) առաջնային է համարվել խոշոր եղջերավոր անասունների ապահովագրությունը (համապատասխանաբար 76 և 92%):

Բուսաբուծության ճյուղում որպես առավել հաճախ հանդիպող և մեծ կորուստների պատճառ հանդիսացող ռիսկ, գյուղացիական տնտեսությունները և ոլորտի մասնագետները առաջնահերթ են համարում կարկտահարությունը, իսկ անասնաբուծության ոլորտում՝ հիվանդությունները:

Այսպիսով, ներկայացված տվյալները թույլ են տալից հանգել այն եզրակացության, որ հարցմանը մասնակցած ՀՀ գյուղացիական տնտեսությունների և ագրարային ոլորտի մասնագետների ծանրակշիռ մասը գիտակցում են գյուղատնտեսության ապահովագրական համակարգի ներդրման անհրաժեշտությունը, ապահովագրավճարում պետության պարտադիր մասնակցությունը: Հարցվողների երկու խումբն էլ համակարծիք են, որ առաջնահերթ է բուսաբուծության ճյուղում կարկտահարության, իսկ անասնաբուծության ճյուղում հիվանդությունների ռիսկը:

Ուսումնասիրելով պետական աջակցությամբ գյուղատնտեսության ապահովագրության մի շարք երկրների փորձը, ինչպես նաև ամփոփուով մեր կողմից կատարված հարցումների արդյունքները՝ ՀՀ գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրման համար առաջարկում ենք.

1. աջակցել գյուղացիական տնտեսություններին, գյուղատնտեսության ապահովագրության համակարգի ներկայացուցիչներին և այլ շահագրգիռ անձանց ապահովագրական համակարգի վերաբերյալ տեղեկատվության և խորհրդատվության տրամադրմանը, մասնագետների որակավորման բարձրացմանն ու վերապատրաստմանը: Գործընթացին կարելի է մասնակից դարձնել գիտական կենտրոններին, ԲՈՒՀ-երին, առանձին մասնագետների, արտասահմանյան փորձագետների և այլն:
2. Ստեղծել գյուղատնտեսության ապահովագրական համակարգի ներդրման համար անհրաժեշտ տվյալների բազա, որը պետք է հիմք հանդիսանա գյուղատնտեսության ապահովագրության մի շարք ցուցանիշների հաշվարկման համար (ապահովագրական սակագին, ապահովագրավճար, ապահովագրական գումար և այլն):
3. Մշակել ՀՀ գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի աստիճանական ներդրման և կայուն զարգացման գործունե կառուցակարգեր, մասնավորապես, մշակել պետական աջակցությամբ գյուղատնտեսության ապահովագրության իրականացման կարգը, սահմանել գյուղատնտեսության ապահովագրության պայմանագրին ներկայացվող պահանջները, հստակեցնել ապահովագրության օբյեկտները և ռիսկերը, ինչպես նաև մշակել ագրոապահովագրողների միության գործունեության իրավական հիմքերը:

Վերը թվարկված միջոցառումների իրականացումը կնպաստի ՀՀ գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի աստիճանական ներդրմանը և հետագա զարգացմանը, ինչն էլ կհանգեցնի երկրի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԶՅ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐՈՒՄ

Համարաձևյան Արև

*ԵՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ, ասպիրանտ
Գիտական ղեկավար՝ տ.գ.դ., դոց. Ռ. Գևորգյան*

Կառուցվածքային գործիքները սկսել են կիրառվել հետխորհրդային երկրներում միայն վերջին տարիներին: Այսպես, ՌԴ ֆինանսական շուկայում առաջին կառուցվածքային գործիքները երևան եկան 2005 թվականին, և ներկայումս, չնայած մի շարք խոչընդոտներին, ֆինանսական շուկայի այդ սեգմենտը արագ զարգացում է ապրում:

Կառուցվածքային ֆինանսական ապրանքներին նվիրված գիտական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ հեղինակները տարբեր կերպ են մոտենում տվյալ ֆինանսական գործիքի էությանը: Կառուցվածքային ապրանքը (structured product) ներդրումային պորտֆել է՝ բաղկացած երկու մասից: Կապիտալի մի մասը (70-90% կամ ավելին) ներդրվում է նախապես հայտնի եկամտաբերությամբ ոչ ռիսկային կամ ցածր ռիսկայնությամբ ակտիվում (օրինակ՝ բանկային ավանդ, բարձր վարկանիշով արժեթղթեր և այլն): Մյուս մասը (10-30% կամ պակաս) ներդրվում է պոտենցիալ բարձր եկամտաբերությամբ ռիսկային ակտիվում (բաժնետոմսեր, օպցիոններ, ֆյուչերսներ):

Հայաստանի Հանրապետությունում ոչ բոլոր առևտրային բանկերն են առաջարկում իրենց հաճախորդներին կառուցվածքային ապրանքներ: Պատճառը բանկի հաճախորդների՝ տվյալ գործիքների նկատմամբ ոչ բավարար պահանջարկն է՝ պայմանավորված.

- օրենսդրության անկատարությամբ,
- գործիքի էությունը հասկանալու բարդությամբ,
- կառուցվածքային գործիքների ստեղծման բարդությամբ

(ածանցյալ ֆինանսական գործիքների ոչ բավարար զարգացման մակարդակով, կառուցվածքային գործիքների և դերիվատիվների ոլորտում մասնագետների անբավարար քանակով, առանձին հաճախորդների փոքրածավալ ներդրումների համար անհատական կառուցվածքային գործիքների թողարկման դժվարություններով):

Կառուցվածքային գործիքների հանդեպ պահանջարկը կարող է ի հայտ գալ, առաջին հերթին, ոչ թե բանկի անմիջական հաճախորդների, այլ ապահովագրական ընկերությունների և կենսաթոշակային ֆոնդերի մոտ, քանի որ վերջիններիս համար ներդրված կապիտալի

վերադարձելիության երաշխավորումը, որը հատուկ է շատ կառուցվածքային գործիքների, ունի մեծ կարևորություն¹:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵԶՍԵՆԹ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ը և «ՑԵ-ԿՎԱԴՐԱՏ ԱՄՊԵԳԱ ԱՍԵԹ ՄԵՆԵԶՍԵՆԹ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ը տրամադրվել են ներդրումային ֆոնդի կառավարման գործունեության լիցենզիա, ինչպես նաև պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարման թույլտվություն²:

Չնայած ՀՀ կուտակային կենսաթոշակային բարեփոխումների դեմ բարձրացած մեծ բողոքի ալիքին, որը մեծապես քաղաքացիների՝ Խորհրդային Միության փլուզումից հետո իրենց ավանդների չվերադարձման արդյունքում նոր ձևավորված, անցումային փուլը դեռևս ամբողջությամբ չհաղթահարած Հայաստանի Երրորդ Հանրապետության հանդեպ անվստահության հետևանք է, կուտակային կենսաթոշակային համակարգը ունի տնտեսական մեծ նշանակություն, ինչը բազմիցս ապացուցվել է այլ երկրներում հաջող կուտակային կենսաթոշակային բարեփոխումների օրինակով: Առաջին հերթին կուտակային կենսաթոշակային ֆոնդերը հանդիսանում են երկրի համար ինքնաֆինանսավորման աղբյուր. աճում են խնայողությունները, իսկ խնայողությունների աճը, ըստ աճի մոդելների (Սոլոուի աճի մոդել), բերում է տնտեսական աճի: Երկրորդ, կուտակային կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչները, մասնակցի չնախատեսված, մինչև կենսաթոշակային տարիքին հասնելը մահվան դեպքում նրա ժառանգներին փոխհատուցում տրամադրելու համար պետք է ապահովագրեն յուրաքանչյուր մասնակցին, ինչը կհանգեցնի ապահովագրության ոլորտի, մասնավորապես՝ կյանքի ապահովագրության բնագավառի զարգացմանը: Երրորդ, կուտակային կենսաթոշակային համակարգը կհանգեցնի ՀՀ ֆինանսական շուկայի, մասնավորապես՝ ֆոնդային բորսայի զարգացմանը, քանի որ մեծ քանակությամբ գումարներ կուղղվեն բաժնային արժեթղթերի և հեջավորման նպատակով ածանցյալ գործիքների ձեռքբերմանը:

Կուտակային կենսաթոշակների մասին ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի համաձայն հավասարակշռված, պահպանողական և կայուն եկամտային ֆոնդերի համապատասխանաբար մինչև 50, 25 և 0 տոկոսը կարող են կազմել բաժնային արժեթղթերը և դրանց հեջավորման նպատակով ձեռք բերված ածանցյալ գործիքները³: *Այս դրույթի հիման վրա առաջարկում ենք կուտակային կենսաթոշակային ֆոնդի որոշակի հատված ներդնել*

¹ Шляпочник Я., Сорокопуд Г., Российский рынок структурированных продуктов. Текущие проблемы и перспективы развития, 2010, <http://capital-protection.ru/articles/russia-market>

² <https://www.cba.am/AM/News/Pages/test.aspx>

³ ՀՀ Օրենքը Կուտակային Կենսաթոշակների մասին, 2010

կառուցվածքային գործիքներում, որը հանդիսանում է վերոնշյալ բաժնային արժեթղթերի և ածանցյալ գործիքների արդեն գոյություն ունեցող ընդհանրացում՝ իր լավ մշակված գործիքակազմով և մեթոդաբանությամբ:

Ինչպես երևում է կառուցվածքային գործիքների վերոնշյալ սահմանումից, այն ընդհանրացնում է ռիսկերից ապահովագրման և բարձր եկամուտ ստանալու՝ ֆոնդերի կառավարիչների ձգտումը:

Կուտակային կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը մինչև ապրանքի մարման ժամկետը ակտիվների օպտիմալ բաշխման համար պետք է հաշվի առնի, որ ակտիվների ապագայում բերած եկամուտները ապրանքի կյանքի ընթացքում անհայտ են, տիպիկ ներդրումային հորիզոնը երկար է (միջինում 30 տարի), ինչը նշանակում է, որ ֆոնդի պորտֆելը այդ ժամանակահատվածում կարող է վերաբալանսավորվել շատ անգամ, որի պատճառով բազմաժամանակյա մեխանիզմներ են հարկավոր:

Որոշ հեղինակներ առաջարկում են կենսաթոշակային ֆոնդերի համար կառուցվածքային գործիքների ձևավորման նպատակով օգտագործել դինամիկ ստոխաստիկ օպտիմալացում¹: Նման գործիքների կառուցումը ներառում է էկոնոմետրիկ մոդելավորում, տնտեսական սցենարների մշակում և օպտիմալացման խնդիրների լուծման ընդհանրական մեթոդների կառուցում: Այս պայմաններում ֆոնդերի մեծ մասը օգտագործում են պորտֆելի ստատիկ օպտիմալացում, ինչպիսին է Մարկովիցի միջին-դիսպերսիա բաշխումը, որը, պորտֆելի կառավարչի կողմից չսահմանափակվելու դեպքում, ոչ հեռատես մոտեցում է և կարող է հանգեցնել պորտֆելի արմատական վերաֆինանսավորման: Ի հակադրություն դրան՝ դինամիկ ստոխաստիկ ծրագրավորման մոդելները ավտոմատ կերպով հեջավորում են ընթացիկ պորտֆելի բաշխումը ապագա անորոշություններից ավելի երկար ժամանակահատվածի համար՝ նպաստելով ապագա հնարավոր վնասների և օգուտների մասին ավելի վստահելի կանխատեսումների հիման վրա որոշումների կայացմանը: Այս առանձնահատկության և ռիսկի հանդեպ տարբեր վերաբերմունքներ ցուցաբերելու ունակության շնորհիվ է, որ դինամիկ ստոխաստիկ օպտիմալացումը կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների և պասիվների կառավարման խնդիրների արդյունավետ լուծման առավել նպատակահարմար կառուցվածքն է հանդիսանում:

Չնայած կառուցվածքային գործիքների կիրառման առկա խոչընդոտներին, կարծում ենք, որ ՀՀ ֆինանսական շուկայում

¹ Dempster M.A.H., Germano M., Medova E.A., Villaverde M., Structured Products for Pension Funds, Cambridge, 2003,
http://www.jbs.cam.ac.uk/fileadmin/user_upload/research/workingpapers/wp0307.pdf

առաջիկա տարիներին կնկատվի այդ գործիքների հանդեպ հետաքրքրության աճ, և կառուցվածքային գործիքները ներքին ներդրողների ֆինանսական գործիքակազմում կզբաղեցնեն նույնքան կարևոր տեղ, որքան զարգացած շուկաներում:

ԱՄՆ ԴՈԼԱՐԻ ՓՈԽԱՐԺԵՔԻ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ ՍԱՐԿՈՎՅԱՆ ՇՂԹԱՅԻ ԵՎ ARIMA ԴԱՍԻ ՄՈԴԵԼՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Հարությունյան Արևիկ

*ԵՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ, մագ. 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ պրոֆ. Մ. Սահակյան*

Աշխատանքում ԱՄՆ դոլարի փոխարժեքի դինամիկան ներկայացվել է մարկովյան շղթայի և ARIMA դասի մոդելների միջոցով¹: Կատարել ենք համապատասխան հաշվարկներ և ստացված արդյունքների համեմատական վերլուծություն՝ պարզելու համար այս երկու մոտեցումներից որն է ավելի ընդունելի և համարժեք իրականությանը:

Վերլուծության մեթոդները

1 ԱՄՆ դոլարի փոխարժեքի փոփոխությունը մեկ օրից հաջորդ օրը դիտարկում ենք որպես մի համակարգ, որը ժամանակի t պահին (օրինակ՝ մեկ ժամ, մեկ օր, երկու օր, մեկ շաբաթ, մեկ ամիս և այլն) կարող է գտնվել որևէ i ($i=1,2,\dots,N$) վիճակում, իսկ հաջորդ՝ $t+1$ պահին j ($j=1,2,\dots,N$) վիճակում: Ընդունում ենք, որ համակարգի վարքագիծը ժամանակի ընթացքում օժտված է մարկովյան հատկությամբ և նկարագրվում է մարկովի շղթայի միջոցով:

Դիտարկվում է մարկովի շղթա, որի դեպքում ժամանակային պահը հավասար է 1 օր և վիճակների քանակը՝ N -ը հավասար է 2-ի:

Կատարվել է նաև 1 ԱՄՆ դոլարի փոխարժեքի փոփոխության դինամիկայի վերլուծությունը ARIMA մոդելի միջոցով, որի նպատակը այս երկու վերլուծություններից ստացված արդյունքները համեմատելն է՝ երկու մոտեցումներից որն է ավելի ընդունելի և համարժեք իրականությանը:

Մարկովյան շղթա: Մենք դիտարկել ենք նախորդ և հաջորդ օրերի համար 1 ԱՄՆ դոլարի փոխարժեքի փոփոխությունները 2008 թվականի հունվարից մինչև 2012 թվականի դեկտեմբերը²: Դիտարկվող վիճակների ընդհանուր թիվը 1250 է: Մարկովյան շղթան նկարագրվում է անցումային մատրիցով, որը ցույց է տալիս մի վիճակից մյուսին

¹ Սահակյան Մ.Ա., Բեկնազարյան Ն.Ա., Հակոբյան Հ.Ծ., Քերոբյան Խ.Վ. Տնտեսության վերլուծության մաթեմատիկական եղանակներ, մաս 2, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», հրատ. Երևան, 2001, էջեր 121-131

² Աղբյուր՝ <https://www.cba.am/am/SitePages/ExchangeArchive.aspx>

անցնելու հավանականությունը: Հնարավոր են հետևյալ 2 վիճակները՝ փոխարժեքը կա՛մ բարձրացել /1-ին վիճակ/ է, կա՛մ իջել /2-րդ վիճակ/:

Վերը նշված ժամանակահատվածի՝ 2008-2012 տարիների տվյալների վիճակագրական մշակումից ստանում ենք անցումային հավանականության մատրիցը, որի համաձայն հավանականությունը, որ հաջորդ օրը կրկին կլինենք առաջին վիճակում, այսինքն՝ հավանականությունը, որ փոխարժեքը հաջորդ ժամանակահատվածում էլ կբարձրանա 70% է, իսկ հավանականությունը, որ կանցնենք երկրորդ վիճակին, այսինքն, փոխարժեքը կիջնի՝ 30% է:

Պետք է ուսումնասիրվեն 12 անցումներից հետո ստացված արդյունքները: Ստացված արդյունքների համաձայն՝ 08/01/2013-11/01/2013 ժամանակահատվածում, 18/01/2013-ին և 21/01/2013-ին փոխարժեքի բարձրանալու հավանականությունները բարձր են եղել՝ համապատասխանաբար 0.7, 0.58, 0.54, 0.53, 0.5239, 0.5238 և վերջիններս համընկել են առկա իրավիճակին, օրինակ՝ 08/01/2013-09/01/2013 փոխարժեքը բարձրացել է:

ARIMA դասի մոդելներ

Գործնականում ի հայտ են գալիս հետևյալ հարցերը.

-Ինչպես կարելի է պարզել տրված ժամանակային շարքերի ստացիոնարությունը,


-Ոչ ստացիոնար շարքերը ինչպես կարելի է ստացիոնարացնել¹:

Դիտարկենք ստացիոնարության հայտնաբերման հետևյալ թեստերը մեր օրինակի համար:

1. Գրաֆիկական վերլուծություն: Ժամանակային շարքի ստացիոնարության վերաբերյալ ոչ ֆորմալ դատողություններ հնարավոր է կատարել՝ դիտարկելով տվյալ ժամանակային շարքի գրաֆիկը, եթե ակնհայտ է աճող կամ նվազող տրենդի առկայությունը, ապա տվյալ ժամանակային շարքի միջինը փոփոխվում է ժամանակի ընթացքում, ուստի տվյալ շարքը ոչ ստացիոնար է:

Մեր ունեցած տվյալների համար կառուցենք գրաֆիկը:

¹ **Brockwell P. J., Davis R.A.**, <<Introduction to Time Series an Forecasting, Second Edition>>, Springer 2002, pages 88-96



Գրաֆիկից երևում է, որ շարքը ստացիոնար չէ:

2. Դիֆե-Ֆուլերի թեստը: Դրանում համոզվելու համար կիրառել ենք Դիֆե-Ֆուլերի թեստը և ADF Test Statistic-ը ստացել ենք $-1.319 > -3.438$: Սա նշանակում է, որ 99% նշանակալիության մակարդակում կարող ենք ասել, որ շարքը ստացիոնար չէ:

3. Ավտոկորելիացիայի ֆունկցիա (ACF) և կորելոգրամ: Մեր օրինակի համար կառուցել ենք կորելոգրամը, որից երևում էր, որ MA-ն գնալով նվազում է՝ ձգտելով 0-ի: Ավտոռեգրեսիան 1 էր: Ստացել ենք ARIMA(1,1,0) մոդելը:

Առաջին քայլը, որ պետք է անենք շարքը ստացիոնարացնելն է: Կիրառել ենք Դիֆե-Ֆուլերի թեստը 1-ին կարգի տարբերության համար (1 st difference) և ADF Test Statistic-ը ստացել ենք $-16.632 < -3.438$: Այսինքն, շարքը ստացիոնար է:

Սրանից հետո կատարել ենք մոդելի գնահատում և համապատասխան կանխատեսում, որի արդյունքում ստացել ենք հետևյալ պատկերը. կանխատեսված թվերից միայն առաջին 4-ն են համընկել իրականության հետ:

ARIMA (1,1,0) մոդելով կանխատեսման դեպքում ստացանք, որ կանխատեսված առաջին 4 արդյունքները համընկնում են իրականության հետ: Իսկ մարկովյան շղթայի միջոցով կանխատեսված արդյունքները վեցն էին: Ըստ էության, այստեղից կարելի է եզրակացնել, որ մարկովյան շղթայի միջոցով կատարված կանխատեսումները ավելի ճշգրիտ են:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Հարությունյան Հրանտ

ԵՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ, տ. գ.թ.

Մարդկությունը ութ դրեց 3-րդ հազարամյակ իր պատմության մեջ նախադեպը չունեցող և օրեցօր ահագնացող մարտահրավերներով: Այդ մարտահրավերներն աննախադեպ էին ոչ միայն իրենց խորությամբ, այլ նաև ներազդող ոլորտների բազմազանության մակարդակով: Փորձենք անդրադարձ կատարել դրանցից մի քանիսին:

ՄԱԿ-ի վիճակագրությունը փաստում է, որսովի խնդիր ունեցողներիթիվն աճել է՝ հասնելով շուրջ 1 մլրդ մարդու (2008), որն ավելի մեծ թիվ է, քան ԱՄՆ-ի, Կանադայի և Արևելյան Եվրոպայի համատեղ բնակչությունը միասին վերցրած ¹: Նվազագույն սանիտարահիգիենիկ ջրային ռեսուրսներով ապահովված չեն մոլորակի բնակչության ավելի քան 2 մլրդը ²: Հավելված 1-ում ներկայացվում են որոշ փաստեր, որոնք անդրադառնում են մարդկության զարգացման տարաբնույթ ոլորտների վրա ³: Դիտարկելով այդ փաստերը՝ ակնհայտ է դառնում, որ մարդկության պատմության մեջ չի եղել նման իրավիճակ, երբ առաջանա աղետների նման փուլն՝ մարդկության զրեթե բոլորոլորտներին վերաբերող (տնտեսական, սոցիալ-մշակութային, էկոլոգիական, առողջապահական, բարոյահոգեբանական, գիտական և այլն):

Համաշխարհային ճգնաժամի պայմաններում տնտեսագիտական միտքը ևս հայտնվեց ճգնաժամային իրավիճակում: Պարզվեց, որ անկախ տնտեսվարման սկզբունքներից և ձևերից աշխարհի զրեթե բոլոր երկրները անմասն չեն մնացել տնտեսական խնդիրներից: Պարզ դարձավ, որ ավելի քան հրատապ է ուղղել ներկայիս տնտեսագիտական միտքը դեպի տնտեսական զարգացման նոր գաղափարների ստեղծմանը, որոնք կկրեն ոչ միայն և ոչ այնքան լոկալ, որքան համամարդկային բնույթ:

¹ Աղբյուրը՝ <http://www.un.org/ru/development/progareas/global/hunger.shtml> // տեղեկությունն առ՝ 15.01.2014թ.:

² Աղբյուրը՝ https://www.un.org/ru/waterforlifedecade/human_right_to_water.shtml // տեղեկությունն առ՝ 15.01.2014թ.:

³ Փաստերը բերված են “PPR Group” (Kering) և “EuropaCorp” ընկերությունների ստեղծած փաստավավերագրական ֆիլմից (<http://www.youtube.com/watch?v=7hFivbglEqk>) // տեղեկությունն առ՝ 15.01.2014թ.:

Ժամանակակից տնտեսագիտական միտքը, ինչպես նաև դրա զարգացումը խարսխված է հետևյալ պարզ գաղափարի վրա. “սահմանափակ ռեսուրսների պարագայում մարդկության անսահմանափակ պահանջմունքների բավարարում”։ Ըստ այդմ ինչպիսին էլ լինի տնտեսական համակարգը շուկայական, պլանային, թե խառը, այն կոչված է լուծելու ընտրության, արդյունավետության հիմնահարցերը՝ իրենց բնորոշ առանձնահատուկ ձևերով։ Ընդ որում՝ որպես ելակետ ընդունելով մեկ արքիոմատիկ դրույթ, որն է՝ “սահմանափակ ռեսուրսներով մարդկության անսահմանափակ պահանջմունքների բավարարում”։

Իրականում առաջին հայացքից պարզ թվացող այս դրույթի ներսում կարելի է բացահայտել երկու կարևոր իրականություն։ Առաջինը, որ ռեսուրսները սահմանափակ են, կարելի է միանշանակ ընդունել որպես տրված նախապայման, քանի որ վերջինս, որպես ֆենոմեն, կախված չէ մարդկային գործոնից։ Այլ հարց է, որ այդ ռեսուրսների ճիշտ օգագործումը մեծապես կախված է մեզանից, սակայն ռեսուրսների բուն սահմանափակության փաստի հետ մարդկությունը պետք է համակերպվի։ Ընդ որում, մարդկության պատմության վերջին ժամանակահատվածում այդ ռեսուրսները աստճանաբար նվազել և նվազում են՝ առավել ահագնացող դարձնելով դրանից բխող մարտահրավերները։

Սակայն, ինչ վերաբերում է մարդկության պահանջմունքների անսահմանափակ լինելուն, ապա վերջինիս ընդունումը որպես ելակետային ֆենոմեն կարելի է համարել տնտեսագիտական մտքի չբացահայտված կողմն, այն առումով, որ տնտեսագիտության սկզբնավորման փուլից մինչօրս այդ հարցը չի վիճարկվել և չի ուսումնասիրվել պահանջմունքների սահմանները և դրանց բնույթը կառավարելու տեսանկյունից։

Նշենք, որ վերոնշյալը բնավ չի նշանակում, որ տնտեսագիտական միտքը չի հետազոտել մարդկության պահանջմունքները և դրանց կառուցվածքային առանձնահատկությունները։ Այս առումով տեղին է նշել որոշ տեսաբանների, ինչպիսիք են, մասնավորապես, Ա.Յ.Մասլոուն¹, Ս.Յոլիֆիլդը², Դ.Մակելլանդը³, Վ.Տալլին⁴ և այլոք։ Նշյալ հեղինակների կողմից ուսումնասիրվել են մարդկային անհատական

¹ Maslow A. H. Motivation and Personality. — New York: Harpaer& Row, 1954.

² Холлифорд С., Уиддет С. Мотивация : Практическо еруководство для менеджеров / М.: ГИППО, 2008.

³ Макклелланд Д. Мотивация человека / Персангл. ООО "ПитерПресс"; научн. ред. проф. Е. П. Ильина. — СПб.: Питер, 2007

⁴ W. Tally, Motivation and Personality, Rew. Ed. Van Nosiran, 1982, стр. 251.

պահանջմունքների կառուցվածքը՝ մարդկանց մոտիվացիան բացահայտելու և կառավարման դրույթներ մշակելու տեսանկյունից: Սակայն հարց է առաջանում, իսկ մարդկային պահանջմունքների անսահմանափակ լինելը արդյո՞ք կարող է կառավարելի լինել, և կամ ինչպիսի՞ն է մարդկային պահանջմունքների կառուցվածքը այդ պահանջմունքների՝ մարդկության, այլ ոչ թե անհատի վրա ունեցած դերի տեսանկյունից, և, առհասարակ, մարդկային պահանջմունքներն ունե՞ն որևէ դեր, մարդկության սոցիալ-տնտեսական զարգացումներում:

Անվիճելի փաստ է, որ անկախ տնտեսվարման ձևից, պահանջմունքը և վերջինիս բավարարումը եղել և մնում է հիմնականատակ: Եթե ազատ շուկայական տնտեսության պայմաններում այդ հիմնականատակին հասնելու մեխանիզմներն ինքնաշխատ են “անտեսանելի ձեռքի” օգնությամբ, ապա պլանային տնտեսության պայմաններում ինքնաշխատ չեն: Այնուամենայնիվ, երկու դեպքում էլ նպատակը մեկն է՝ բավարարել մարդկային զանազան պահանջմունքներ՝ զերծ մնալով այդ բավարարման հարցի նպատակահարմարության վիճարկումից կամ քննարկումից:

Իրոք, մարդկության տնտեսվարման պատմության ողջ ընթացքում մարդկային պահանջմունքները հանդիսացել են զարգացման և առաջխաղացման ելակետ և հիմնականատակ, պատկերավոր ասված՝ “շոգեքարշ”:

Մարդկային պահանջմունքների և դրանց սահմանների կառավարման առումով քննարկման է ենթակա նաև մեկ այլ տնտեսական երևույթ, երբ շահույթի մաքսիմալացման նպատակով տարբեր ընկերություններ փորձում են մարդկանց մեջ թելադրել և հարուցել տվյալ բարիքի հանդեպ ուռճացված պահանջմունք՝ հաճախ նաև կիրառելով ոչ ազնիվ մարքեթինգային տեխնոլոգիաներ:

Ստացվում է, որ ներկայիս մարդկության պահանջմունքները որպես “շոգեքարշ” իրենց են ենթարկում տնտեսության գործունեությունը, սակայն, միևնույն ժամանակ, ենթակա են մասնավոր շահերի թելադրանքին: Ակնհայտ է, որվերջինս կարող է առաջացնել ոչ միայն էթիկական, այլ նաև հենց տնտեսագիտական բնույթի խնդիրներ՝ ռեսուրսների տեղաբաշխման և արդյունավետության մի շարք հարցեր առաջացնելով:

Ավելին, երբ ուսումնասիրում ենք տնտեսական գործունեության ամենաբարձր շահութաբերությունն ապահովող ոլորտները, հասկանալի պատճառներով ըստո՞չ պաշտոնական աղբյուրների՝ դրանք հանդիսանում են թմրանյութերի վաճառքը, մարմնավաճառությունը, խաղատնային բիզնեսը, ցուցահանդեսային բիզնեսը և այլն: Կարելի է նկատել, որ տնտեսական գործունեության այս ոլորտները (անկախ

դրանց լեզալ կամ ոչ լեզալ լինելուց)¹ հիմնված են մարդկային պահանջմունքի վրա, իսկ առավել ճիշտ ձևակերպմամբ՝ մարդկային “թուլությունների” վրա: Սակայն չէ՞որ այդ “թուլությունները” հանդիսանում են մարդկային պահանջմունքի անբաժանելի մասը և, հետևաբար՝ չեն կարող չմասնակցել տնտեսության “առաջնորդմանը”:

Այս դեպքում հարց է առաջանում, պե՞տք է արդյոք թույլ տալ, որպեսզի մարկության տնտեսվարումը խարսխվի միայն պահանջմունքակենտրոն գաղափարի վրա:

Եթե մարդկային պահանջմունքները հանդիսանում են մարդկության տնտեսական գործունեության հիմնական առանցքային ուղեմիջը, ապա առաջին պլան պետք է մղվի պահանջմունքների էթիկական ասպեկտը: Ավելին, եթե հաշվի առնենք նաև, որ այդ պահանջմունքներից է կախված համաշխարհային տնտեսությունը, ապա պահանջմունքների ուսումնասիրումը դառնում է հենց տնտեսագիտական հիմնահարց, որին, մեր կարծիքով, մինչ այժմ բավարար չափով ուշադրություն չի դարձվել տնտեսագիտության մեջ: Ինչպես արդեն նշեցինք, մի շարք հեղինակներ հետազոտել են անհատի պահանջմունքները դրանց կառուցվածքը, սակայն այլ՝ անհատական մոտիվացիայի լույսից: Ուստի, մեր դիտարկմամբ, այդ դրույթները զերծ են համաշխարհային տնտեսության վրա անմիջական ազդեցության տնտեսագիտական նշանակությունից:

Եթե փորձենք ամփոփել մարդկային պահանջմունքների քննարկումը՝ չտարանջատելով հարցի էթիկական և տնտեսագիտական ասպեկտները, ապա կարող ենք անտարակույս նշել, որ մարդկային պահանջմունքները կարող են տնտեսությանը տանել մեղմ ասած “ոչ ճիշտ” ուղղությամբ, քանի որ՝

1. Մարդկային պահանջմունքները ենթակա են միտումնավոր ձևախեղման այս կամ այն սուբյեկտիկողմից՝ այդ սուբյեկտի անհատական շահից ելնելով:
2. Մարդկային պահանջմունքները ինքնին պարունակում են արատավոր բաղադրիչներ՝ մարդկային թուլությունների դրսևորմամբ:
3. Ռեսուրսների համաշխարհային բաշխվածությունը և մարդկային պահանջմունքների կուտակումները ունեն անհամաչափություն միմյանց նկատմամբ:
4. Եվ վերջապես՝ մարդկային պահանջմունքներն անսահմանափակ են:

Արդյո՞ք կարելի է հետևել “Հաճախորդը միշտ ճիշտ է” կարգախոսին: Այս առումով տեղին է հիշել Վաշինգտոնում անցկացված

¹ Ի դեպ, մի շարք երկրներում նշյալ ոլորտներից ոմանք արգելված չեն օրենքով:

սոցիալական մի փորձարկման մասին (տես Հավելված 2): Հավելված 2-ում նշված փորձարկումը բացահայտում է մարդկության պահանջմունքների սոցիալ-հոգեբանական կողմը, ըստորի՝ պահանջմունքները հեշտությամբ կարող են հայտնվել “մոլորված” վիճակում, չտարբերակել “թացն ուչորը”: Միգուցե հենց դա է պատճառը, որ աշխարհում գովազդային ծախսերի տարեկան ծավալը հասնում է շուրջ \$500 մլն-ի (2011)¹ և դեռ ունի աճի միտում: Այն դեպքում, երբ օրական սովից մահանում է շուրջ 44.000 մարդ² (կամ 16 մլն մարդ տարեկան): Նշենք, որ անկախ գովազդային “աղմուկի” և պահանջմունքների “մոլորված” լինելու պատճառահետևանքային կապի ուղղությունից՝ միևնույն է հանգում ենք նրան, որ մարդկային պահանջմունքները ունեն “բացեր”, իսկ տնտեսագիտական մտքի ուղղորդումը դեպի այդ բացերը օրհասական խնդիր է:

Ինչխոսք, կարելի է ասել, որ ճգնաժամային բոլոր խնդիրները չեն, որոնք բխում են պահանջմունքների “բացերից”, սակայն առանց այդ “բացերը” չեզոքացնելու, ինչպիսին էլ լինի տնտեսվարման մոդելը, ճգնաժամային իրադրությունը չի կարող արմատապես բարելավվել:

Ընդ որում, աշխարհում ստեղծվել է մի այնպիսի ճգնաժամային իրավիճակ, երբ խնդիրները ոչ միայն վտանգավոր են ինքնին, այլ նաև վտանգավոր են մեկ խնդրից մյուսի ածանցվելու տեսանկյունից: Օրինակ՝ հարստության բևեռացումը, ոչ միայն իրենից ներկայացնում է հնարավորությունների անհավասարություն, այլ նաև հանգեցնում է “շվայտ” պահանջմունքների առաջխաղացմանը՝ խեղաթյուրելով ռեսուրսների բաշխման և օգտագործման համաչափությունը: Առաջանում է փակ շրջանակ: Մարդկությունը դարձել է և շարունակում է մնալ “ճոխության” և “բրենդի” հետևից անառողջ մրցավազքի ակամա զոհը: Ասվածը վերաբերում է նաև աղքատության զգալի տոկոս պարունակող երկրներին, ինչպիսին Հայաստանն է:

Եթե գիտակցենք, մարդկության պահանջմունքների կառավարման անհրաժեշտությունը մակրոմակարդակում, ապա կառաջանա հաջորդ հիմնահարցը, կառավարելի՞ք է արդյոք մարդկության պահանջմունքը մակրոմակարդակում, երբ գործունենք արդեն “կոլեկտիվ պատասխանատվության” հետ:

Նշենք, որոչ վաղ անցյալում Ջատկի կղզում բնակվող Ռոպանուլյան ցեղախմբի վերացումը հենց կապված էր իրենց կղզում ծառահատումների և առաջացած անապատացման հետ: Ռոպանուլյան ցեղախումբն այդպես էլ ի զորու չեղավ ճիշտ օգտագործել կղզու

¹ Աղբյուրը՝ <http://ain.ua/2012/04/19/81322/> տեղեկությունն առ՝ 15.01.2014թ.:

² Աղբյուրը՝ <http://www.un.org/ru/development/progareas/global/hunger.shtml> // տեղեկությունն առ՝ 15.01.2014թ.:

բնական ռեսուրսները, ենթարկվեց “անսահմանափակ պահանջմունքների” գերակայությանը և չկարողացավ դրսևորել “կոլեկտիվ կամք”¹ :

Անդրադառնալով համամարդկային խնդիրների լուծման հարցում “կոլեկտիվ կամքի” դրսևորման անհրաժեշտությանը և այդ դրսևորման անհրատեսական բնույթին՝ Ն.Ն. Մախսենվը կատարել է հետաքրքիր համեմատություն²: Նա նշել է, որութոտնուկներիօրոշ տեսակներ ունեն մարդկային ուղեղին, իրենց բարդությամբ չզիջող ուղեղ, սակայն նրանք այդպես էլ չեն դարձել մոլորակի քաղաքակրթության ստեղծողը (ինչպես մարդը), քանի որ զուրկ են եղել տեղեկատվությունը կուտակելու և սերնդեսերունդ փոխանցելու բիոլոգիական ունակությունից: Հեղինակը շարունակել է. “Այսպես, միգուցե մարդը ևս ունի գենետիկ կամ այլ բնույթի սահմանափակիչ, որը հնարավորություն չիընձեռում նրան անցնել այդ ճանապարհը սահմանագծից այն կողմ: Կամ, միգուցե, մենք գրեթե մոտեցել ենք այդ ճանապարհին: Այնքան ցանկալի կլիներ կարծել, թե ես սխալվում եմ”³:

Ամփոփելով նշենք, որ այս հարցի պատասխանը կմնա բաց այնքան ժամանակ, քանի դեռ չլինի այս հարցում հաջողված նախաձեռնություն: Սակայն մի բան պարզ է, որ անգամ եթե վստահ չենք արդյունքի դրական ելքի հարցում, այնուամենայնիվ, տնտեսագիտական միտքըպետք է ուղղել մարդկության պահանջմունքների կառավարման հարցերին մակրոմակարդակում՝ հանրային և համամարդկային շահի և հարատև զարգացման տեսանկյունից: Այլապես, մեր համոզմամբ, կամայական լուծում կլինի ոչ հիմնարար և հետևաբար՝ ժամանակավոր:

Նշենք նաև, որ “ճգնաժամ” բառը չինքերենիրմեջ պարունակում է 2 հիերոգլիֆ՝ մեկը նշանակում է “վտանգ”, երկրորդը՝ “բարենպաստ հնարավորություն”⁴:

¹ Փաստերը բերված են **“PPR Group” (Kering) և “EuropaCorp”** ընկերությունների ստեղծած փաստավավերագրական ֆիլմից (<http://www.youtube.com/watch?v=7hFiybglEqk>) // տեղեկությունն առ՝ 15.01.2014թ.:

² **Моисеев Н.Н.** “Универсум. Информация. Общество”-М.: Устойчивый мир, 2001. էջ՝ 83:

³ Նույն տեղում, էջ՝ 148:

⁴ Աղբյուրը՝ <http://voxfree.narod.ru/aphorism/crisis.html> // տեղեկությունն առ՝ 15.01.2014թ.:

Հավելված 1. Որոշ փաստեր որոնք անդրադառնում են մարդկության զարգացման տարաբնույթ ոլորտներին¹

- Վերջին 60 տարում մոլորակի բնակչությունն ավելացել է գրեթե 3 անգամ, որոնցից ավելին բնակվում է քաղաքներում: Այդ նույն 60 տարում մենք փոխել ենք մոլորակի վիճակն այնքան, որքան չենք փոխել վերջին 200.000 տարում:
- Աշխարհի օգտակար հանածոների 80%-ն արդյունահանվում է բնակչության 20%-ի կողմից: Կանխատեսվում է, որ մինչ 21-րդ դարի ավարտը օգտակար հանածոների նման օգտագործումը կհանգեցնի դրանց ավարտին:
- Աշխարհում զինամթերքի վրա կատարված ծախսերը 12 անգամ գերազանցում են զարգացող երկրներին տրամադրվող օգնության ծավալները:
- Օրական 5000 մարդ է մահանում անորակ ջրի թունավորումից:
- Աշխարհում արտադրված հացահատկի 50%-ն օգտագործվում է որպես անասնակեր կամ բիովառելիք:
- Վարելահողերի 40%-ը անապատացման եզրին են: Տարեկան մոլորակից վերանում է 13 մլն հա անտառային տարածք:
- Ձկնային պաշարների 75%-ը վերացել է կամ վերացման վտանգի տակ է:
- Վերջին 15 տարվա միջին ջերմաստճանը հասել է ռեկորդային ցուցանիշի:
- Վերջին 60 տարում միջազգային առևտրի ծավալներն աճել են 20 անգամ: Ձկնորսությունը ավելացել է 5 անգամ: Մեծ ձկնատեսակների մեծամասնությունը վերացել է: Ձկնորսության տարածքների 3/4-ը գրեթե սպառված են:
- 500 մլն մարդ (ավելի շատ, քան Եվրոպայի բնակչությունն է) բնակվում է անապատում, որտեղ ջրի խնդիր կա:
- Վերջին 40 տարում Ամազոնի անտառածածկ տարածքները կրճատվել են 20%-ով:
- Անտառները վերածվում են արդյունաբերական կամ անասնապահական տարածքների: Աննախադեպ չափերի են հասնում անտառահատումները: Մոլորակի բնակչության մոտ 1/3-ը օգտվում է փայտածուխից՝ անտառների հաշվին:
- Աֆրիկայի խոշորագույն նավթ արտահանող երկրում՝ Նիգերիայում առկա է 70% աղքատություն:

¹Փաստերը բերված են **“PPRGroup” (Kering) և “EuropaCorp”** ընկերությունների ստեղծած փաստավավերագրական ֆիլմից (<http://www.youtube.com/watch?v=7hFivbglEqk>) // տեղեկությունն առ՝ 15.01.2014թ.:

- Մոլորակի աղքատ բնակչության կեսը բնակվում է ռեսուրսներով հարուստ երկրներում: Մերօրերում հարստության 50%-ը պատկանում է բնակչության 2%-ին: Սա անախադեպ բեռնացում է:
- Գլոբալ տաքացման հետևանքով վերջին 40 տարում հյուսիսային սառցեքեճի հաստությունը նվազել է 40%-ով: Առավելագույնը 2030թ ամռանը այն գրեթե լիովին հալված կլինի, եթե ոչ մոտակա մի քանի տարում՝ ըստորոշ հաշվարկների: Արևի ճառագայթները այժմ կլանվում են և տաքացնում օվկիանոսի ջրերը, մինչդեռ նախկինում սառցե շերտիմիջոցով անդրադարձվում էին:
- Վերջին 100.000 տարվա մեջ, մարդկությունը երբեք չի ապրել ածխաթթու գազի մեծ ծավալների պայմաններում:
- 2050թ.-ին մոլորակի կենդանատեսակների 1/4-ը վերացման վտանգի տակ է հայտնվելու:
- Գրենլանդիայի սառույցները սկսել են հալվել այն արագությամբ, որնույնիսկ ամենահոռետեսական տրամադրված գիտնականները չէին կանխատեսել 10 տարի առաջ: Եթե միայն Գրենլանդիայի սառցե շերտը հալվի, ծովի մակարդակը կբարձրանա 7 մետրով:
- Միայն գլոբալ տաքացման հետևանքով 20-րդ դարում ծովի մակարդակը բարձրացել է 20սմ-ով:
- Մոլորակի բնակչության 70%-ը տեղակայված է ծովափնյա շրջաններում: Օվկիանոսային ջրի մակարդակի բարձրացումը հանգեցնում է գրունտային հողերում աղի ավելացմանը և, հետևաբար, ստորգետնյախմելու ջրերի ծավալային ներուժի կրճատմանը: Շատ մոտ ապագայում մոլորակում մասշտաբային միգրացիոն հոսքեր են սպասվում, պարզապես հստակ ծավալները դեռ հայտնի չեն:
- Արդեն վերացել են կորալների խութերի 30%-ը, որոնք լուրջ դերակատարում ունեն բիոլոգիական տեսակների շղթայում: Փոխվել են համաշխարհային օդային հոսանքների ուղղությունները:
- Անապատացումը սպառնում է ողջ աշխարհին: Ավստրալիայում հողատարածքների կեսը անապատացումից տուժել են:
- Հարստության անհամաչափությունը հանգեցնում է անախադեպ միգրացիոն երևույթների՝ առավելապես գոյատևման, այլ ոչ թե զարգացման շարժառիթով պայմանավորված:

Հավելված 2. Մարդկային պահանջումների բնույթը բացահայտող սոցիալական էքսպերիմենտ

Վաշինգտոնում, մետրոյի կայարաններից մեկում մի ջութակով տղամարդ էր նվագում: Մարդիկ անցնում էին և ուշադրություն չէին դարձնում: Միայն մի 3 տարեկան երեխա կանգնեց լսելու, սակայն նրա մայրը շտապելով քաշեց երեխայի թևիցու տարավ ... Անցորդներից և ոչ մեկը չփորձեց լսել այդ նվագողին: Ո՞վ էր նա:

Նա, աշխարհի լավագույն ջութակահարներից մեկն էր, ամերիկացի Ջոշուա Բելլը, որը նվագում էր ջութակի համար բարդագույն ստեղծագործություններից մեկը, Ստրադիվարիի 3.5 մլն դոլար արժողությամբ ջութակով: Այդ օրը նա վաստակեց ընդամենը 32 դոլար, այն դեպքում, երբ նրա համերգի մեկ տոմսի նվազագույն գինը 100 դոլարից պակաս չէ, իսկ համերգներին դահլիճները լեփ-լեցուն են¹:

¹ Աղբյուրը՝ <http://mirnov.ru/rubriki-novostey/34-kurjozy/2696-vsemirno-izvestnyi-skipach-igral-v-metro-no-ego-nikto-ne-uznal/> տեղեկությունն առ՝ 15.01.2014թ.:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿԱՊԻՏԱԼԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՋՆԱԴԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶՅ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հովակիմյան Առնո

*ԵՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ, մագ. 2-րդ կուրս
Գիտական դեկավար՝ տ.գ.թ. Ա. Ենգոյան*

Ժամանակակից առևտրային բանկերի կարևոր և լայն տարածում գտած առանձնահատկություններից մեկն այն է, որ առևտրային բանկերը ընդլայնում են իրենց բիզնեսը իրենց սահմաններից դուրս՝ բանկային կապիտալը տեղափոխելով օտարերկրյա բանկային համակարգեր: Համեմատության համար նշենք, որ 1960թ-ին միայն ութ ամերիկյան բանկեր ունեին մասնաճյուղեր արտասահմանյան երկրներում, իսկ այսօր հարյուրավոր բանկեր ունեն արտասահմանյան մասնաճյուղեր:¹

Ընդհանուր առմամբ բանկերը կարող են վարել իրենց բիզնեսը արտասահմանում հետևյալ հինական ձևերով:²

1. Ներկայացուցչություն
2. Գործակալություն
3. Դուստր բանկ
4. Օտարերկրյա բանկի մասնաճյուղ

Սակայն ՀՀ օրենսդրությամբ՝ մասնավորապես բանկերի և բանկային գործունեության մասին ՀՀ օրենքով առանձնացվում է օտարերկրյա բանկային կապիտալի հետևյալ ձևերը՝ ներկայացուցչություն, օտարերկրյա բանկի մասնաճյուղ:

Այժմ ավելի մանրամասն անդրադառնանք վերը թվարկված ձևերին:

Օտարերկրյա բանկի ներկայացուցչություններ: Ըստ բանկերի և բանկային գործունեության մասին ՀՀ օրենքի՝ «Բանկի ներկայացուցչությունը բանկի՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող եւ բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանումն է, որը ներկայացնում է բանկը, ուսումնասիրում է ֆինանսական շուկան, բանկի անունից կնքում է պայմանագրեր, իրականացնում է համանման այլ գործառնություններ: Ներկայացուցչությունը բանկային գործունեություն եւ ֆինանսական գործառնություններ իրականացնելու իրավունք չունի»:³ Օտարերկրյա

¹ International Economics Theory & Policy ninth edition Paul R. Krugman 2012 էջ 592

² Trade, Investment and Competition in International Banking Aidan O'Connor 2005 էջ 131

³ Բանկերի և բանկային գործունեության մասին ՀՀ օրենք հոդված 15

բանկի ներկայացուցիչները նպատակ է հետապնդում տրամադրել տեղեկություններ մայր բանկի մասին բնակչությանը և գործարար միջավայրին, այն երկրում, որտեղ այն գտնվում է: Օտարերկրյա բանկի ներկայացուցիչները գործունեությունը սահմանափակվում է գլխամասային գրասենյակի և տվյալ երկրի բանկերի, ֆինանսական կազմակերպությունների, արտադրական ձեռնարկությունների և այլ կազմակերպությունների ու ֆիզիկական անձանց միջև կապերի ստեղծմանը նպաստելով: Փաստորեն կարելի է ասել ներկայացուցչությունը կատարում է միջնորդի դեր մայր բանկի և տեղակայման երկրի տնտեսվարող սուբյեկտների միջև և այս առումով կարևոր դեր է խաղում տեղակայման երկրում մայր բանկի բիզնես նպատակների իրականացման գործում: Ամփոփելով կարող ենք ասել, որ չնայած ներկայացուցչությունը անմիջականորեն չի իրականացնում ֆինանսական գործառնություններ, սակայն հավաքելով անհրաժեշտ տեղեկություններ տեղակայման երկրի գործարար միջավայրի մասին, կնքելով պայմանագրեր մայր բանկի անունից՝ նպաստում է մայր բանկի բիզնեսի իրականացմանը տեղակայման երկրում (արտասահմանում):

Օտարերկրյա բանկի գործակալություն: Օտարերկրյա բանկի գործակալությունը զբաղվում է գրեթե բոլոր տեսակի ֆինանսական ծառայությունների մատուցմամբ: Գործակալությունը չի կարող ընդունել ավանդներ տեղական ֆիրմաներից, սակայն կարող է՝ օտարերկրյա օտարերկրյա հաճախորդներից:՝ Ահա և սա հիմնական տարբերությունն է գործակալության և ներկայացուցչության միջև: Պետք է նշել, որ հիմնականում գործակալությունը իրականացնում է գրեթե բոլոր տեսակի ֆինանսական և բանկային գործառնությունները, բացառությամբ ավանդներ ընդունելը:

Օտարերկրյա բանկի դուստր բանկ: Դուստր բանկը ամբողջությամբ պատկանում է օտարերկրյա բանկին, ընդունող երկրի իրավաբանական անձ է և նրա օրենքներով ճանաչվում է իբրև բանկ: Դուստր բանկը ղեկավարվում է օտարերկրյա բանկի կողմից, սակայն ամբողջությամբ ենթարկվում է ընդունող երկրի բանկային վերահսկողության օրենքներին: Սակայն հարկ են համարում նշել, որ ՀՀ օրենսդրությամբ նման կատեգորիա սահմանված չէ:

Օտարերկրյա բանկի մասնաճյուղ: Օտարերկրյա բանկի մասնաճյուղը բանկի կարևոր մասն է և նրա անունից իրականացնում է բանկային գործունեություն: Օտարերկրյա բանկի մասնաճյուղն ընդունող երկրի իրավաբանական անձ չէ և հետևաբար չի ենթարկվում նրա բանկային վերահսկողությանը: Ըստ Բանկերի և Բանկային

¹ Trade, Investment and Competition in International Banking Aidan O'Connor 2005 էջ 131

գործունեության մասին ՀՀ օրենքի՝ «Օտարերկրյա բանկերը կարող են Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնել մասնաճյուղեր եւ ներկայացուցչություններ՝ օրենքով սահմանված կարգով: Օտարերկրյա բանկի մասնաճյուղը բանկային գործունեություն եւ ֆինանսական գործառնություններ է իրականացնում լիցենզիայի հիման վրա»:¹

Նշենք նաև, որ ՀՀ բանկային պրակտիկայում տարածված է *օտարերկրյա մասնակցությամբ բանկը*, որը ընդունող երկրի իրավաբանական անձ է, իր գործունեությունն իրականացնում է ընդունող երկրում գործող օրենքներին համապատասխան, վերահսկվում է և՛ օտարերկրյա բաժնետերերի, և՛ հնարավոր է նաև տեղական բաժնետերերի կողմից: Պետք է նշել, որ ՀՀ բանկային համակարգում բոլոր «օտարերկրյա» բանկերը պատկանում են հենց այս կատեգորիային: Ավելի հստակ, քանի որ չկա օտարերկրյա բանկի ոչ մի մասնաճյուղ, իսկ օրենսդրությամբ չի սահմանվում դուստր բանկ կատեգորիան (առկա չէ), ապա այն բանկերը, որոնք գործում են օտարերկրյա վերահսկողությամբ՝ օրինակ Ամերիաբանկ, Արմսփիսբանկ, Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան և այլն հենց օտարերկրյա մասնակցությամբ (կապիտալով) բանկեր են: Մասնագիտական գրականության մեջ՝ որպես օտարերկրյա բանկային կապիտալի ներկայության ձև, հիմնականում չի առանձնացվում օտարերկրյա մասնակցությամբ բանկ հասկացությունը: Դա, ըստ էության, իր կարգավիճակով թե՛ իրավաբանական, թե՛ դերակատարման առումով հենց դուստր բանկն է:

Իրավաբանական տեսակետից մասնաճյուղի և դուստր բանկի (կամ օտարերկրյա մասնակցությամբ բանկի) տարբերությունը հստակ է՝ դուստր բանկը հանդիսանում է տեղակայման երկրի իրավաբանական անձ, իսկ մասնաճյուղը՝ ոչ, սակայն դերակատարման առումով կարիք ունի որոշ պարզաբանումների:

Մասնաճյուղի բացումը ցույց է տալիս, որ օտարերկրյա բանկը լուրջ է տրամադրված տվյալ երկրի հանդեպ, այլ կերպ ասած ունի շուկան գրավելու հեռահար նպատակ: Եթե բանկն որևէ այլ երկրում ստեղծում է մասնաճյուղ, ապա դա նշանակում է որ նա իր վրա է վերցնում պատասխանատվություն անվերապահորեն տեր կանգնել իր ստորաբաժանման պարտավորություններին անբարենպաստ հանգամանքներում: Սա հենց այն է, ինչ ցանկանում է ամեն մի երկրի կարգավորող մարմին: Եթե դուստր բանկի սեփականատերերը վտանգում են միայն իրենց ներդրած կապիտալը և չեն կրում ուղղակի

¹ Բանկերի և բանկային գործունեության մասին ՀՀ օրենք հոդված 14 կետ 3

պատասխանատվություն բանկի պարտավորությունների նկատմամբ, ապա մասնաճյուղի պարտավորությունները ինքնըստինքյան դառնում է մայր բանկի պարտավորությունները: Չնայած նրան, որ օտարերկրյա բանկային կապիտալի ներկայությունը մասնաճյուղի կարգավիճակով ունի դրական կողմեր, որոնցից է օրինակ այն, որ օտարերկրյա բանկի մասնաճյուղի սնանկացման դեպքում ավանդատուները կարող են իրենց պահանջները ներկայացնել մայր բանկի նկատմամբ, ինչպես նաև օտարերկրյա բանկի մասնաճյուղը, ներկայացված լինելով մայր բանկի կապիտալով, կարող է անհամեմատ ավելի խոշոր վարկեր տրամադրել, քան տեղական բանկերը, սակայն անկախացումից մինչև օրս ՀՀ տարածքում չի գործել և ոչ մի օտարերկրյա բանկի մասնաճյուղ:

Փորձենք պարզել, թե որն է պատճառը, որ ՀՀ տարածքում, ինչպես նաև ԱՊՀ երկրներում՝ բացառությամբ Վրաստանի և Ադրբեյջանի, չի գործում որևէ օտարերկրյա բանկի մասնաճյուղ:

Ինչպես նշում է ռուս հեղինակ Վերնիկովը՝ «մենք կասկածում ենք, որ ներկա փուլում առաջատար օտարերկրյա բանկերը կցանկանան հիմնել իրենց մասնաճյուղերը Ռուսաստանի, Ուկրաինայի, Ղազախստանի նման երկրներում, եթե նույնիսկ դա ողջունվեր իշխանությունների կողմից»:¹ Բանն այն է, որ օտարերկրյա առաջատար բանկերը խիստ վերապահումով են մոտենում ոչ կայուն տնտեսություն ունեցող, միազգային բանկային օրենսդրությունից զգալի շեղված բանկային օրենսդրություն ունեցող, մեծ քաղաքական ռիսկեր ունեցող երկրներում մասնաճյուղերի հիմնելուն: Պատահական չէ, որ հեղինակը նշում է «եթե նույնիսկ դա ողջունվեր իշխանությունների կողմից» արտահայտությունը: Խոսքը գնում է նրա մասին, որ ԱՊՀ երկրները, այդ թվում նաև Հայաստանը, իրենց հերթին վերապահումով են մոտենում, այն հանգամանքին, որ օտարերկրյա առաջատար բանկերը մասնաճյուղեր բացեն իրենց երկրներում (Պատահական չէ, որ նույնիսկ Ռուսաստանի նման երկիրը օրենսդրությամբ արգելում է օտարերկրյա բանկի մասնաճյուղի ներթափանցումը իր բանկային համակարգ) հետևյալ հիմնական պատճառներով.

1. Օտարերկրյա առաջատար բանկի մասնաճյուղը, ներկայացված լինելով իր մայր բանկի ռեսուրսներով, իր կապիտալով, կարող է նույնիսկ մի քանի անգամ գերազանցել տեղական բանկային համակարգի ամբողջ կապիտալին և այդ առումով դա կարող է լինել ապակայունացնող գործոն: Մյուս կողմից մասնաճյուղը կարող է

¹ Верников А. В. Иностранные банки в переходной экономике: Сравнительный анализ 2005 г. 29

տրամադրել անհամեմատ ավելի մեծ վարկեր, մեծացնելով իր շուկայական մասնաբաժինը, որի հետևանքով մեծանում է նրա դերը տնտեսությունում, և փոքրանում է իշխանությունների ազդեցությունը տնտեսության վրա:

Օտարերկրյա բանկերում գործում է ավելի մրցունակ ավանդների երաշխավորման համակարգ, հետևաբար չի բացառվում, որ տեղի ունենա ավանդների զգալի արտահոսք այլ բանկերից, ինչի հետևանքով մի շարք բանկեր կարող են ունենալ իրացվելիության խնդիր:

2. Նշված երկրների բանկային օրենսդրությունը դեռևս զգալի տարբերվում է միջազգայինից, հետևաբար չի բացառվում մայր երկրի և ընդունող երկրի բանկային օրենսդրությունների նույնիսկ զգալի տարբերություններ, ինչը նույնպես լրացուցիչ բարդություն է:

3. Քանի որ օտարերկրյա բանկի մասնաճյուղերը ընդունող երկրի հարկային և վերահսկիչ մարմիններին չեն տրամադրում լրիվ ծավալով հաշվետվություններ, ապա նրանք ունեն մեծ հնարավորություններ, մեղմ ասած, օպտիմալացնել իրենց հարկային բեռը:¹

Փաստորեն հստակ է, որ ՀՀ բանկային համակարգում ներկա փուլում չի լինի օտարերկրյա բանկային կապիտալի ներկայություն՝ մասնաճյուղի կարգավիճակով: Դրա համար անհրաժեշտ է բանկային օրենսդրության լրիվ համապատասխանություն միջազգային ստանդարտներին, հաստատել կայուն շուկայական հարաբերություններ և այլն:

¹ ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի տարեգիրք 2012 էջ 138

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հովհաննիսյան Թամարա

*ՀԴՏՀ, Մարքեթինգի եւ բիզնեսի կազմ. ֆակուլտետ, ասպիրանտ
Գիտական ղեկավար տ.գ.դ., պրոֆ. Վ. Սարգսյան*

Հանքարդյունաբերությունը երկրի տնտեսության շարժիչ ուժ հանդիսացող այն ոլորտներից է, որի գործունեության ամենակարևոր առանձնահատկությունը կայանում է երկրի բնական սահմանափակ ռեսուրսների օգտագործումը: Հետևաբար հանքերի օպտիմալ օգտագործումը ոչ միայն հանքարդյունաբերական ընկերությունների, այլ նաև ամբողջ տնտեսության, երկրի բնապահպանության համար ունի խիստ կարևոր նշանակություն:

Ակտիվների օպտիմալ կառավարման խնդիրները առկա են տնտեսական գործունեության բոլոր ոլորտներում: Ձարգացած երկրներում նմանատիպ խնդիրների լուծումը բազմիցս անգամ իրականացվել է ավանդական տնտեսությունից անցում կատարելով գիտելիքահենք տնտեսության:

Գիտելիքահենք տնտեսության ամենակարևոր դրույթներից է հանդիսանում ինովացիաների կիրառումը տնտեսության մեջ. այն հնարավորություն է տալիս առկա և ապագա ներդրումների հաշվին ստեղծել ավելի օպտիմալ գործող տնտեսություն՝ միավոր ներդրումներից ստանալով ավելի մեծ արդյունք, քան հնարավոր էր ստանալ նախկինում կիրառվող մեթոդի(ներ)ի շնորհիվ:

Հատկանշական է, որ տեղեկատվական հասարակության դարում գիտելիքային ռեսուրսները նույնիսկ ավելի բարձր են գնահատվում, քան այլ ռեսուրսները:

Ձարգացող երկրների համար, ինչպիսին նաև Հայաստանն է, այս անցումը դառնում է ավելի քան կարևոր, քանի որ այն դառնում է միջազգային մրցունակության պահպանման միակ միջոցը:

Հատկանշական է, որ հանքարդյունաբերության մեջ ինովացիոն ներդրումները ունեն երկու հիմնական ուղղություն.


- Ինովացիաներ, որոնք պահանջում են խոշոր ներդրումներ տեխնիկական վերազինման մեջ, սակայն մի քանի տարիներում ապահովում են ներդրումների ամբողջական հետվերադարձ և արդյունավետության էական բարձրացման շնորհիվ զգալի մեծացում են ընկերության շահույթը:

- Ինովացիաներ, որոնք պահանջում են ակտիվների օգտագործման օպտիմալացում՝ հիմնվելով աշխատանքի իդենտիֆիկացման և ճիշտ բաժանման հիման վրա, գիտելիքային

տնտեսության դրույթները կիրառելով օպերացիոն մակարդակում և զարգացնելով ճկուն, ուժեղ կառավարման համակարգ: Ընդ որում հատկանշական է, որ առանց մարդկային ռեսուրսների ճիշտ եւ բազմակողմանի պատրաստվածության խոշոր տեխնիկական ներդրումային ծրագրերը չեն կարող դառնալ եկամտաբեր, հետևաբար նաև արդարացված¹:

Հաշվի առնելով ՀՀ հանքարդյունաբերության ոլորտում առկա հիմնախնդիրները՝ հանքարդյունաբերության ոլորտում շահութաբերության բարձր արդյունքների հասնելու համար, անհրաժեշտ է կիրառել այս երկու մոտեցումները միաժամանակ՝ միջազգային մակարդակի հանքարդյունաբերական կոնցեռն ստեղծելու համար:

Մետաղի մշակման արոցեսների կատարելագործման ուղղությունները հետևյալն են.



Ի հակառակ ձեւավորված այն կարծրատիպի, որ Հայաստանում բնական ռեսուրսների դեֆիցիտ է եւ երկիրը սեփական բնական ռեսուրսներով չի կարող իրեն բավարարել՝ Հայաստանում հանքարդյունաբերական ռեսուրսների պաշարները բավականին մեծ են, եւ եթե Հայաստանին հարեւան համարվող երկրները տնտեսական եւ քաղաքական դիրքի կայունացման նկատառումներով ինտենսիվորեն օգտագործում են նավթն ու գազը, ապա նման կարելոր գործոն Հայաստանում կարելի է համարել մոլիբդենի, պղնձի եւ այլ մետաղների հանքերը, որոնք ոչ միայն տարածաշրջանի, այլ նաեւ գլոբալ մակարդակով կարելի է համարել խոշոր, հատկապես հաշվի առնելով, որ դրանք կուտակված են ընդամենը 30 հազար ք.կմ. տարածքի վրա:

¹ ASSET PERFORMANCE MANAGEMENT DRIVES MINING PROFITABILITY:
INCREASING COAL PRODUCTION WITHOUT SIGNIFICANT CAPITAL INVESTMENT,
Adam Aguzzi and Charlie Payne

Համաձայն էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության տեղեկատվության՝ օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում ներկայումս հաշվառված է հաստատված պաշարներով պինդ օգտակար հանածոների ավելի քան 670 հանքավայր, այդ թվում՝ 30 մետաղական: Նշված հանքավայրերից շահագործվում են շուրջ 400-ը՝ այդ թվում՝ 22 մետաղական :

Հայաստանի Հանրապետության ընդերքը հարուստ է երկաթի, պղինձի, մոլիբդենի, կապարի, ցինկի, ոսկու, արծաթի, ծարիրի, ալյումինի, ինչպես նաև նրանցում պարփակված հազվագյուտ ու ցրված մետաղներով:

Մետաղական օգտակար հանածոների թվում առկա են 7 պղնձամոլիբդենային, 4 պղնձի, 14 ոսկու և ոսկի-բազմամետաղային, 2 բազմամետաղային, 2 երկաթահանքային և 1 ալյումինահանքային հանքավայր:

Ինչ վերաբերում է հնարավոր այլ հանքերի բացահայտմանը, ապա պետք է նշել, որ բացի գնահատված և Պետական հաշվեկշռում գրանցված հանքավայրերից Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված են տարբեր մետաղների 115 երևակումներ¹:

Հայաստանի հանքարդյունաբերական դիրքը Անդրկովկասում եւ միջազգային մակարդակով հասկանալու համար դիտարկենք հետեւյալ աղյուսակը.

ՀՀ մետաղական պաշարները համեմատության մեջ²

	Անդրկովկասի պաշարներ	համաշխարհային պաշարներ
Մոլիբդենի պաշարներ	99,9%	7%
պղնձի պաշարներ	85%	2%
ոսկու պաշարներ	80%	-
երկաթի պաշարներ	>50%	-

Երկաթի, պղինձի, կապարի եւ ցինկի, մոլիբդենի արդյունաբերական պաշարները հաշվվում են միլիոնավոր տոննաներով:

Հատկանշական է, որ վերոնշյալ մետաղների հարստացումը իրականացվում է մինչեւ որոշակի տոկոս՝ չհասցնելով մետաղի

¹ Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության պաշտոնական վեբ-կայք, լրատվական կայք-էջեր, www.minenergy.am, etc.

² նույնը

պարունակությունը 98-100%-ի, օրինակ պղնձի դեպքում որպես կանոն այն տատանվում է 12-28%, հաճախ հենց այս պարունակությամբ, որպես խտանյութ էլ այն արտահանվում է երկրից: Հատկանշական է, որ միայն Արմենիան Քափըր Փրոգրամ ընկերությունն է, որ Հայաստանում իրականացնում է վերոնշյալ տեսակի խտանյութի ձեռքբերում տեղական արտադրողներից եւ կարողանում այն հարստացնել ընդհուպ մինչեւ 60-70%, ինչը թերեւս չի կիրառվում ՀՀ-ում արդյունահանվող ամբողջ մետաղի նկատմամբ եւ այն շատ դեպքերում երկրից դուրս է գալիս՝ հենց խտանյութի տեսքով, որոշ դեպքերում նույնիսկ որպես սև մետաղ:

Վերոնշյալ տվյալները թերևս փաստեցին մետաղական հանքաքարերով Հայաստանի աղքատ չլինելու հանգամանքը, սակայն այլ խնդիր է, որ դրանց իրական շահագործողները հանդիսանում են ոչ թե ներքին ներդրողները, այլ օտարերկրյա ներդրողները, իսկ վերջնական արտադրանքի ստացման և վաճառքի էական մասը բաժին է ընկնում օտարերկրյա ընկերություններին և զարգացած մի շարք տերություններին:

2012 թվականին մեր տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների ընդհանուր ծավալի շուրջ 14%-ը, որը կազմել է 106,7 մլն ԱՄՆ դոլար, ուղղվել է մետաղական հանքաքարի արդյունահանման ոլորտ: 2011 թվականի համեմատ ոլորտում իրականացված օտարերկրյա ներդրումներն աճել են շուրջ 2 անգամ:

Միևնույն ժամանակ, հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր ուղղված օտարերկրյա ներդրումները կազմել են 94,6 մլն ԱՄՆ դոլար կամ իրականացված օտարերկրյա ներդրումների ընդհանուր ծավալի 12,5%-ը: Բացարձակ արտահայտությամբ այս ճյուղերում ներդրումների ծավալն աճել է շուրջ 3,8 անգամ¹:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալների համաձայն՝ հաշվետու տարում Հայաստանի մետաղական հանքաքարի արդյունահանմամբ հետաքրքրված օտարերկրյա ներդրողները Կանադայից են, իսկ հանքագործական արդյունաբերության ու բացահանքերի շահագործման այլ ճյուղերում օտարերկրյա ներդրումների առավել մեծ հոսք գրանցվել է Շվեյցարիայից և Գերմանիայից:

Այլ կերպ ասած՝ նման քաղաքականության վարումը այլ հավասար պայմաններում ձենտուլ չէ նախևառաջ

¹ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, ԱՎԾ լուսաբանումները լրատվական կայք-էջերում, www.armstat.am, etc.

հանքարդյունաբերական ընկերություններին, քանի որ նրանք կորցնում են պոտենցիալ լրացուցիչ շահույթի ստացման հնարավորությունները: Այս պարագայում ընկերությունները նոր, ինովացիոն ներդրումները կատարում են ի լրումն արդեն իսկ ձեռք բերված հանքի օգտագործման իրավունքի և մետաղների արդյունահանման արդեն իսկ իրականացված ծախսերի՝ բարձրացնելով ROI(return on investment) եւ ROA(return on assets) ներդրումների արդյունավետության գնահատման եւ ակտիվների արդյունավետ օգտագործման ցուցանիշները: Ընկերությունները ոչ միայն հնարավորություն կստանան ձեռք բերել լրացուցիչ եկամուտ բարձր պարունակության մետաղների ավելի բարձր գների շնորհիվ, այլ նաև էականորեն կրճատել տրանսպորտային ծախսերը արտահանվող միավոր մետաղի համար:

Վերջնական հանքարդյունաբերական արտադրանքի ստացումը երկրի ներսում խիստ կարևոր է նաև մակրոտնտեսական տեսանկյունից. հանքանյութը խտանյութի կարգավիճակում արտահանելիս ավելի փոքր է վերջինի հարկային բազան, հետևաբար նաև ավելի քիչ է հարկային եկամուտը, որը պետք է ուղղվի պետական բյուջե: Ելնելով այն հանգամանքից, որ ՀՀ պետական բյուջեն ունի սոցիալական ուղղվածություն, խնդիրը ձեռք է բերում նաև սոցիալական ուղղվածություն:

Հանքերի արդյունավետ օգտագործումը կարևորվում է նաև ռազմավարական տեսանկյունից. բնական ռեսուրսներով ապահովված մի շարք զարգացած երկրներ շարունակում են վարել ռեսուրսախնայող քաղաքականություն, ինչը հիմնականում դրսևորվում է հետեւյալ հանքարդյունաբերության ոլորտում՝ կիրառվող քաղաքականության հետևյալ 2 հիմնական ուղղություններով.

- Զարգացած երկրներում հանքարդյունահանման ոլորտում մետաղների քիմիական գտման եւ առանձնացման գործողությունները իրականացվում են նորագույն ինովացիոն տեխնոլոգիաների միջոցով, ինչը հնարավորություն է տալիս ստանալ վերջնական արդյունք եւ սեփական ռեսուրսները օգտագործել արդյունաբերության և տնտեսության այլ ոլորտների ներքին պահանջարկը բավարարելու համար

- Մի շարք երկրներ, ունենալով սեփական բնական ռեսուրսներ, որդեգրում են այլ երկրներից (որպես կանոն զարգացող այն երկրներից, որտեղ մետաղի մշակման բոլոր պրոցեսները տեխնոլոգիական ոչ բավարար զինվածության պատճառով չեն իրականացվում, ինչպիսին է նաև Հայաստանը) խտանյութի ձեռքբերման եւ վերջնական արդյունքի ստացման քաղաքականությունը՝ խնայելով սեփական ռեսուրսները հետագա սերունդների համար և

ակնկալով դրանց հետագա օգտագործումից ավելի մեծ եկամուտներ (բնական ռեսուրսները սահմանափակ են եւ բնական է, որ միջազգային բիրժաներում մետաղի գները ընդհանուր առմամբ ունեն բարձրացման միտում, հետևաբար, հանքերի օգտագործման հնարավոր, ուշացումը ապագայում ավելի մեծ եկամուտների աղբյուր է հանդիսանում):

Հանքարդյունաբերական ոլորտում նման քաղաքականությունը կարևոր ռազմավարական նշանակություն ունի, քանի որ Հայաստանը բնական այլ ռեսուրսներ, ինչպիսիք են նավթն ու գազը, իր տարածքում չունի, սակայն գերակա դիրքում է մետաղական ռեսուրսների գծով:

Տնտեսական կարելուր մեկ այլ հիմնախնդրի լուծմանը ևս ուղղված է ռեսուրսների արդյունավետ օգտագործումը. երկրում մետաղների նկատմամբ պահանջարկը գերազանցում է առաջարկը դրամային տեսքով: Հանդիսանալով Հայաստանից արտահանվող ամենամեծ ապրանքային խումբը՝ մետաղները միաժամանակ հանդիսանում են ամենամեծ ներկրվող ապրանքային խումբը, սակայն այս պարադոքսը գործում է դրամային արտահայտությամբ համեմատության դեպքում:

Տրամաբանական հարց է ծագում. ինչու՞ է Հայաստանը արտահանում մետաղներ՝ ունենալով ներքին չբավարարված պահանջարկ նույն մետաղների նկատմամբ: Խնդիրը կայանում է նրանում, որ արտահանվող հումքը հիմնականում ցածր պարունակության է, հետևաբար, արտահանվող խտանյութը վաճառվում է շատ ավելի ցածր գնով, քան այն մետաղը, որը ներկրվում է պատրաստի արտադրանքի կարգավիճակում. Այս ամենի արդյունքում ծագում է մետաղների և մետաղական արտադրանքների գծով արտաքին առևտրի բացասական սալիդ:

Հիմնական ներմուծվող ապրանքախմբերի գծով արտաքին առևտրի սալիդ 2008-2012թթ. հազ դոլարով¹

Ապրանքախումբ	2008	2009	2010	2011	2012
Թանկարժեք մետաղ	(130 846)	(2 266)	(24 818)	(18 522)	(6 133)
Ոչ թանկարժեք մետաղ	(66 568)	(144 425)	(35 769)	37 857	32 779
Հանքաքար	(485 934)	(394 946)	(359 270)	(422 828)	(514 469)
Պատրաստի սննդամթերք	(170 867)	(165 089)	(177 745)	(217 403)	(101 655)
Կտորի արտադրանք	(112 832)	(77 492)	(115 807)	(152 546)	59 639

¹ www.ada.am, Armenian Development Agency database

Նոր տեխնոլոգիաների ներդրումը ՀՀ հանքարդյունաբերական ոլորտում ունի մեծ կարեւոր բնապահպանական նշանակություն, քանի որ նոր տեխնոլոգիաները հիմնականում ուղղված են անթափոն արտադրություն և հումքի արդյունահանումն ու հետագա մշակման գործընթացներն իրականացնում են փակ եղանակով, ինչը թույլ է տալիս անցում կատարել ավելի անվնաս արդյունահանման պահպանելով հանքին մոտ գտնվող ֆլորան եւ ֆաունան:

Ձտման եւ առանձնացման օպերացիաների իրականացման համար անհրաժեշտ է իրականացնել բավականին խոշոր ներդրումներ, որոնք ըստ մասնագետների միջինական գնահատման կազմում են 100-150 մլն դոլար: Նման մեծ ներդրում պահանջող գործընթացի համար անհրաժեշտ է ներգրավել շահ հետապնդող բոլոր կողմերը հետևյալ հնարավոր համագործակցության ուղղություններով.

Գործող ընկերության տեխնիկական եւ ինովացիոն վերազինում իրավաբանական տեսակ՝ ՓԲԸ

- ընկերություն
- պետություն
- օտարերկրյա ներդրող

Գործող ընկերության վերազինում կամ նոր նպատակային կոնցեռնի ստեղծում իրավաբանական տեսակ՝ ՓԲԸ կամ ԲԲԸ

- ընկերություններ
- պետություն
- մասնավոր ներքին ներդրողներ
- մասնավոր օտարերկրյա ներդրողներ

IPO գործընթացի իրականացում միջազգային բորսաներում

- ընկերություն
- պետություն
- մասնավոր ներդրողներ

Հատկանշական է, որ հանքարդյունաբերական ընկերության մասն վերազինմանը կամ նոր կոնցեռնի ստեղծմանը պետք է մախորդի հանքարդյունաբերական ընկերությունների հետ համաձայնագրերի, ինչու ոչ, մեծ տարածաշրջանում այլ հանքարդյունաբերական ընկերությունների հետ համաձայնագրերի կնքումը, քանի որ ինովացիոն ներդրումները արդարացված կլինեն միայն իրենց արտադրական հզորությունների ամբողջական օգտագործման դեպքում:

ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱ- ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄՈԴԵԼ

Ղազարյան Շողեր

*ԵՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ, հայցորդ
Գիտական ղեկավար՝ պրոֆ. Մ. Սահակյան*

Ամբողջ աշխարհում զանգվածային տուրիզմի տարածմանը զուգահեռ՝ տուրիզմի զարգացման յուրահատկությունների, բնորոշ գծերի և ուղղությունների ուսումնասիրությունը դառնում է առաջնային և պահանջում մանրակրկիտ արհեստավարժ մոտեցում:

Ըստ տուրիզմի համաշխարհային կազմակերպության աշխարհում յուրաքանչյուր 16-րդ աշխատատեղ բաժին է ընկնում տուրիզմին: Ըստ այս նույն կազմակերպության տվյալների 2012 թվականին ամբողջ աշխարհում գրանցվել է 1 մլրդ տուրիստ:¹

Տուրիզմի արդյունաբերությունը աշխարհի շատ երկրների համար դառնում է տնտեսության կարևոր կամ հիմնական բաղկացուցիչ հատվածը:

Օրինակ Մավրիկիում տուրիզմը համարվում է տնտեսության եկամտի գլխավոր աղբյուր: Ինչպես նաև Ռոդրիգես կղզում տնտեսության գլխավոր հենասյունը համարվում է տուրիզմը:

Ըստ համաշխարհային ճանապարհորդության և տուրիզմի խորհրդի կատարած հետազոտությունների շնդկաստանում մինչև 2014 թվականը ճանապարհորդության և տուրիզմի բաժինը կապահովի \$90 մլրդ եկամուտ, իսկ տուրիզմի բնագավառում աշխատատեղերի թիվը կհասնի 28 մլն:² Այս ամենից ելնելով դժվար չէ կռահել, որ տուրիզմը կհանդիսանա շնդկաստանի տնտեսության առանցքային եկամտի աղբյուրը:

Տուրիզմի ակտիվ զարգացման այս փուլում կարևոր խնդիր է դառնում մարդատար երթուղիների օպտիմալության հարցը:

Փաստացի տվյալներով այս խնդրի լուծման արդյունքում կարելի է համոզել տեղացի գործարարներին քիչ ծախսատար և առավել շահութաբեր գործարքներ ապահովելու մեջ:

1. Տուրիստական երթուղիների ընտրության տնտեսամաթեմատիկական մոդել. Յուրաքանչյուր տուրիստական ընկերության աշխատանքի արդյունավետությունը կախված է տուրիստական վայրերի ընտրությունից (որոնցում պետք է լինեն

¹ World Tourism Organization (UNWTO) Tourism Highlights, 2012 Edition, page 2.

² Prasanna Kumar “Marketing of Hospitality” and Tourism Services, Tata McGraw Hill Education Private Limited, New Delhi, 2010, page 176:

տուրիստները), նրանցում անցկացրած ժամանակից և ընդհանուր երթուղու տևողությունից:

Սույն հոդվածի նպատակը մարդատար երթուղիների տնտեսամաթեմատիկական մոդելի կառուցումն է՝ շահույթի ինտենսիվության տեսանկյունից:

Այս տիպի խնդիրներում հիմնականում կիրառվում են շրջանաձև և բեկյալաձև փակ շարժման սխեմաները: Տվյալ դեպքում յուրաքանչյուր տուրիստական վայր այցելում են մեկ անգամ, որն էլ ասոցացվում է հայտնի Շրջիկ գործակալի (կոմիվոյաժորի) խնդրի հետ, որը փակ երթուղով նվազագույն գումարային ծախսով պետք է անցնի բոլոր տրված կետերով և վերադառնա մեկնակետ՝ յուրաքանչյուրում լինելով միայն մեկ անգամ:

Կոմիվոյաժորի խնդրի տնտեսամաթեմատիկական մոդելն ունի հետևյալ տեսքը.

$$z = \sum_{i=1}^m \sum_{j=1}^m c_{ij} x_{ij} \rightarrow \min_{\{x_{ij}\}} \quad (1)$$

$$\sum_{i=1}^m x_{ij} = 1, \quad j = \overline{1, m}, \quad (2)$$

$$\sum_{j=1}^m x_{ij} = 1, \quad i = \overline{1, m}, \quad (3)$$

Որտեղ

$$x_{ij} = \begin{cases} 1, & \text{եթե երթուղին անցնում է } i \text{ տուրիստական վայրից } j, \\ & i, j = \overline{1, m} \\ 0 & \text{հակառակ դեպքում} \end{cases} \quad (4)$$

m - երթուղում տրված տուրիստական վայրերի ընդհանուր թիվը

c_{ij} - i տուրիստական վայրից j անցման ծախսը

(1)–ն արտահայտում է երթուղու վրա կատարված ծախսը, այսինքն՝ նպատակային ֆունկցիան ձգտում է մինիմումի.

(2) հավասարումը ապահովում է յուրաքանչյուր տուրիստական վայրում միայն մեկ անգամ մտնելը

(3) սահմանափակումն ապահովում է յուրաքանչյուր տուրիստական վայրից միայն մեկ անգամ դուրս գալը

(1)–(4) կոմիվոյաժորի խնդրի մոդելում օպտիմալ մարդատար երթուղիների կառուցման համար նպատակահարմար է մտցնել հետևյալ սկզբունքային փոփոխությունները.

1. Փոփոխել չափանիշները. տուրիստական կազմակերպությունը ոչ թե մինիմալացնում է երթուղու՝ տրված տուրիստական վայրեր այցելության վրա կատարած ծախսը, ինչպես կոմիվոյաժորի խնդրում, այլ մաքսիմալացնում է շահույթը միավոր ժամանակում, շահույթի հետ միասին հաշվում է նաև ծախսերը, ինչպես նաև ժամանակային և ֆինանսական այլ ֆակտորներ:

2. Մինիմումի սահմանափակումից անցումը մաքսիմումի սահմանափակմանը դառնում է թույլատրելի. հանվում է պահանջը, որ երթուղին համապատասխանաբար անցնի բոլոր տուրիստական վայրերով: Հնարավորություն է առաջանում ընդհանուրից ընտրել առավել զրավիչ տուրիստական վայրերը և դրանց միջև էլ կատարվում է երթուղու օպտիմացումը: Կոմիվոյաժորի խնդրում օպտիմալ երթուղին կառուցվում է պարտադիր կետերի միջև, իսկ մեր խնդրում՝ «օպտիմալ» կետերի միջև:

3. Կառուցված խնդրում օպտիմացվում է ոչ միայն տուրիստական վայրերի միջև երթուղին, ինչպես կոմիվոյաժորի խնդրում, այլև նրանցում անցկացրած ժամանակը:

4. Մի տուրիստական վայրից մյուսն անցման ծախսերի հետ միասին հաշվարկվում է նաև հասույթը այդ անցումներից և նրանցում անցկացրած ժամանակը:

5. Վերջապես շահույթի ինտենսիվության չափանիշի հետ հնարավոր է ցույց տալ և սևեռել տարբեր ուղերթների միջև ժամանակը (փոխադրամիջոցի պատրաստման և զբոսաշրջիկների քանակի սխեմայի կազմման ժամանակը), որը կախված չէ երթուղուց:

Այս դեպքում մարդատար երթուղիների օպտիմալ մոդելը կունենա հետևյալ տեսքը.

$$I = \frac{\sum_{i=1}^m d_i(t_i) \cdot y_i + \sum_{i=1}^m \sum_{j=1}^m (d_{ij} - c_{ij}) \cdot x_{ij}}{\sum_{i=1}^m t_i + \sum_{i=1}^m \sum_{j=1}^m t_{ij} x_{ij} + a} \Rightarrow \max_{\{y_i\}, \{x_{ij}\}, \{t_i\}} \quad (5)$$

$$\sum_{i=1}^m x_{ij} = y_j, \quad j =$$

$$\overline{1, m}, \quad (6)$$

$$\sum_{j=1}^m x_{ij} = y_i, \quad i =$$

$$\overline{1, m}, \quad (7)$$

$$u_i - u_j + (\sum_{i=1}^m y_i) \cdot x_{ij} \leq (\sum_{i=1}^m y_i) - 1, \quad i, j = \overline{1, m}, \quad (8)$$

$$\begin{aligned} t_i &\geq 1, i \\ &= \overline{1, m} \end{aligned} \quad (9)$$

$$\begin{aligned} y_k &= \\ 1, k &- \text{բազային տուրիստական վայրը } (k \in \overline{1, m}), \end{aligned} \quad (10)$$

որտեղ ղեկավարման պարամետրերն են.

$$y_j = \begin{cases} 1, & \text{թե } i \text{ տուրիստական վայրը եղբարված է երթուղու մեջ } i = \overline{1, m} \\ 0 & \text{հակառակ դեպքում} \end{cases} \quad (11)$$

$t_i -$ ն $i -$ րդ տուրիստական վայրում անցկացրած ժամանակը, $i \in \overline{1, m}$

$$x_{ij} = \begin{cases} 1, & \text{եթե գյուղություն ունի անցում i տուրիստական վայրից j ,} \\ 0, & \text{հակառակ դեպքում} \end{cases} \quad (12)$$

$u_i, u_j, i, j = \overline{1, m}$ - իրական թվեր են, որոնց արժեքը կորոշվի խնդրի լուծման արդյունքում.

m - երթուղու մեջ մտնող տուրիստական վայրերի ընդհանուր թիվը

t_{ij} - i տուրիստական վայրից j անցման ժամանակը

c_{ij} - i տուրիստական վայրից j անցման ծախսը

d_{ij} - այն գումարը, որը տուրիստը համաձայն է վճարել i տուրիստական վայրից j անցնելու համար

a - ուղերթների միջև ընկած ժամանակը, այսինքն՝ փոխադրամիջոցը հաջորդ ուղերթին նախապատրաստելու ժամանակը (տեխզննում, վերանորոգում, մաքրում, վառելիքի բեռնում և այլն): Կախված երթուղու տևողությունից a -ն կարող է լինել 1-3 ժամ

$d_i(t_i)$ - այն գումարը, որը տուրիստները պատրաստ են վճարել i տուրիստական վայրում t_i ժամ մնալու համար: Այն կախված է տվյալ տուրիստական վայրի գրավչությունից:

(5) նպատակային ֆունկցիան՝ հասույթի գումարից հանվում է մի տուրիստական վայրից մյուսն անցման վրա կատարված ծախսերի գումարը:

Արդյունքում ընդհանրացվում է տուրիստական վայրում անցկացրած ժամանակը, անցումները (ստանալով օպտիմալ տևողություն երթուղու համար) և ուղերթների միջև դադարները (այս հաստատունի ընդունած արժեքից է կախված իրականում ամբողջ օպտիմալ պարամետրերի մեծությունների ղեկավարումը:

(6) և (7) սահմանափակումները ապահովում են ճիշտ 1 անգամյա մուտք և ելք յուրաքանչյուր ընտրված նավահանգիստ:

Բացառությամբ կոմպլոյաժորի խնդրի մոդելի (2) և (3) միանման սահմանափակումների (6) և (7) սահմանափակումների աջ մասերը ոչ միշտ են հավասար 1, այլ միայն երթուղում ընտրված տուրիստական վայրերի համար:

(8) սահմանափակումը ապահովում է երթուղիների փակությունը, նրանցում ներքին շրջապտույտների բացակայությունը և որոշում է օպտիմալ երթուղու մեջ մտնող տուրիստական վայրերի լավագույն թիվը $\sum_{i=1}^m y_i \leq m$:

(9) սահմանափակումը՝ 1 օրում երթուղու նվազագույն տևողությունը:

(10) սահմանափակումը ապահովում է k բազային տուրիստական վայրի պարտադիր առկայությունը երթուղում:

Այսպիսով կառուցված (5) - (12) խնդիրը հետաքրքրություն է ներկայացնում ինչպես մաթեմատիկական տեսանկյունից՝ ընդհանրացնելով կոմիվոյաժորի դասական խնդիրը տուրիստական վայրերի ընտրության հնարավորության դեպքում, այնպես էլ տնտեսական տեսանկյունից թույլ է տալիս համապատասխանաբար շահույթի ինտենսիվության չափանիշի և ֆինանսական ու ժամանակային գործոնների սինթեզավորման միջոցով գտնել օպտիմալ երթուղի:¹

¹Экономика и эксплуатация морского транспорта. М.:ЦРИА «Морфлот», 1981. – С. 98-101.

ԱՐՏԱՀԱՆՍԱՆ ԽԹԱՆՍԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՍԲ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Ղազարյան Տիգրան

*ՀԴՏՀ, ֆինանսական ֆակուլտետ, մագ.2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ տ.գ.թ., դոց. Ա. Ներսիսյան*

Արտահանման ծավալների աճը և արտահանման դիվերսիֆիկացված կառուցվածքի ապահովումը կարևորվում է երկրի տնտեսական և քաղաքական անվտանգության տեսանկյունից և թույլ է տալիս նվազագույնի հասցնել երկրի տնտեսական հավասարակշռության վրա միջազգային տնտեսական հնարավոր տատանումների անմիջական ազդեցությունը: Համաշխարհային տնտեսական ճգնաժամի արդյունքում ՀՀ-ում արձանագրված տնտեսական անկումը ընդգծեց արտահանման խթանման և դիվերսիֆիկացիայի խորացման կարևորությունը: ՀՀ տնտեսության իրական հատվածը անուղղակիորեն կրեց ճգնաժամի բացասական հետևանքները: միջազգային շուկաներում մի շարք ապրանքների նկատմամբ պահանջարկի կտրուկ նվազեցումը ՀՀ արտահանման թույլ դիվերսիֆիկացիայի պայմաններում էապես կրճատեց արտահանման ծավալները:

Ներկայումս արտահանման ծավալների խթանումը, ինպես նաև արտահանման կառուցվածքի դիվերսիֆիկացումը համարվում են ՀՀ կառավարության գերակա ուղղություններից մեկը, և այդ ուղղությամբ մշակվել և իրականացվում է արտահանելի հատվածի ընդլայնման ակտիվ արդյունա-բերական քաղաքականություն, որը ենթադրում է արտահանման խթանման ուղղությամբ ինչպես ընդհանուր բնույթի միջոցառումների (օրենսդրական, ենթակառուցվածքային, մարքեթինգային և այլն), այնպես էլ հատուկ (ֆինանսական) միջոցառումների իրականացում: Արտահանման խթանման ֆինանսական ուղղությունները հիմնականում հանգում են արտահանման վարկավորմանը և արտահանման ռիսկերի ապահովագրությանը:¹

Հայաստանի Հանրապետությունում արտահանման խթանման ուղղությամբ վերոնշյալ ուղղություններով ֆինանսական ծառայություններ են մատուցվում «ՓՄՁ գարգացման ազգային կենտրոնի», «ՓՄՁ Ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպության, Համահայկական բանկի և որոշ առևտրային բանկերի կողմից: Արտահանման խթանման գծով ապահովագրական

¹ ԵՄ խորհրդատվական խումբ Հայաստանում, «Քաղաքականության խորհրդատվական փաստաթուղթ: Ոլորտ. ֆինանսական գործիքների դերը առևտրի խթանման կազմակերպություն ստեղծելու գործում», հունիս 2011, էջ 7

ծառայությունների մատուցման գործառնություն է օժտված նաև «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» նորաստեղծ ապահովագրական ընկերությունը:

«ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի» կողմից փոքր և միջին ձեռնարկություններին ֆինանսական աջակցություն է տրամադրվում վարկային երաշխավորությունների միջոցով: Այս ծրագրի շրջանակներում կենտրոնի գործընկեր բանկերի վարկառուներին տրամադրվում են 15 միլիոն դրամը չգերազանցող, վարկի գումարի մինչև 70 տոկոսի չափով և հինգ տարի ժամկետով վարկային երաշխավորություններ: Ընդ որում, պետք է նշել, որ տրամադրված երաշխավորությունների թիվը 2013թ.-ի դրությամբ կազմել է 243, մինչդեռ 2011թ.-ին տրվել էր 28 վարկային երաշխավորություն:¹

«ՓՄՁ Ներդրումներ» ՈւՎԿ-ն գործում է ՓՄՁ պետական աջակցության ծրագրի շրջանակներում և ապահովում է արտահանման պոտենցիալ ունեցող փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսական աջակցությունը, որն իրականացվում է ձեռնարկատիրական վարկերի տրամադրման և սեփական կապիտալի ֆինանսավորման եղանակներով:

«Համահայկական բանկը» հիմնականում միջազգային ֆինանսական կառույցներից ներգրավված միջոցների հաշվին ֆինանսավորում է երկարաժամկետ նախագծեր, որոնք հատկապես ունեն ներմուծմանը փոխարինող արտադրության կազմակերպման և արտահանող ձեռնարկությունների մրցունակության բարձրացման նպատակ:²

Արտահանման խթանման ոլորտում կատարվել են նաև որոշակի քայլեր ապահովագրական ծառայությունների ներդրման հետ կապված: 2013թ.-ի հոկտեմբերի 17-ին ՀՀ ԿԲ խորհրդի կողմից հիմնադրվել է «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ապահովագրական ընկերությունը, որը գործունեություն է իրականացնելու (ոչ կյանքի ապահովագրության) «վարկի ապահովագրություն» դասի լիցենզիայի հիման վրա: Ընկերության կողմից կապահովագրվեն արտահանող ընկերության և այդ ընկերությանը ֆինանսավորող բանկի ռիսկերը, որի վերջնական նպատակը արտահանման ծավալների ավելացման խթանումն է:³

Արտահանման խթանման ֆինանսական ծառայություններ մատուցող ֆինանսական ինստիտուտների թվին կարելի է դասել նաև մի քանի առևտրային բանկերի, որոնք իրենց միջոցներով կամ միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված

¹ http://www.smednc.am/hy/about/hayastani_pmdzzaki_hashvetvutyunner.html

² <http://panarmenianbank.am/?id=313&lang=am>

³ <http://insurance.am/insurance-news/75-fright/2548-export-ins-company.html#.UteTmtJdWkm>

ֆինանսական միջոցներով արտահանման ներուժ ունեցող փոքր և միջին ձեռնարկություններին տրամադրում են նպատակային վարկեր, արտահանման բանկային երաշխիքներ, ինչպես նաև փաստաթղթային ակրեդիտիվներ:

Համահայկական բանկի կողմից առաջարկվող վարկերը հիմնականում նախատեսված են արտահանման ներուժ ունեցող խոշոր ձեռնարկությունների համար, ինչը կարելի է եզրակացնել վարկավորման պայմաններից. վարկի գումարը՝ 0.5 – 2 մլն դոլարին համարժեք դրամ է, ժամկետը՝ 4-10 տարի, իսկ տոկոսադրույքը՝ 12 – 14%: Փոքր և միջին ձեռնարկությունների համար առավել համեմատելի են «ՓՄՁ Ներդրումներ» ՈւՎԿ-ի և առևտրային բանկերի կողմից առաջարկվող նպատակային վարկավորման պայմանները: Վարկային կազմակերպության կողմից վարկերը տրվում են մինչև 5 տարի ժամկետով և 12% տարեկան տոկոսադրույքով: Ինչ վերաբերում է նշված երեք առևտրային բանկերի կողմից առաջարկվող նպատակային վարկերին, ապա դրանք պակաս մրցունակ են վարկային կազմակերպության կողմից տրվող վարկերից. վերջիններիս կողմից առաջարկվող վարկերի միջին տոկոսադրույքը կազմում է 15-16%, իսկ միջին ժամկետը՝ 1.5-2 տարի: Սա է հիմնական պատճառը, որ «ՓՄՁ Ներդրումներ» ՈւՎԿ-ի կողմից հաճախորդներին տրված վարկերի ծավալը կտրուկ աճել է՝ 2010թ.-ին 802,433 հազ. դրամից 2013թ.-ին հասնելով 4, 716, 052 հազ. դրամի:¹

Համառոտ ներկայացնենք նաև արտահանման վարկերի ապահովագրության միջազգային փորձը և ՀՀ-ում դրա ներդրման հնարավորությունները: Արտահանման ապահովագրության էությունը կայանում է նրանում, որ ապահովագրական ընկերությունն իր վրա է վերցնում հնարավոր ռիսկի մի մասը, այսինքն՝ ապահովագրվող գործարքի վերջնական հնարավոր վնասը: Ընկերությունը վաճառում է ապահովագրական պոլիս ապահովագրված վարկի որոշակի գումարի համար՝ սահմանելով վարկավորման ժամկետը և ռիսկի մեծությունը (սովորաբար 60-85%), որը կախված է ապահովագրության գործարքի չափից, վարկի ձևից, ժամկետից, արտահանողի և վաճառողի դրությունից, ինչպես նաև ներմուծող երկրի տնտեսական իրադրությունից: Այս գործոններից կախված էլ տատանվում է ապահովագրական հավելավճարի տոկոսադրույքը՝ որպես կանոն 0.2-10% ապահովագրական գումարի նկատմամբ: Ապահովագրավճարի մեծության սահմանման ժամանակ հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոնները. վարկի ձևը և ընդհանուր ժամկետը, սկզբնական վճարման մեծությունը, վարկի մասնակի մարումների

¹ http://test.smeinvest.am/datas/media/annual_2012.pdf, էջ 25

Ժամկետները, վարկի հիմքում ընկած մատակարարման կամ ծառայությունների մատուցման օբյեկտը: Ներկայումս, արտահանման վարկերի ապահովագրական զարգացած հարաբերություններ ունեցող երկրներում ապահովագրական ընկերության և արտահանողի համագործակցությունը երկարաժամկետ բնույթ է կրում: Այս դեպքում ապահովագրողի կողմից տրվում է ընդհանուր պոլիս, որը ապահովագրական ծածկույթ է ապահովում այդ ժամանակահատվածում կնքված բոլոր գործարքների համար: Նմանատիպ ռիսկերի ապահովագրություն են իրականացնում «Արտահանման վարկերի երաշխիքների դեպարտամենտը», «Ինդեմնիթի» ընկերությունը, վերջին տարիներին նաև «Լոյդ» կորպորացիան Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում՝ «Յերմես», Ֆրանսիայում՝ «Կոֆայս» ապահովագրական խոշոր ընկերությունները:²

Մեր կարծիքով, արտահանման վարկերի ապահովագրմամբ զբաղվող օտարերկրյա խոշոր կազմակերպությունների փորձը արդյունավետ կարող է ներդրվել և կիրառվել մեր երկրում՝ հաշվի առնելով հայաստանյան ապահովագրական շուկայի աստիճանական զարգացման միտումները:

Ինչ վերաբերում է առևտրային բանկերի կողմից մատուցվող արտահանման երաշխիքային և փաստաթղթային ծառայություններին, ապա պետք է նշել, որ հայաստանյան գրեթե բոլոր բանկերը տրամադրում են բանկային երաշխիքներ և արտահանման փաստաթղթային ակրեդիտիվներ, այնուամենայնիվ, դրանք այդքան էլ կիրառելի չեն՝ պայմանավորված տրամադրման բարձր սակագներով: ՀՀ-ում բանկային երաշխիքի տրամադրման սակագինը միջինում կազմում է երաշխիքի 0.37%-ը (համեմատության համար նշենք, որ Վրաստանում այն հավասար է մոտ 0.25%, իսկ Ադրբեյջանում՝ 0.27%-ի), իսկ արտահանման փաստաթղթային ակրեդիտիվի բացման միանվագ վճարը կազմում է 0.43% (Վրաստանում՝ 0.2%, Ադրբեյջանում՝ 0.35%): Ակնհայտ է, որ մեր երկրում այս գործիքների սակագները համեմատաբար բարձր են, ինչն էլ ևս մեկ խոչընդոտ է հանդիսանում արտահանման խթանման համար:

Այսպիսով, ամփոփելով մատուցվող ֆինանսական նպատակային ծառայությունների ուսումնասիրությունը, կարելի է եզրակացնել, որ

¹ Ширай В. “Мировая экономика и международные экономические отношения” , учебное пособие, изд-во “Дашков и К⁰”, Москва 2003г., стр. 173

² ԵՄ խորհրդատվական խումբ Հայաստանում, «Քաղաքականության խորհրդատվական փաստաթուղթ: Ոլորտ. Ֆինանսական գործիքների դերը առևտրի խթանման կազմակերպություն ստեղծելու գործում», հուլիս 2011, էջ 9-11:

պետական աջակցության շրջանակներում ձևավորված վարկատու կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունները համեմատաբար բարենպաստ պայմաններ են ստեղծում շահագրգիռ տնտեսավարող սուբյեկտների համար: Իհարկե այս կառույցների գործունեության դեռևս կարճատև ժամանակաշրջանով պայմանավորված՝ դժվար է խոսել էական արդյունքների մասին, և պետք է ենթադրել, որ դրանց գործունեության արդյունքները ի հայտ կգան որոշ ժամանակ անց:

Ինչ վերաբերում է առևտրային բանկերին, ապա պետք է նշել, որ չնայած նրանց կողմից առաջարկվող վարկավորման մի շարք տարբերակներին, բավականին քիչ են կոնկրետ արտահանման խթանման նպատակային վարկավորման առաջարկները, իսկ առաջարկվող վարկերի ֆինանսավորման աղբյուրները հիմնականում ՄՖԿ-երից ներգրավված միջոցներն են: Ուստի, մեր կարծիքով, առավել արդյունավետ կլինի, եթե ավելի մեծ թվով առևտրային բանկեր ներգրավվեն նմանատիպ նպատակային ծրագրերում, ինչն էլ մրցակցության արդյունքում կհանգեցնի վարկավորման տոկոսադրույքների իջեցմանը:

Ինչ վերաբերում է արտահանման խթանման ապահովագրական ուղղությանը, պետք է նշել, որ այս ուղղության ներդրումը բավականին նորարարական մոտեցում է և համահունչ է կառավարության որոշեգրած արտահանմանն ուղղված արդյունաբերական ռազմավարությանը: Հաշվի առնելով արտահանման ռիսկերի ապահովագրության օտարերկրյա հաջող փորձը՝ միանշանակ պետք է դրական համարել նաև մեր երկրում նմանատիպ կառույցի ստեղծումը, որը, մեր կարծիքով, ապահովագրական շուկայի ընդհանուր զարգացման և ապահովագրական նոր գործիքների ներդրման պայմաններում կգործի արդյունավետ և մեծապես կնպաստի արտահանման ծավալների աճին:

ՎԱՐԿԱՆՇՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՍԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

Միրզոյան Նարինե

*ԵՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ, ասպիրանտ
Գիտական ղեկավար՝ տեխ.գ.թ. դոց. Յ. Զաքոյան*

Բազելյան կոմիտեն¹ նշում է, որ առևտրային բանկերը (այսուհետ բանկեր) պետք է կարողանան ցուցադրել, որ իրենց ներքին վարկանշման մոդելները ապահով են և անփոփոխ՝ ժամանակի ընթացքում: Բազելյան կոմիտեն խորհուրդ է տալիս օգտագործել վարկային ռիսկերի հաշվարկման երկու մոտեցում՝ ստանդարտիզացված, և մոտեցում՝ հիմնված ներքին վարկանշային համակարգի վրա: Ստանդարտիզացված մոտեցումը իրենից ներկայացնում է վարկանշային համեմատ վարկային ռիսկի ավելի դյուրին գնահատման մոտեցում: Այն իրենից ներկայացնում է ռիսկը կշռելու դիֆերենցված համակարգ և չի պարունակում մեծամասշտաբ հաշվարկներ:

Բանկերում ավելի ու ավելի մեծ դեր է տրվում վարկային ռիսկի կառավարման գործընթացին և հետևաբար վարկանշում հասկացությանը: Գոյություն ունեն ներքին վարկանշման համակարգերի մի քանի տեսակներ.

- համակարգ՝ հիմնված փոխառու-իրավաբանական անձի վարկունակության վերլուծության վրա:

- համակարգ՝ հիմնված ակտիվների գործառնությունների կոնկրետ գործիքների վրա:

- համակարգեր, որոնք ներառում են և՛ փոխառու-իրավաբանական անձի վարկունակության վերլուծություն, և՛ ակտիվների գործառնությունների գործիքների վերլուծություն, ինչը, բնականաբար, ավելի համապարփակ արդյունք է ներկայացնում, թեպետև ավելի մեծածավալ վերլուծություն է պահանջում:

Վարկանշումը կախված է բազմաթիվ գործոններից. գործնականում վերլուծվող ցուցանիշները հիմնված են նախորդ ժամանակահատվածի կամ որևիցե հաշվետու ժամանակահատվածի տվյալների վրա, ինչը հաճախ ապատեղեկատվության աղբյուր է դառնում, միևնույն ժամանակ դժվարություն են պարունակում այնպիսի գործոնների քանակական գնահատականները, ինչպիսիք են

¹ The New Basel Capital Accord, Basel Committee, 2001. p.32

փոխառու-իրավաբանական անձի հեղինակությունը, կառավարման որակը և այլն:

Գոյություն ունեն փոխառու-իրավաբանական անձանց վարկանշման բազմաթիվ մեթոդներ, սակայն չկա որևիցե համակիրառելի մոդել, որը կտրամադրի համապարփակ, օբյեկտիվ վարկանիշ և թույլ կտա գնահատել փոխառու-իրավաբանական անձանց սնանկության հավանականության ցուցանիշը, տրամադրվող վարկի գումարի մեծությունը, կգնահատի ֆինանսական վիճակի վերլուծության ժամանակ պահուստների ստեղծան պատակով վարկային պորտֆելի որակը և այլն: Յուրաքանչյուր բանկ կարող է ընտրել իր մեթոդը (օրինակ՝ սուբյեկտիվորեն ընտրել վերլուծվող ֆինանսական ցուցանիշների խումբ և այլն), և յուրաքանչյուր փոխառու-իրավաբանական անձ կարող է ունենալ տարբեր վարկանիշ տարբեր բանկերում, ինչը գործնական անհարմարություն է պատճառում ինչպես փոխառու-իրավաբանական անձանց, այնպես էլ բանկերին, ինչպես նաև սուբյեկտիվության դրսևորման մեծ դաշտ է ստեղծում վարկ տրամադրող մասնագետին:

Մասնագիտական գրականության մեջ շատ հեղինակներ անդրադարձել են վարկանշմանը, օրինակ՝ Շատալովա Ե.¹ առաջարկում է վարկանշման մոդել, որտեղ հիմք պետք է ընդունել ֆինանսական ցուցանիշները, բիզնես ռիսկի ցուցանիշները և վարկային պատմությունը: Հեղինակը առաջարկում է ֆինանսական ցուցանիշների մոտավոր շրջանակ՝

- կապիտալացում
- կապիտալի դինամիկա
- ռեսուրսային բազա
- ակտիվներ
- վարկային ռիսկերի կենտրոնացում
- իրացվելիություն
- շահութաբերություն

Բիզնես-ռիսկը որոշվում է երեք խումբ ցուցանիշների հիման վրա՝ կառավարման ռիսկ, շուկայում զբաղեցրած դիրք և գործարար հեղինակություն: Բիզնես-ռիսկի ցուցանիշների գնահատականը դուրս է բերվում քանակական, որակական և փորձագիտական գնահատման հիման վրա հինգ բալանի սանդղակով:

Վարկային պատմության գնահատումը իրենից ներկայացնում է փոխառու-իրավաբանական անձի կողմից անցյալում վարկային պարտավորությունները ժամանակին կատարելու վերաբերյալ

¹ Шаталова Е., Шаталов А., Оценка кредитоспособности заемщиков в банковском риск-менеджменте, Москва, 2011, 23 с., 40 с.

տեղեկատվության վերլուծություն: Վարկային պատմության ազդեցությունը վարկանիշի վրա գնահատվում է փորձագիտական եղանակով:

Ֆինանսական ռիսկի, բիզնես ռիսկի և վարկային պատմության վերլուծության ցուցանիշները վերլուծելուց հետո Շատալովա Ե. սահմանում է վարկանիշ “Ա” –ից “Ե”, համապատասխանաբար հուսալիության բարձր մակարդակից մինչև բացարձակ անհուսալիություն, կիրառվում են նաև “Ա” – ից մինչև “Դ” միջանկյալ արժեքներ. օրինակ՝ “Ա+”, “Ա” և “Ա-”, որից հետո հեղինակները առաջարկում են պարբերական մոնիտորինգ: Սակայն, որպեսզի Շատալովա Ե.-ի առաջարկած մոդելով ստացված վարկանիշը ավելի ամբողջական լինի, պետք է ներառել նաև տվյալ ճյուղի, տվյալ ճյուղում փոխառու-իրավաբանական անձի դիրքի և մրցունակության վերլուծության ցուցանիշների բալային գնահատականները: Բացի այդ, միմիայն փոխառու-իրավաբանական անձի վճարունակությունը գնահատելով, չի կարելի դատել տրամադրվող վարկային ռեսուրսի անվտանգության մասին, պետք է վերլուծել նաև վարկային ռիսկերը և վարկերի ապահովածությունը: Շատալովա Ե. վարկանիշ շնորհելուց հետո համապատասխանեցնում է վարկային ռիսկի չափը տրված վարկանիշին, այսինքն, եթե մեթոդաբանության շրջանակներում շնորհել է “Ա+” վարկանիշը, հետևաբար վարկային ռիսկը միմիայն է, սակայն նման մոտեցումը ոչ միշտ է իրեն արդարացնում, քանի որ վարկանիշը տրվում է մի շարք ցուցանիշների համագումար բալային գնահատականի հիման վրա:

Մասնագիտական գրականության մեջ այլ հեղինակներ ¹ առաջարկում են վարկանիշ շնորհելու համար կառուցել մատրիցներ, որտեղ կհամադրվեն ֆինանսական ցուցանիշները և ռիսկերի ապահովածությունը և, կախված այդ երկու կատեգորիաների արժեքների գումարի միջակայքից, շնորհում են վարկանիշ. օրինակ՝ 10-15 բալի դեպքում շնորհվում է “Ա”, իսկ 15-20 բալի դեպքում “Ա+” վարկանիշը և այլն: Սակայն, բանկի կողմից վարկանշման նման մոդելի ընտրությունը կախված է մի շարք խնդիրների հետ, քանի որ տվյալ մոդելը պարունակում է թերություններ. օրինակ՝ չկա հստակ սահմանված միջակայքերի և վերջիններիս համապատասխանեցված վարկանիշների սանդղակ, չկան սկզբունքներ, ըստ որոնց կարելի է որոշել յուրաքանչյուր միջակայքի բալերի ինտերվալը, ինչպես նաև հեղինակների կողմից տրված չեն ռիսկերի ապահովության և ֆինանսական ցուցանիշների հստակ խմբեր:

¹ Вишняков И. Методы и модели оценки кредитоспособности заемщиков. СПб. 1998. 130-132с.

Մեկ այլ հեղինակ՝ Ենդովիցկի Դ.¹, վարկանշման իր մոդելը առաջարկելիս չի նշում ֆինանսական ցուցանիշների կոնկրետ նախընտրելի խումբ՝ թողնելով վերջիններիս ընտրությունը բանկերի համապատասխան մասնագետների հայեցողությանը, ինչն իր վարկանշման մոդելը բավականին սուբյեկտիվ է դարձնում մեկնաբանման տեսանկյունից, քանի որ բանկերի համապատասխան մասնագետները, կախված իրենց նախընտրություններից, կարող են իրականությանը չհամապատասխանող վարկանիշ տրամադրել:

Ինչպես գիտենք, վարկանշումը կատարվում է որոշակի ժամանակահատվածի համար և պահանջում է մոնիտորինգ, սակայն, վարկանիշը պետք է ունենա նաև որոշակի տեղեկատվություն ապագայի վերաբերյալ, թեպետ արվում է անցյալ հաշվետու ժամանակահատվածի ցուցանիշների հիման վրա: Այդ խնդիրը լուծելու համար Լավրուշին Օ.² առաջարկում է ֆինանսական կազմակերպությանը վարկանիշ տրամադրելուց բացի կազմել նաև վարկանիշի փոփոխության մատրից, որը կգնահատի ժամանակի ընթացքում վարկանիշի նշանակության փոփոխության հավանականությունը. մատրիցի տողերը իրենցից ներկայացնում են փոխառու-իրավաբանական անձի տվյալ ժամանակահատվածի վարկանիշը, սյուները՝ կանխատեսվող վարկանիշը, իսկ մատրիցի տողերի և սյուների հատման կետերը ցույց են տալիս վարկանիշի տեղափոխության հավանականությունը. օրինակ՝ “Ա+” վարկանիշ ունեցող փոխառու-իրավաբանական անձի “Բ-” վարկանիշ տեղափոխվելու հավանականությունը տոկոսներով, ինչպես նաև սնանկության հավանականությունը, բնական է, որ միևնույն վարկանիշ ունեցող փոխառու-իրավաբանական անձիք կունենան սնանկության միևնույն հավանականությունը տվյալ մատրիցի շրջանակներում: Նման մատրիցի հիմք է ընդունվում նախորդ ժամանակահատվածների տարբեր վարկանիշներով փոխառու-իրավաբանական անձանց սնանկության վերաբերյալ տեղեկատվությունը: Սակայն, նման մատրից կազմելու համար անհրաժեշտ է ստույգ տեղեկատվություն առանց ընդհատման նախորդ առնվազն երեք հաշվետու ժամանակահատվածների վերաբերյալ:

Այսպիսով, վերլուծելով մասնագիտական գրականությունը վարկանշման վերաբերյալ, պարզ դարձավ, որ գոյություն ունեն տարբեր հեղինակների կողմից մշակված մոդելներ, սակայն, նրանցից յուրաքանչյուրը ունի իր թերություններն ու առավելությունները, և

¹ Ендовицкий Д., Бочарова И., Анализ и оценка кредитоспособности заемщика. Москва, 2005. 50с., 53с.

² Лаврушин О., Афанасьева О., Корниенко С., Банковское дело: Современная система кредитования. Москва 2007. 50-54с.

առայժմ չկա համապարփակ կիրառելի մոդել: Հետևաբար, վարկանշման որևիցե նոր մոդելի անհրաժեշտություն է առաջանում, որը կշտկի առկա թերությունները և, շնորհիված վարկանիշի միջոցով, ավելի ընդլայնված տեղեկատվություն կտրամադրի փոխառու-իրավաբանական անձանց մասին:

Հաշվի առնելով մասնագիտական գրականության հեղինակների կողմից առաջարկած վարկանշման մոդելների թերությունները՝ փորձ է արվում ստանալ մի մոդել, որը կներառի փոխառու-իրավաբանական անձի «ֆինանսական վիճակի ցուցանիշների», «փորձագիտական գնահատականի» և «լրացուցիչ ռիսկերի» գնահատականի ցուցանիշների վերջնական բալային գնահատականը և ներքին վարկանիշների համապատասխանեցված սանդղակը:

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՍԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մխիթարյան Ժիրայր

*ԵՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ, մագ. 2-րդ կուրս
Գիտական դեկավար՝ տ.գ.դ. պրոֆ. Ա. Առաքելյան*

Տրվում է Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների ազդեցության համեմատական վերլուծությունը՝ հիմնված Սեյնթ Լուիսի մոդելի դրույթների վրա: Սեյնթ Լուիսի մոդելը (St. Louis Model) ներկայացնում է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) վրա պետական ծախսերի և փողի առաջարկի ազդեցության համեմատական վերլուծությունը: Մասնավորապես, այս մոդելի օգնությամբ կարելի է պարզել, թե որոշակի ժամանակահատվածում տնտեսության վրա ավելի մեծ է դրամավարկային, թե հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը: Սողելում, որպես էկզոգեն փոփոխականներ, ներառված են պետական ծախսերը և փողի առաջարկը, որոնցից յուրաքանչյուրին համապատասխանող դինամիկ և ընդհանուր բազմապատկիչների որոշման համար իրականացվել է սիմուլացում: Պարզվել է, որ պետական ծախսերի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա ավելի մեծ է, քան փողի առաջարկինը:

Ներածություն: Աշխատանքը իրականացնելու համար ուսումնասիրվել են այս թեմայի շրջանակներում կատարված տարբեր հետազոտություններ¹: Որպես հիմք է ընդունվել Լեոնելի ու Կառլսոնի և Պինդակի աշխատանքներում ներկայացված Սեյնթ Լուիսի մոդելը: Վերջինիս դրույթները կիրառվել են ՀՀ տնտեսության նկատմամբ:

¹ **A. Leonall, J. Jordan.** Monetary and fiscal actions: A test of their relative importance in economic stabilization//Federal Reserve Bank of St. Louis Review. -1968. -50. -P. 11-24. **A. Leonall, K. Carlson.** A monetarist model for economic stabilization//Federal Reserve Bank of St. Louis Review. -1970. -52. -P. 7-25. **B. Dallas, D. Thornton.** Polynomial distributed lags and the St. Louis equation// Federal Reserve Bank of St. Louis Review. -1983. -65. -P. 13-25. **B. McCallum.** Monetary versus Fiscal Policy Effects: A Review of the Debate. -Totowa, NJ, 1986. **C. Keith.** Does the St. Louis equation now believe in fiscal policy?//Federal Bank of St. Louis Review. -1978. -60. -P. 13-19. **R. Hafer.** The role of fiscal policy in the St. Louis equation//Federal Reserve Bank of St. Louis Review. -1982. -59. -P. 17-22. **R. Pindyck, D. Rubinfeld.** Econometric models and economic forecasts//McGraw-Hill international editions: Economics series. -New York, 1998. -P. 423-424.

Մոդելը գնահատելու համար օգտագործվել են ՀՀ ԱՎԾ-ի և ՀՀ ԿԲ-ի վիճակագրական տվյալների հենքերը¹:

Հիմնական մոդելը: Նշանակենք՝

ΔY_t -ով՝ ՀՆԱ-ի փոփոխությունը ժամանակի t -րդ պահին,

ΔM_t -ով՝ փողի առաջարկի փոփոխությունը ժամանակի t -րդ պահին,

ΔG_t -ով՝ պետական ծախսերի փոփոխությունը ժամանակի t -րդ պահին:

Այսպիսով, դիտարկենք հետևյալ հավասարումը.

$$\begin{aligned} \frac{\Delta \hat{Y}_t}{Y_t} &= C + m_0 \frac{\Delta M_t}{M_t} + m_1 \frac{\Delta M_{t-1}}{M_{t-1}} + m_2 \frac{\Delta M_{t-2}}{M_{t-2}} + m_3 \frac{\Delta M_{t-3}}{M_{t-3}} + m_4 \frac{\Delta M_{t-4}}{M_{t-4}} + g_0 \frac{\Delta G_t}{G_t} + \\ &\quad + g_1 \frac{\Delta G_{t-1}}{G_{t-1}} + g_2 \frac{\Delta G_{t-2}}{G_{t-2}} + g_3 \frac{\Delta G_{t-3}}{G_{t-3}} + g_4 \frac{\Delta G_{t-4}}{G_{t-4}}, \\ \frac{\Delta \hat{Y}_t}{Y_t} &= C + \sum_{i=0}^4 m_i \frac{\Delta M_{t-i}}{M_{t-i}} + \sum_{i=0}^4 g_i \frac{\Delta G_{t-i}}{G_{t-i}} : \end{aligned}$$

Պինդակի աշխատանքում ԱՄՆ տնտեսության համար (1) հավասարման գնահատման արդյունքում ստացված դինամիկ և ընդհանուր բազմապատկիչները՝ համապատասխան t -վիճակագրերով, ներկայացված են աղ. 1-ում:

Ստացված արդյունքը ցույց է տալիս, որ պետական ծախսերը գրեթե զրոյական ազդեցություն ունեն Ամերիկայի Միացյալ Նահանգների ՀՆԱ-ի վրա երկարաժամկետ հատվածում, իսկ փողի առաջարկը, ընդհակառակը, նշանակալի ազդեցություն է գործում վերջինիս վրա: Այս եզրակացությունը համապատասխանում է մոնետարիստական տեսանկյանը, ըստ որի երկարաժամկետ հատվածում գլխավոր դերակատարությունը պատկանում է դրամավարկային քաղաքականությանը:

¹ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայք-էջը. www.armstat.am.
ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայք-էջը. www.cba.am:

Աղյուսակ 1

Բազմապատ կիչ	Գնահատակ ան	տ- վիճակագրի ք- արժեք
C	2,65	3,23
m_0	0,394	2,89
m_1	0,443	5,69
m_2	0,289	2,38
m_3	0,071	0,91
m_4	-0,071	-0,51
$\sum m_i$	1,127	
g_0	0,071	1,97
g_1	0,057	2,27
g_2	0,002	0,07
g_3	-0,053	-2,11
g_4	-0,067	-1,91
$\sum g_i$	0,01	

ՀՀ տնտեսության վրա հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների ազդեցության համեմատական վերլուծություն: Վերոնշյալ վերլուծությունը իրականացվել է ՀՀ տնտեսության համար: (1) հավասարման գնահատման արդյունքում ստացված դինամիկ և ընդհանուր բազմապատկիչները՝ համապատասխան տ-վիճակագրերով, ներկայացված են աղյ. 2-ում՝

Աղյուսակ 2

Բազմապատկիչ	Գնահատական	t-վիճակագրի p-արժեք
C	-0,02	0,823
m_0	0,77	0,244
m_1	-0,566	0,400
m_2	0,292	0,653
m_3	0,362	0,574
m_4	-0,389	0,509
$\sum m_i$	0,469	
g_0	0,699	0,009
g_1	0,543	0,057
g_2	-0,303	0,261
g_3	-0,061	0,839
g_4	0,611	0,024
$\sum g_i$	1,489	$R_{adj}^2 = 0,874$

Ըստ աղյ. 2-ի, պետական ծախսերի ընդհանուր բազմապատկիչը 1,489 է, իսկ փողի առաջարկի ընդհանուր բազմապատկիչը՝ 0,469: Այսպիսով հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա էապես գերազանցում է դրամավարկային քաղաքականության ազդեցությանը:

Աղյ. 2-ում ներկայացված են նաև t-վիճակագրերի p-արժեքները բոլոր 11 գործակցի համար: Դրանցից յուրաքանչյուրի համար ստուգվել է հետևյալ վարկածը.

$$H_0 : b_i = 0,$$

$$H_a : b_i \neq 0, i = 1, 11 :$$

Քանի որ բոլոր p-արժեքները գերազանցում են $\alpha=0.05$ դիտարկված նշանակալիության արժեքը, ուստի 95%

նշանակալիությանը ժխտել գրոյական վարկածը և ընդունել այլընտրանքային վարկածը հնարավոր չէ:

Ստացված արդյունքը շտկելու համար կիրառենք էքսպոնենցիալ ողորկման եղանակը (exponential smoothing method) [7]: եթե տրված է $\{X_t\}_{t=1,2,\dots,n}$ ժամանակային շարքը, ապա էքսպոնենցիալ ողորկման մեթոդը կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևի միջոցով՝

$$Y_t = \beta X_t + (1 - \beta)Y_{t-1},$$

որտեղ β -ն կոչվում է ողորկման գործակից, $\beta \in [0, 1]$:

Իրականացնելով էքսպոնենցիալ ողորկում Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ի, պետական ծախսերի և փողի առաջարկի ժամանակային շարքերի նկատմամբ՝ $\beta = 0,01$ ողորկման գործակիցի դեպքում ստանում ենք հետևյալ արդյունքը՝

Աղյուսակ 3

Բազմապատկիչ	Գնահատական	Է-վիճակագրի p-արժեք
C	-0,022	0,000
m_0	0,056	0,721
m_1	-0,395	0,042
m_2	0,844	0,000
m_3	0,381	0,003
m_4	-0,328	0,001
$\sum m_i$	0,558	
g_0	0,837	0,000
g_1	0,494	0,000
g_2	-0,528	0,000
g_3	-0,363	0,000
g_4	0,175	0,009
$\sum g_i$	0,615	$R_{adj}^2 = 0,999$

Ըստ աղյ. 3-ի էքսպոնենցիալ ողորկման արդյունքում գրեթե բոլոր գործակիցների է-վիճակագիրները դարձել են նշանակալի,

ինչպես նաև հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա կրկին գերազանցում է դրամավարկային քաղաքականության ազդեցությանը:

Եզրակացություն: Հայաստանի Հանրապետության տնտեսության համար Սեյմթ Լուիսի մոդելի գնահատումը ցույց տվեց, որ պետական ծախսերի ընդհանուր բազմապատկիչը էապես գերազանցում է փողի առաջարկի ընդհանուր բազմապատկիչին: Բացահայտվեց, որ Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա հարկաբյուջետային քաղաքականությունը թողնում է նշանակալիորեն ավելի մեծ ազդեցություն, քան դրամավարկային քաղաքականությունը:

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՐՔԵՐԻ ՄՊԵԿՏՐԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մխիթարյան Ժիրայր

ԵՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ, մագ. 2-րդ կուրս

Սարգսյան Մարիամ

ԵՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ, մագ. 2-րդ կուրս

Գիտական ղեկավար՝ տ.գ.դ. պրոֆ. Ա. Առաքելյան

Ներածություն: Ժամանակային շարքերի սպեկտրալ վերլուծությունը լայն կիրառություն է ստացել մակրո- և միկրոտնտեսական հետազոտություններում: Այդ ուղղությամբ առաջին աշխատանքները սկսվել են XX-րդ դարի 60-ական թվականներից: Սկզբնական շրջանում սպեկտրալ վերլուծության մեթոդները կիրառվել են սեզոնային բնույթ կրող հարաբերությունների կարգավորման¹, իսկ այնուհետև նաև տնտեսական տվյալների λ^2 տնտեսական գործոնների միջև կապերի ուսումնասիրության համար³: Տարիների ընթացքում սպեկտրալ վերլուծության կիրառության շրջանակները ընդլայնվեցին և ընդգրկեցին ինչպես միջազգային, այնպես էլ ազգային տնտեսության գործարար պարբերաշրջանների հետազոտման հիմնախնդիրները:

Սույն աշխատանքը նվիրված է ՀՀ գնաճի և փոխարժեքի ժամանակային շարքերի սպեկտրալ վերլուծությանը: Նախ ուսումնասիրվել է ժամանակային շարքերի պարբերականությունը և իրականացվել ժամանակային շարքերի մոտարկում՝ կիրառելով Ֆուրյեի շարքը: Այնուհետև իրականացվել է ժամանակային շարքերի գործնական հարմոնիկ վերլուծություն: Ստացվել են ժամանակային շարքերի կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ցիկլերը:

ՀՀ գնաճի ժամանակային շարքի պարբերությունների որոշումը: Ժամանակային շարքերի վերլուծությունում կարևոր տեղ է զբաղում «թաքնված պարբերությունների» հայտնաբերումը, որի համար լավագույն միջոց է հանդիսանում Շուևտերի պարբերագրի մեթոդը⁴: Այն կիրառվել է ՀՀ գնաճի ժամանակային շարքի նկատմամբ՝ կազմված


¹ Nerlove, M., "Spectral Analysis of Seasonal Adjustment Procedures", *Econometrica*, vol. 32(3), (1964), pp. 241–286.

² Granger, C. W. J., "The Typical Spectral Shape of an Economic Variable", *Econometrica*, vol. 34(1), (1966), pp. 150–161.

³ Granger, C. W. J., "Investigating Casual Relations by Econometric Models and Cross-Spectral Methods", *Econometrica*, vol. 37(3), (1969), pp. 424–438.

⁴ Granger, C. W. J. and M. Hatanaka, "Spectral Analysis of Economic Time Series", Princeton University Press, Princeton, New Jersey (1964).


1996-2013թթ. գնաճի (ՍԳԻ) ամսական տվյալներից: Դիտարկվել են 25 պարբերություններ 212 տվյալների դեպքում, որոնց համար հաշվարկվել են պարբերագրի արժեքները (Գժ. 1):



Գծապատկեր 1. ՀՀ գնաճի ժամանակային շարքի պարբերագրի արժեքները

Գժ. 1-ից երևում է, որ ՀՀ գնաճի ժամանակային շարքը ունեցել է հինգ նշանակալի գագաթներ՝ 8, 11, 16, 19 և 24-րդ պարբերություններում: Գագաթների արժեքները ամփոփելով արտահայտելու համար կիրառվում է հետևյալ բանաձևը՝ $\frac{j\pi}{n} = \frac{2\pi}{r}$, որտեղից՝ $r = \frac{424}{j}$: Այսպիսով ՀՀ գնաճի ժամանակային շարքը ունեցել է 18, 22, 27, 39 և 53 ամսական պարբերություններ:

Վերոնշյալ վերլուծությունը իրականացվել է նաև 2012թ. դեկտեմբերի 31-ից մինչև 2013թ.-ի հոկտեմբերի 1-ը դուրս-դրամ փոխարժեքի օրական տվյալներից կազմված ժամանակային շարքի նկատմամբ: Դիտարկվել են 22 պարբերություններ: Արդյունքները ներկայացված են գժ. 2-ում:



Գծապատկեր 2. ՀՀ դուրս-դրամ փոխարժեքի ժամանակային շարքի պարբերագրի արժեքները

Գծ. 2-ից կարելի է նկատել, որ փոխարժեքի ժամանակային շարքը ունեցել է հինգ նշանակալի գագաթներ՝ 8, 12, 16, 19 և 21-րդ պարբերություններում:

ՀՀ գնաճի ժամանակային շարքի Ֆուրյեի մոտարկումը: Ֆուրյեի շարքը եռանկյունաչափական տեսքով կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևի միջոցով՝

$$x_j = A_0 + \sum_{k=1}^s \left[A_k \sin \frac{2\pi k}{n} j + B_k \cos \frac{2\pi k}{n} j \right], \quad s \leq n/2,$$

որտեղ s -ը x_j -ն գեներացնող գործընթացում պարունակվող պարբերությունների թիվն է, իսկ k -ն՝ առանձին պարբերությունը¹: Օգտագործելով Շուստերի պարբերագրի միջոցով գնաճի ժամանակային շարքի մոդելավորման արդյունքները՝ որոշվել են s -ը և k -ն ($s = 5, k = 1, 5$): Այժմ կարող ենք Ֆուրյեի մոտարկումը կիրառել ՀՀ գնաճի ժամանակային շարքի նկատմամբ: ՓԶՍ-ով իրականացված ռեգրեսիոն վերլուծության հիման վրա ստացվել են հետևյալ արդյունքները (աղյ. 1)՝

Աղյուսակ 1 Ֆուրյեի շարքի մոտարկման հավասարման ռեգրեսիոն վերլուծության արդյունքները

Adjusted R Square	0.316
Std. Error of the Estimate	3.274
F	10.745
Sig.	.000

Ինչպես երևում է աղյ. 1-ից դետերմինացիայի գործակիցը բավական ցածր է (31.6%): Այն բարելավելու համար գնաճի ժամանակային շարքի նկատմամբ իրականացվել է էքսպոնենցիալ ողորկում $\alpha = 0.05$ գործակցի դեպքում, այսուհետև վերաիրականացվել է վերոնշյալ ռեգրեսիոն վերլուծությունը²: Վերջինիս արդյունքները ներկայացված են աղյ. 2-ում:

¹ **Becker, R., Enders, W., Hurn, S.,** “Modeling Inflation and Money Demand Using a Fourier-Series Approximation”, Nonlinear Time Series Analysis of Business Cycles (Contributions to Economic Analysis, Volume 276), Emerald Group Publishing Limited, pp.221-246.

² **Pindyck, R. S. and Rubinfeld D. L.,** “Econometric models and economic forecasts”, McGraw-Hill international editions: Economics series. -New York, 1998, pp. 423-424.

**Աղյուսակ 2 Ֆուրյեի շարքի մոտարկման հավասարման
ռեգրեսիոն վերլուծության արդյունքները էքսպոնենցիալ ողորկված
գնաճի ժամանակային շարքի համար**

Բազմապատկիչ	A_0	A_1	A_2	A_3	A_4	A_5	B_1	B_2	B_3	B_4	B_5
Գնահատական	93.7 4	-	-	-	-	-	-	-	-	-	-
		7.89	8.72	7.74	7.02	6.03	12.4	8.03	5.15	3.00	-1.98
Է-վիճակագրի ք-արժեք	.000	.000	.000	.000	.000	.000	.000	.000	.000	.001	035
Adjusted R Square	0.745										
Std. Error of the Estimate	9.576										
F	62.546										
Sig.	.000										

Ինչպես երևում է աղյ. 2-ից, ողորկման արդյունքում դետերմինացիայի գործակիցը էապես աճել է՝ հասնելով 74.5%-ի: Բոլոր գործակիցների t -վիճակագրերը նշանակալի են:

Ֆուրյեի մոտարկումը իրականացվել է նաև դոլար-դրամ փոխարժեքի ժամանակային շարքի նկատմամբ: Արդյունքները ներկայացված են աղյ. 3-ում:

**Աղյուսակ 3 Ֆուրյեի շարքի մոտարկման հավասարման
ռեգրեսիոն վերլուծության արդյունքները փոխարժեքի ժամանակային
շարքի համար**

Բազմապատկիչ	A_0	A_1	A_2	A_3	A_4	A_5	B_1	B_2	B_3	B_4	B_5
Գնահատական	410. 25					0.69 5					
		2.29	-1.87	-0.46	0.68		-4.71	-0.54	0.44	0.31	1.18
Է-վիճակագրի ք-արժեք	.000	.000	.000	.001	.000	.000	.000	.000	.002	.030	.000
Adjusted R Square	0.888										
Std. Error of the Estimate	1.46114										
F	169.001										
Sig.	.000										

Գծային տրենդով Ֆուրյեի շարքի միագործոն մոտարկման կիրառությունը ՀՀ գնաճի ժամանակային շարքի նկատմամբ: Գծային տրենդով Ֆուրյեի շարքի միագործոն մոտարկումը կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևի միջոցով՝ $\Delta\pi_j = A_0 - A_1 \sin\left(\frac{2\pi t}{T}\right) - A_2 \cos\left(\frac{2\pi t}{T}\right) - A_2 \pi_{j-1} + \sum_{i=1}^4 B_i \Delta\pi_{j-i} + \varepsilon_j$ ¹: Վերոնշյալ հավասարումը կիրառվել է ՀՀ գնաճի ժամանակային շարքի նկատմամբ: ՓԵՄ-ով իրականացված ռեգրեսիոն վերլուծության արդյունքում ստացվել են հավասարման գործակիցները, որոնք ներկայացված են աղյ. 4-ում:

¹ Տե՛ս 5:

**Աղյուսակ 4 Գծային տրենդով Ֆուրյեի շարքի միագործոն
մոտարկման հավասարման ռեգրեսիոն վերլուծության արդյունքները**

Բազմապատկիչ	A_0	A_1	A_2	A_3	B_1	B_2	B_3	B_4
Գնահատական	.004	.000	.000	-4.806E-5	1.082	.004	-.211	.031
t-վիճակագրի p-արժեք	.000	.013	.012	.000	.000	.972	.002	.031
Adjusted R Square	0.999							
Std. Error of the Estimate	.00089							
F	2.527E4							
Sig.	.000							

Ինչպես երևում է աղյ. 4-ից, դետերմինացիայի գործակիցը բավական բարձր է (0.99%), իսկ գործակիցները՝ հիմնականում նշանակալի:

ՀՀ գնաճի ժամանակային շարքի գործնական հարմոնիկ վերլուծություն: Գործնական հարմոնիկ վերլուծության մեթոդը թույլ է տալիս հաշվարկել Ֆուրյեի գործակիցները ինտեգրման մոտավոր մեթոդների միջոցով: Մասնավորապես, օգտվելով որոշյալ ինտեգրալների հաշվարկման ուղղանկյունների բանաձևից՝ կստանանք Ֆուրյեի գործակիցների հաշվարկման հետևյալ մոտավոր բանաձևերը.

$$a_0 \approx \frac{2}{n} \sum_{i=0}^{n-1} y_i, a_k \approx \frac{2}{n} \sum_{i=0}^{n-1} y_i \cos kx_i, b_k \approx \frac{2}{n} \sum_{i=0}^{n-1} y_i \sin kx_i,$$

որտեղ $k = 0, 1, \dots, s$: Նշանակենք առանձին հարմոնիկաները՝ $r_k = \sqrt{a_k^2 + b_k^2}$, որտեղ $k = 0, 1, \dots, s$, $r_0 = a_0$: Հարմոնիկաների համախումբը կոչվում է սպեկտր¹:


Գործնական հարմոնիկ վերլուծությունը իրականացվել է ՀՀ գնաճի ժամանակային շարքի նկատմամբ: Դիտարկվել են 25 պարբերություններ՝ $k = 1, \dots, 25$, տվյալների թիվը 212 է ($n = 212, i = 1, \dots, 212$): Արդյունքում ստացվել են $r_0, r_1, \dots, r_{25}$ արժեքները: Վերջիններս գրաֆիկորեն ներկայացված են գծ. 3-ում:

Գծ. 3-ից կարելի է նկատել, որ ՀՀ գնաճի ժամանակային շարքը ունեցել է հինգ նշանակալի գագաթներ՝ 3, 8, 10, 12 և 18-րդ պարբերություններում: Այսպիսով, կարող ենք փաստել, որ կիրառված երկու մեթոդներն էլ տվել են համանման արդյունքներ: Օգտագործելով գագաթների ստացված արժեքները՝ կստանանք ժամանակի $q = 2n/t$

¹ Пискунов Н.С., Дифференциальное и интегральное исчисление / М.: Наука, 1980.– т.2 – 575с.

Ряды Фурье и практический гармонический анализ. Методические указания для самостоятельной работы студентов экономических специальностей по высшей математике / Сост. Н.Г. Плаксина. – Севастополь: Изд-во СевНТУ, 2010. - 60 с.

միավորները¹, այն է՝ 141.3; 53; 42.4; 35.3; 23.6՝ ամսական կտրվածքով կամ 11.8; 4.4; 3.5; 2.9; 2՝ տարեկան կտրվածքով: Այսպիսով, իրականացված վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել ՀՀ գնաճի կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պարբերաշրջանները՝ 2; 4.5 և 12 տարի տևողություններով:



Գծապատկեր 3. ՀՀ գնաճի ժամանակային շարքի համար հաշվարկված Ֆուրյեի հարմոնիկաները

Եզրակացություն: Այսպիսով, մենք ստացանք ժամանակային շարքերի Ֆուրյեի մոտարկումը, որը Շուստերի պարբերագրի հետ տվեց համանման արդյունքներ: Ներկայացվող Ֆուրյեի մոտարկումը հնարավորություն է տալիս պնդել, որ ուսումնասիրվող ժամանակային շարքերն ունեն պարբերական բնույթ: Դրա շնորհիվ բացահայտվեցին ՀՀ գնաճի կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պարբերությունները:

¹ Տե՛ս 8:

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ


Ներսիսյան Գևորգ

ԵՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ, ասպիրանտ
Գիտական դեկավար՝ տ.գ.դ. պրոֆ. Ս. Միքայելյան

Բանկային համակարգը շուկայական տնտեսությամբ երկրներում զբաղեցնում է իր կարևորագույն տեղը տնտեսական հարաբերություններում: Այն իր էական դերն ունի նաև ՀՀ տնտեսական զարգացման մեջ: Սա ապացուցվում է մի շարք վիճակագրական տվյալներով ևս (գրաֆիկ 1¹):

Գրաֆիկ 1

**ՀՀ-ում Բանկային վարկեր/ՀՆԱ, Բանկային
ակտիվներ/ՀՆԱ հարաբերակցությունները 2000-
2012 թթ.**



Գրաֆիկից երևում է, որ վարկերի ծավալը և բանկային ակտիվների ծավալը ՀՆԱ-ի համեմատ վերջին տասնամյակում աճել են համապատասխանաբար 6 և 3.5 անգամ: Ինչևէ, նման ցուցանիշները տպավորիչ են, սակայն ՀՀ բանկային համակարգի կայունությունը և

¹ www.cba.am «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկ 2012», էջ 67-78


հուսալիությունը հասկանալու համար դիտարկենք մի քանի ցուցանիշներ համեմատական կարգով: Եվ այսպես, մեր ուսումնասիրությունների առարկա կհանդիսանան բանկային համակարգի ներգրավված միջոցների կառուցվածքը և բանկային վարկերի առավելագույն հնարավորությունները:

ՀՀ բանկային համակարգի ներգրավված միջոցներից ընդամենը 53%-ն է ներգրավված տնային տնտեսություններից և տեղական ընկերություններից՝ այսինքն մնացած գումարը առևտրային բանկերը ներգրավվում են արտասահմանյան մի շարք ֆոնդերից և բանկերից: Հետևաբար, բանկային համակարգը երբեմն կարող է հանդիպել լուրջ խնդիրների վարկավորման հետ կապված: Ինչ խոսք, դրամի պակասը կարող է հանգեցնել նաև տոկոսադրույքների բարձրացմանը:

Այսպիսով, ՀՀ բանկային համակարգում ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված միջոցները վարկային պորտֆելում հետևյալն են (գրաֆիկ 2)¹

Գրաֆիկ 2

ՀՀ բանկային ավանդներ/բանկային վարկեր հարաբերակցությունը 2007-2012թթ.



Հարկ է նշել, որ պրակտիկայում ընդունված է համարել, որ նշված ցուցանիշը պետք է 75%-ից բարձր լինի: Որպես համեմատություն նշենք, որ եվրոպական բանկերի մոտ տվյալ ցուցանիշը աշխարհում ամենաբարձրն է՝ միջինում տատանվելով 100-200%-ի սահմաններում²: Նշված ցուցանիշի բարձր լինելը վերլուծաբանների կողմից բացատրվում է ավանդների երաշխավորման արդյունավետ

¹ www.cba.am «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկ 2012», էջ 71-82

² Company reports, Barclay Capital 2011-2012

համակարգի ներդրմամբ: Նշենք, որ ԵՄ-ի երկրների համար տվյալ ցուցանիշը պետք է լինի նվազագույնը ավանդների 90%-ի չափով և 50,000 Եվրոից բարձր, իսկ տվյալ ցուցանիշը ՀՀ-ում կազմում է առավելագույնը 4 մլն ՀՀ դրամ:

Մյուս կարևոր պատճառը, համաձայն որի, ավանդների չափը չի կարողանում ապահովել բարձր ավանդ/վարկ հարաբերակցությունը, դա ոչ միայն բնակչության կողմից վստահության բացակայությունն է բանկերի հանդեպ, այլ նաև ոչ բավարար խնայման միջոցների չափն է:

Ըստ ԱՎԾ պաշտոնապես հրապարակված տվյալների, ՀՀ-ում միջին իրական աշխատավարձը 2007-ից 2012 թթ.-երը աճել է 43%-ով՝ 71099 ՀՀ դրամից հասնելով 101530 ՀՀ դրամ: Վերցնում ենք իրական աշխատավարձը, քանի որ խանայողություն կատարելու համար հիմք կարող է ընդունվել մարդու փաստացի ստացված գումարը: Սակայն ՀՀ-ում ոչ բոլորն են աշխատում, այդ պատճառով հաշվարկի հիմք ենք ընդունում ՀՀ-ում մեկ շնչին ընկնող եկամուտի չափը, որը բնավ ավելի փոքր ցուցանիշ է, քան աշխատավարձի միջին մակարդակը՝ 2007-2011թթ համար կազմելով 22,287-ից 34,206 ՀՀ դրամ: Իսկ նվազագույն սպառողական զամբյուղը այս ժամանակաշրջանի համար կազմել է 40,000-ից 54,000 ՀՀ դրամ: Բնականաբար այս պայմաններում, երբ ծախսերը գերազանցում են եկամուտները հնարավոր չի իրականացնել խնայողություններ, իսկ բանկերում ֆիզ. անձանց գումարները 2008-2012թթ համար աճել են 42 մլրդ դրամից՝ հասնելով 55 մլրդ ՀՀ դրամի: Կարելի է եզրակացնել, որ նշված գումարները կուտակվել են այլ եկամուտներից՝ մասնավոր տրանսֆերտներից, թաքնված եկամուտներից կամ միջինից բարձր եկամուտ ունեցող անձանց եկամուտներից: Այս պայմաններում կարող ենք ասել, որ բանկերում խնայողությունների պակասը առաջին հերթին ոչ թե բանկերի հանդեպ վստահության պակասն է, այլ պարզապես բնակչության եկամուտների անբավարարությունը:

Հաջորդ խնդիրը, որին կցանկանայի ուշադրություն դարձնել՝ ՀՀ առևտրային բանկերի վարավորման առավելագույն սահմանն է: Համաձայն ՀՀ ԿԲ կանոնակարգ 2-ի, եթե մեկ փոխառուի գծով առավելագույն սահմանաչափը սահմանված է 20% (ընդհանուր կապիտալից), ապա խոշոր փոխառուների գծով՝ 500%: Հարկ է նշել, որ 30.09.2012թ.-ի դրությամբ, ըստ այս ցուցանիշի, առավելագույն ներդրումը մեկ բիզնես ծրագրի մեջ կարող է իրականացնել, ԱԿԲ-Կրեդիտ Ագրիկոլե Բանկը, որի առավելագույն սահմանաչափը կարող է կազմել 23.2 մլն ԱՄՆ դոլար, իսկ բոլոր բանկերը միասին՝ 193.6 մլն ԱՄՆ դոլար: Երբ 2008թ.-ին «Թեդուտ» ՓԲԸ-ի և ռուսաստանյան «ՎՏԲ» բանկի միջև կնքվեց ընդհանուր 249 մլն. ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր, ՀՀ բոլոր բանկերը միասին կարող էին տրամադրել

միայն 141,9 մլն ԱՄՆ դոլար: Այս միջազգային ներդրումը կարելի է համարել լուրջ հարված ՀՀ բանկային համակարգին, քանի որ կատարված ներդրումի ամբողջ շահույթը ուղղվելու է ռուսաստանյան ընկերությանը: Հաշվի առնելով ՀՀ հանքարդյունաբերության պոտենցիալը ապագայում ևս հնարավոր են նմանատիպ այլ գործարքներ: Իսկ այս գործարքը կարելի է համարել դասական օրինակ այն բանի, թե ինչքան անմրցունակ են ՀՀ բանկերը օտարերկրյա բանկերի համեմատ: Այստեղ մենք դուրս ենք գալիս տնտեսական մրցակցության ազգային սահմաններից և գործ ենք ունենում միջազգային մրցակցության հետ, որտեղ երևում է իրական պատկերը և ամբողջ բանկային համակարգի իրական թերությունները: Զբաղված լինելով միմյանց հետ առօրեական մրցակցային հարցերով և միմյանցից հաճախորդ «փախցնելով», բանկերը դուրս են մնում իրական մրցակցությունից: Իսկ արդյոք մեր բանկային համակարգը այսօր՝ իրադարձությունից 5-6 տարի անց, պատրաստ է նման մրցակցության:

ԱԿՒՌ-ՅՈՇԻԿԱՎԱՅԻ ՍԵԿՏՈՐԱԼ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՐԵԼԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ: ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Չախտյան Գագիկ

*ԵՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ, մագ. 1-ին կուրս
Գիտական դեկավար՝ պրոֆ. Մ. Սահակյան*

Գաղտնիք չէ, որ Հայաստանի Հանրապետության տնտեսության առջև դրված են բազմաթիվ խնդիրներ: Դրանցից ամենաշատ քննարկվողներից են գործազրկության, արտագաղթի, տնտեսության բնականոն աճի և այլ խնդիրներ: Այս խնդիրները մակրոտնտեսագիտության ամենակարևոր և ամենաշատ ուսումնասիրված խնդիրներից են: Տարբեր մեթոդներ են մշակված այդ խնդիրների բացահայտման, ձևակերպման և լուծման համար:

Տվյալ աշխատանքում հետազոտվելու է Առկի-Յոշիկավայի սեկտորալ արտադրողականության մոդելի կիրառումը ՀՀ տնտեսության վրա, այդ մոդելի կիրառմամբ ապագա տարիների համար աշխատուժի սեկտորալ ամենահավանական բաշխման կանխատեսումներ են կատարվելու, և DEA եղանակի կիրառմամբ ուսումնասիրվելու է տնտեսության ոլորտների գործունեության արդյունավետությունը: Մոդելի համար վիճակագրական բազան ՀՀ տնտեսության 3 ընդհանրացված ոլորտներում (գյուղատնտեսություն, արդյունաբերություն և ծառայությունների ոլորտ) աշխատողների և նրանց կողմից արտադրված համախառն ներքին արդյունքի վերջին 10 տարիների տվյալներն են: Մոդելում օգտագործվում է նաև յուրաքանչյուր ոլորտում զբաղված աշխատողների միջին արտադրողականությունը, որը հաշվարկվում է որպես տվյալ ոլորտի կողմից արտադրված ՀՆԱ-ի և ոլորտում զբաղված աշխատողների թվի հարաբերություն:

Առաջին մոդելը Առկի-Յոշիկավայի սեկտորալ արտադրողականության պարզագույն մոդելն է, որը հնարավորություն է տալիս տրված արտադրողականության, աշխատունակ բնակչության և ՀՆԱ-ի ծավալների դեպքում ստանալ աշխատողների ամենահավանական բաշխումը տնտեսության ոլորտների միջև: Այսինքն եթե կառավարությունը ռազմավարություն կազմի, որտեղ պետք է որոշի, թե որ ոլորտում ինչքան աշխատող է անհրաժեշտ տրված ՀՆԱ-ն արտադրելու, տրված զբաղվածության և ամեն ոլորտում արտադրողականության տրված մակարդակի պայմաններում, ապա Առկի-Յոշիկավայի մոդելը այդ հաշվարկները կատարելու հարմար գործիք է: Իրականում մոդելի հնարավորությունները չեն

սահմանափակվում մի քանի ոլորտներում աշխատողների բաշխումը որոշելու համար, մոդելը կարելի է կիրառել նաև ավելի նեղ որոշված չափերի, մասնավորապես տնտեսության ճյուղերի վրա: Մաթեմատիկական տեսանկյունից մոդելը սովորական օպտիմիզացման խնդիր է լուծում, որը ժամանակակից հաշվողական սարքերի կողմից լուծվում է հաշված վայրկյանների ընթացքում: Կազմվում է ոչ գծային ծրագրման խնդիր, որի նպատակային ֆունկցիան ոլորտներում աշխատողների բաշխման ենթոպիան է, որը պետք է մաքսիմիզացվի որոշակի սահմանափակումների պայմաններում: Սահմանափակումների քանակը տարբեր կարող է լինել կախված խնդրի պայմաններից: Ակնհայտ է, որ դրանց քանակը չպետք է շատ լինի փոփոխականների քանակից, որը տվյալ դեպքում ոլորտների քանակն է: Իսկ այն դեպքում, երբ փոփոխականների քանակը հավասար է սահմանափակումների քանակին, ստացվում է միարժեք լուծում անկախ նպատակային ֆունկցիայի տեսքից: Օրինակ՝ մեր դիտարկած մոդելում, որտեղ ոլորտների քանակը երեք է, մենք ունենք երկու սահմանափակում. առաջին՝ ոլորտներում զբաղված աշխատողների հանրագումարը չպետք է գերազանցի ամբողջ տնտեսությունում զբաղված մարդկանց քանակը, երկրորդ՝ ոլորտներում զբաղվածների և նրանց արտադրողականության արտադրյալների գումարը չպետք է մեծ լինի ամբողջ տնտեսության ՀՆԱ-ից:

Առաջին մոդելի հիմքի վրա դիտարկվել է ավելի ընդարձակ մոդել, որը գրեթե նույն խնդիրն է լուծում, այսինքն՝ հաշվում է աշխատողների ամենահավանական բաշխումը, միայն թե այն հաշվի է առնում նաև ոլորտից ոլորտ աշխատողների շարժը: Խնդրի լուծման արդյունքում ստացվում է քառակուսի մատրից, որի $n(i,j)$ -րդ տարրը, $g_{i,j}$ է տալիս այն աշխատողների քանակը, որոնք առաջին տարում աշխատել են i -րդ ոլորտում, իսկ հաջորդ՝ երկրորդ տարում տեղափոխվել են j -րդ ոլորտ: Այստեղ, սակայն, առաջանում է մի խնդիր, որին միանշանակ լուծում չենք կարող տալ: Անհրաժեշտություն է առաջանում ունենալ $n(i,j)$ -ի արտադրողականությունը, որը ենպիրիկ հնարավոր չէ գնահատել: Այս փոքր խնդրի լուծումը կարող ենք ստանալ Լապլասի սկզբունքով, այսինքն՝ այդ արտադրողականությունը կվերցնենք որպես երկու ոլորտների (i և j) արտադրողականությունների միջին: Այդ արժեքները ունենալուց հետո նորից կազմվում է ոչ գծային ծրագրման խնդիր, որը հեշտությամբ կարելի է լուծել և ստանալ աշխատողների մի ոլորտից մյուս ոլորտ տեղաշարժի ամենահավանական բաշխման մատրիցը: Ի տարբերություն առաջին մոդելի, այս խնդրի լուծումը ավելի մեծ բովանդակություն ունի: Եթե ենթադրենք, որ ոլորտից ոլորտ աշխատողների շարժի տեմպերը փոփոխվելու հակում չունի, ապա

դրա միջոցով կարելի է կանխատեսումներ կատարել աշխատողների բաշխման վերաբերյալ ապագա տարիների ընթացքում: Կամ եթե նկատվի այդ տենդենցի ինչ-որ կերպ փոփոխվելու հակում, ապա դրա միջոցով նույնպես թույլատրելի կլինի կանխատեսումներ կատարել:

Ինչ վերաբերում է ոլորտները համեմատելու DEA եղանակին, ապա պետք է նշել, որ այս մեթոդը բավականին լայն տարածում ունի տարբեր երևույթների, օբյեկտների արդյունավետությունը գնահատելու և համեմատություններ կատարելու համար տնտեսագետների և ոչ միայն տնտեսագետների շրջանակներում: Այն նույնպես բերվում է օպտիմացման խնդրի, որը լուծելու արդյունքում ստացվում են օբյեկտների համեմատական արդյունավետության գնահատականները: Մեր դեպքում մենք այս մեթոդը կիրառում ենք գնահատելու համար տնտեսության ոլորտների արդյունավետությունը՝ հաշվի առնելով ոլորտներում զբաղված մարդկանց քանակի և նրանց կողմից արտադրված ՀՆԱ-ի արժեքները: Այս խնդրի լուծման արդյունքում ստանում ենք ամեն տարվա համար ոլորտի արդյունավետությունը բնութագրող մի թիվ, որը գտնվում է 0-ից 1 միջակայքում: Ինչքան այդ թիվը մոտ է 1-ին, այնքան այդ ոլորտը արդյունավետ է մյուսների համեմատ: Քանի որ մենք ունենք 10 տարվա տվյալներ, ապա ստանում ենք 3*10 մատրից: Կարող ենք հաշվել նաև ամեն ոլորտի համար միջինացված տվյալների հիման վրա դրա արդյունավետության գնահատականը: Այդ գնահատականների դիմամիկան 10 տարվա ընթացքում դիտարկելը թույլ կտա եզրակացություններ անել, թե ինչպես է փոփոխվել այս կամ այն ոլորտի արդյունավետությունը: Կարելի է նաև բացահայտել այն գործոնները, որոնք այդ փոփոխության պատճառն են եղել: Ծիշտ է, տվյալները քիչ են, սակայն այս տվյալների միջոցով էլ կարելի է կոպիտ կանխատեսումներ կատարել, թե ինչպես կփոխվեն ոլորտների արդյունավետության գնահատականները ապագայում, և ռազմավարություն կազմողները կկարողանան կողմնորոշվել, թե ինչ ուղղություններով է անհրաժեշտ փոփոխություններ կատարել:

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ջնդրյան Շերազ

*ԵՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ, ասպիրանտ
Գիտական ղեկավար՝ տ.գ.դ., պրոֆ. Յ. Սարգսյան*

ՀՀ առողջապահական համակարգում անցումային ժամանակահատվածում իրականացվել են բազմաթիվ բարեփոխումներ, սակայն դրանց արդյունքում դեռևս չեն լուծվել բնակչության առողջության ապահովման անհրաժեշտ մակարդակի և առողջապահական ծառայությունների համարժեք արդյունավետության ապահովման խնդիրները: Ֆինանսատնտեսական ճգնաժամը բացասաբար ազդեց ՀՀ բնակչության սոցիալական, այդ թվում՝ առողջապահական ծառայությունների փաստացի մատուցման մակարդակի վրա: Գնաժամի բացասական ազդեցությունը արտահայտվեց բյուջետային ֆինանսավորման նվազումով, որի արդյունքում կրճատվեցին առողջապահական տարբեր ծրագրեր, նվազեց առողջապահական ծառայությունների հասանելիության և մատչելիության մակարդակը բնակչության զգալի հատվածի համար: Մասնավորապես՝ 2009թ. պետական բյուջեն առողջապահության մասով կատարվեց 85%-ով փաստացի կատարված ծախսերը պակաս էին նախատեսվածից 9,9 մլրդ դրամով: 2010թ. պետական բյուջեի փաստացի ծախսերը չեղվեցին Կայուն զարգացման ծրագրի նպատակակետից 26,0 մլրդ դրամով, իսկ 2011թ. հաստատված պետական բյուջեի մասով 40,8 մլրդ դրամով, 2012թ. առողջապահության ոլորտի ծախսերը կատարվել են 96,2%-ով կամ 2,55 մլրդ դրամով պակաս ¹ : ՀՀ-ում պետական բյուջեի առողջապահության համար հատկացված մասնաբաժինը աստիճանաբար նվազել է. եթե 2005թ. այն կազմել է շուրջ 8%, ապա 2010-11թթ. նվազել է մինչև 6%: 2014թ. բյուջեի նախագծով այն կազմում է շուրջ 6,5%:

ՀՀ-ում առողջապահության համակարգի բարեփոխումները ընթանում են շուրջ 22 տարի՝ առանձին տարաբնույթ ծրագրերով, ինչպես նաև համալիր միջոցառումներով: Բարեփոխումների շրջանակում իրականացված ծրագրերի և միջոցառումների արդյունքները, որոնց վրա ծախսվել են բյուջետային զգալի միջոցներ,

¹ Կայուն Ջարգացման Ծրագիր, ՀՀ պետական բյուջեի կատարման հաշվետվություն 2009, 2010, 2011, 2012թթ., <http://www.parliament.am>

օբյեկտիվորեն կարելի զնահատել չորս աստիճանով՝ հաջողված, մասնաբ հաջողված, չեզոք դրսևորումներով և չհաջողված:

Առողջապահական համակարգի առկա ընդամուր տնտեսական վիճակի, կայուն ֆինանսավորումը ապահովող մոտեցումների և կառուցակարգերի դիտարկումները և ապագա ռազմավարության ուղենիշների կառուցումը պահանջում է ամբողջական և համապարփակ վերլուծություն, որը նպատակահարմար է իրականացնել «SWOT» կառուցակարգով: Խնդրի իրականացման համար մշակվել և ճշգրտվել են ոլորտի վերլուծության համար «SWOT» գործիքի կիրառման մեթոդաբանական որոշ խնդիրներ, ինչը հնարավարություն է տալիս այդ մոդելը կիրառել ՀՀ առողջապահության համակարգի ուժեղ և թույլ կողմերի, հնարավոր արտաքին սպառնալիքների և բարենպաստ հնարավորությունների բացահայտման համար և դրանց հիման վրա մշակել ռազմավարություն, որը թույլ կտա խուսափել անբարենպաստ զարգացումներից և ռիսկերից՝ զարգացնելով առկա առավելությունները և հնարավորությունները:

«SWOT» վերլուծության արդյունավետությունը ապահովելու համար անհրաժեշտ է պահպանել վերլուծության որոշակի պահանջներ¹, դրանք են.

- ✓ ոլորտի ուժեղ և թույլ կողմերի իրատեսական բացահայտում,
- ✓ ոլորտի ներկա և ապագա հնարավոր ճիշտ դիրքի զնահատում,
- ✓ վերլուծության ընթացքում կոնկրետության ապահովումը, վիճահարույց հատվածներից և ավելորդ բարդություններից խուսափում,
- ✓ մրցակցային դիրքերի բացահատում,
- ✓ խնդրի նպատակին ադապտացված համառոտ և պարզ ներկայացում:

Մեթոդաբանության առումով հարկ է նշել նաև, որ բացի չորս առանցքներում մատնանշված գործոնների, պահանջվում է նաև դրանցից յուրաքանչյուրի համար սահմանել դրա ազդեցության բնույթը, արժորման լրացուցիչ կշիռը, մասնավորապես նշելով գործոնի՝

- ազդեցության աստիճանը,

¹ **Internet Based Business Coach** (NETCOACH), Project, promoted by WESTBIC Business Management Centre with the support of Leonardo Da Vinci Lifelong Learning Programme, Conducting a SWOT analysis, <http://www.netcoach.eu.com/index.php?id=126>

- ազդեցության ժամանակային հորիզոնը՝ կարճաժամկետ, միջնաժամկետ կամ երկարաժամկետ,

- սոցիալական և առողջապահական արդյունքի ապահովումը,

- ծախսերի նվազեցում և ընդունելի շահութաբերության մակարդակի ապահովումը,

- տնտեսական և ֆինանսական կայունության ապահովումը,

- գործոնի ազդեցության բարձրացման և պահպանման դյուրինությունը:

Վերլուծության արդյունքում ի հայտ են բերվել ներկայումս վիճակի և ապագա ռազմավարության հետևյալ առանցքային գործոնները:

Ուժեղ կողմեր

1. Պետության կողից հանրային բնույթի ծառայությունների պարտավորությունը, մասնավորապես՝ անապահով խավին ուղղված առողջապահական համակարգի ստեղծում և իրագործում:

2. Ազգային մակարդակով առողջապահական ոլորտի զարգացման ծրագրի և բազմաթիվ նեղ ոլորտային ենթածրագրերի առկայություն:

3. Միջազգային կազմակերպությունների և դոնոր երկրների, բարեգործական կազմակերպությունների կողմից առողջապահության համակարգին տեխնիկական և ֆինանսական աջակցություն:

4. Առաջնային ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության ամրապնդումը, ներառյալ՝ ընտանեկան բժշկության մոդելի ձևավորում:

5. Առողջապահության ծառայությունների շղթայում ապահովագրական ընկերությունների լայնամասշտաբ ներգրավում:

6. Մեծաքանակ բժշկական որակյալ կադրերի առկայությունը և դրանց որակավորման բարձրացում:

Չնարավորությունները

1. Առողջապահության ծառայությունների գնորդ ՊԱԳ-ի կարգավիճակի բարձրացում:

2. Առողջապահության ոլորտում պաշտոնական համավճարների ներմուծում և դրա հետագա կանոնակարգում:

3. Առողջապահական ծառայությունների մասշտաբի կամ ծավալների էֆեկտի առկայություն:

4. Առողջապահության ոլորտի շենքային կառույցների ցանցի առկայություն և դրանց օպտիմալացման իրականացում:

5. Ինովացիոն մշակույթի ձևավորում և առողջապահական նոր ծառայությունների և առանձնահատուկ առողջապահական տեխնոլոգիաների ներմուծում:

6. Առողջապահական ծառայությունների հայտնի «բրենդների» ձևավորում և կայացում:

Թույլ կողմերը

Առողջապահական համակարգի՝ ծառայությունների ֆինանսավորում և սպառողների ֆինանսական պաշտպանություն:

1. Առողջապահության ոլորտի արդյունավետ կառավարում:

2. Առողջապահական համակարգի շուկայական ինդուստրիային բնորոշ հայտանիշներով գործելաոճ:

3. Առողջապահության ծառայությունների մատակարարման շղթա:

4. Առողջապահության համակարգում միասնական հնտեգրացված տեղեկատվական համակարգի կայացման անհրաժեշտություն:

5. Հաճախորդների լոյալ վերաբերմունքի ձեռքբերում:

Սպառնալիքները և ռիսկերը

1. Կարգավորվող շուկային բնորոշ իրավահարաբերությունների խաթարվածություն:

2. Առողջապահական ծառայությունների և սպասարկումների գնագոյացում:

3. Քաղաքական ռիսկեր

4. Առողջապահական ծառայությունների ծախսերի կառուցվածք, փոփոխական անկայուն ծախսեր, փոփոխական եկամուտներ և ֆինանսական լներիջ:

Ընտրված թվով 21 գործոններից, թվով 6-ը բաժին է ընկնում ուժեղ կողմերին, 6-ը՝ հնարավորություններին, 5-ը՝ թույլ կողմերին և 4-ը՝ սպառնալիքներին ու ռիսկերին: Պայմանականորեն նման պատկերը ենթադրում է, որ ուժեղ կողմերը հավասարակշռում են թույլ կողմերին, իսկ հնարավորությունները ռիսկերին: Սակայն դա խիստ պայմանական է. «SWOT» վերլուծության բոլոր 4 առանցքները խիստ կարևոր են և դրանք չպետք է ստորադասել մեկը մյուսի նկատմամբ: Նշված գործոնների հիման վրա կառուցվող առողջապահության ոլորտի ռազմավարությունը կարող է զարգացման բազմապատկիչ (սիներգիկ) արդյունքի ապահովման երաշխիք լինել:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱՉԱՓ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿՐԱ

Մարատիկյան Նարեկ

*ՀՀ ԳԱԱ, Մ. Քոթանյանի անվ. տնտ. ինստիտուտ, ասպիրանտ
Փիտական ղեկավար՝ տ.գ.թ., դոց. Ս. Խաչիկյան*

Այսօր կրթական համակարգը հանդիսանում է ցանկացած պետության կարևորագույն խնդիրներից մեկը: Երկրի պաշտպանվածությունը, եթե ուղղիղ համեմատական է նրա ռազմական պոտենցիալին կամ բանակի հզորությանը, ապա այդ նույն պաշտպանության գրագետ կազմակերպումը, զարգացումը, ինչպես նաև այլ ոլորտների զարգացումը հնարավոր չէ ապահովել, եթե տվյալ պետությունը չունի զարգացած կրթական համակարգ և համապատասխան գիտելիքներով զինված մասնագետներ:

Այսինքն՝ կարելի է հստակորեն ասել, որ երկրի զարգացվածության մակարդակը, համաչափ զարգացումը և համաշխարհային տեղն ու դիրքը ուղիղ համեմատական են պետության կրթական հմակարգի զարգացվածության մակարդակին:

Կրթական համակարգի առջև կանգնած խնդիրները համաշխարհային բնույթ են կրում: Յուրաքանչյուր պետություն իր կարևորագույն խնդիրն է համարում զարգացնել երկրի կրթական համակարգը՝ դրանով իսկ խթանելով երկրի տնտեսական զարգացումը:

Հայաստանում կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն զարգացման, ինչպես նաև մարդկային կապիտալի պահպանման ու վերարտադրության նախապայմաններից մեկը: Մարդկային զարգացման ապահովման քաղաքականության հիմնական գերակայությունը կրթության առաջանցիկ զարգացման ապահովումն է՝ կրթության որակի, արդյունավետության և մատչելիության բարձրացման միջոցով¹:

Այսօր տեխնոլոգիաների արագ զարգացումը, աշխատանքային տարբեր ոլորտներում նորանոր մոտեցումների ի հայտ գալը, ստիպում են մասնագետներին կրթական համակարգի խնդիրների շուրջ ավելի շատ խոսել՝ անդրադառնալով դրանց անարդյունավետությանը և աշխատաշուկայի չափանիշներին անհամապատասխանությանը: Սա առաջին հերթին վերաբերում է բուհերին, որոնցից, ըստ երևույթին, պետք է դուրս գան պատրաստի

¹ Հայաստանի կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր

կադրեր, կադրեր, որոնք պետք է նպաստեն երկրի տնտեսական համաչափ զարգացմանը: Սակայն, թե վերոնշյալը որքանո՞վ է համապատասխանում իրականությանը մնում է դեռևս չբացահայտված:

Հայաստանի կրթության զարգացման հեռանկարն անհրաժեշտ է դիտարկել երկրի ընդհանուր զարգացման, ազգային և պետական անվտանգության ապահովման հետևյալ հիմնական նպատակադրումների համատեքստում, ապահովելով կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքների իրականացումը.

1) անկախ պետականության ամրապնդում և քաղաքացիական հասարակության զարգացում,

2) աղքատության հաղթահարում և բարեկեցության ապահովում,

3) կայուն տնտեսական աճի և մրցունակության ապահովում,

4) հայապահպանություն,

5) միջազգային և տարածաշրջանային համագործակցություն¹:

Այսօր տնտեսության զարգացումը ուղղակիորեն կախված է կրթական համակարգից: Կրթական համակարգի ազդեցությունը տնտեսության զարգացվածության վրա կարելի է ներկայացնել հետևյալ տեսանկյունից:

1. Նորարական տնտեսություն²: Ուղղակիորեն կախված է կրթական համակարգի զարգացվածությունից: Այսօր շատ տնտեսագետներ հակված են այն մտքին, որ նորարական տնտեսությունը ապահովում է երկրի տնտեսության արագ և հուսալի զարգացումը՝ ապահովելով նրա կայուն դիրքը համաշխարհային տնտեսության մեջ: Այսօր աշխարհի այնպիսի երկրներ ինչպիսիք են, ՄԱՆ, Կանադան, Գերմանիան, Ֆրանսիան, Շվեյցարիան, Սինգապուրը և այլն, իրենց տնտեսության մեջ զգալի առավելություն են տալիս նորարական տնտեսությանը³:

2. Մարդկային կապիտալի զարգացվածություն: Ուսումնասիրելով կրթության սոցիալական ազդեցությունը և նրա ունեցած դերակատարումը տնտեսության զարգացման մեջ՝ կարելի է ենթադրել, որ այն իրականացվում է մարդկային կապիտալի զարգացման և ընդլայնման շնորհիվ: Իսկ այդ ամենը առանց կրթական համակարգի զարգացման անհնար կամ ոչ լիարժեք կլինի:

¹ <http://www.edu.am/DownloadFile/3933arm-EDSP2011-15.pdf>

² <http://www.ibl.ru/konf/021210/105.html>, ФИЛАТКИН В.Н. Доктор технических наук, профессор

³ http://ru.wikipedia.org/wiki/Инновационная_экономика

Մարդկային կապիտալի դերը և զարգացման խնդիրները ուսումնասիրվել են այնպիսի դասականների կողմից, ինչպիսիք են՝ Ա. Սմիթը և Դ. Ռիկառդոն:

3. **Գիտելիքահենք տնտեսություն:** Գիտելիքը դարձել է աշխարհի բազմաթիվ երկրների տնտեսական զարգացման հիմնական աղբյուրը՝ հնարավորություն տալով օրեցօր բարելավելու մարդկանց կյանքը: Գիտելիքի հասարակությունների ձևավորմամբ բացվել են նոր հեռանկարներ մարդկանց ինքնազարգացման համար: Մարդկային ներուժը դարձել է երկրների կայուն առաջընթացի գործոն: Այս ամենը հաշվի առնելով՝ դժվար չէ պատկերացնել, որ այսօր ցանկացած երկրի տնտեսություն պետք է զարգանա և հենվի գիտելիքների ձեռքբերման և արդյունավետ կիրառման շնորհիվ:

Հայաստանի մրցունակության ապահովման տեսանկյունից կրթության համակարգը երկու հիմնական մարտահրավերի առաջ է կանգնած: Կրթության համակարգը դեռևս էական դերակատարում չունի հանրապետության տնտեսական խնդիրներում, մինչդեռ առանց կրթության համակարգի արմատական բարեփոխման անհնար կլինի ապահովել զարգացման շարունակականությունը, գիտելիքահենք տնտեսության և հասարակության ձևավորումը: Բարձրորակ մարդկային կապիտալի առկայությունը հանդիսանում է ժամանակակից տնտեսական զարգացման հիմնական նախապայմանը և առանց դրա անհնար է երկարաժամկետ հեռանկարում ապահովել կայուն տնտեսական զարգացում և տարածքային համաչափ զարգացում:


Խոսելով համաչափ զարգացման մասին, հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում տարածքային զարգացման հիմնախնդիրը գտնվում է պետության ուշադրության կենտրոնում և իրականացնում են մի շարք միջոցառումներ, որոնք միտված են թուլացնելու տնտեսության կենտրոնացումը:

Տարածքային զարգացման անհամաչափությունները Հայաստանի Հանրապետությունում սկսել են խորանալ տնտեսական աճի արագացմանը զուգընթաց՝ 2000 թվականից, և հիմնականում արտահայտվում են մայրաքաղաք Երևանի տնտեսական դերի և նշանակության աճով, որի արդյունքում կենսամակարդակի տարբերությունը Երևանի և Հայաստանի Հանրապետության մարզերի միջև անընդհատ աճել է: Մեծ են նաև անհամաչափությունները մարզերի միջև: Երկարաժամկետ ապագայում, տարածքային մեծ և, առավել ևս, խորացող անհամաչափությունները կարող են ուղղակիորեն և անուղղակիորեն բացասաբար անդրադառնալ երկրի ընդհանուր տնտեսական զարգացման վրա: Մասնավորապես՝ անհամաչափ տարածքային զարգացումը հանգեցնում է տնտեսապես թույլ զարգացած տարածաշրջաններից բնակչության անցանկալի

արտահոսքին ու քաղաքային համայնքներում, հատկապես՝ Երևանում կենտրոնացմանը¹:

Հարկ է նշել, որ այսօր բարձրագույն կրթության ոլորտում ևս նկատվում են կենտրոնացման բարձր տեմպեր, կենտրոնացում, որը կարող է բացասաբար ազդել տարածքային համաչափ զարգացման վրա: Կենտրոնացված կրթության պատճառով մարզային բնակչությունը քաղաքային բնակչության հետ գտնվում է անհավասար պայմաններում, ինչ պատճառով բարձրագույն կրթությունը ստանալը մարզային բնակչության համար դառնում է ավելի դժվարամատչելի և թանկ:

Գծ. 1 Բարձրագույն կրթության ընդգրկվածության բաշխվածությունը բաշխվածությունը տնային տնտեսությունների ըստ սպառման ագրեգատով քվանտիլների, 2009²:



Հայաստանում, ինչպես և բազմաթիվ այլ երկրներում, բարձրագույն կրթության ծառայությունների մատչելիությունը անհավասար է: Բարձրագույն կրթություն ստանալու ցածր եկամուտ ունեցող ընտանիքներից ու գյուղական բնակավայրերից ուսանողների հնարավորությունները շատ ավելի սահմանափակ են, քան առավել բարեկեցիկ ու քաղաքաբնակ ընտանիքների երեխաներինը: Ինչպես ցույց է տալիս Գծապատկեր 1-ը, ընդգրկվածությունը բուհերում անհավասար է տարբեր տնային տնտեսությունների շրջանում, ընդ որում՝ հարուստների գերակշռումն ակնհայտ է: Նույն գծապատկերը ցույց է տալիս, որ 2009 թվականին բուհերի ուսանողների միայն 6.9

¹ <<Տարածքային զարգացման հայեցակարգ>> ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30 նիստ N25 արձանագրային որոշում, էջ 2

² Հայաստանի հանրապետության բարձրագույն ֆինանսավորման ռազմավարություն, ՀՀ կառավարություն 2011թ:

տոկոսն է ներկայացնում ամենացածր եկամտային խմբում ընդգրկված ընտանիքները, մինչդեռ, ուսանողների 32 տոկոսը գալիս է ամենաբարձր եկամտային խմբից:

Վերոնշյալ իրավիճակից, արդեն իսկ հնարավոր է պատկերացում կազմել, որ նման պարագայում տարածքային համաչափ զարգացումը չի կարող տեղի ունենա արդյունավետ կերպով, քանի որ մարդկային կապիտալը, որ հանդիսանում է տնտեսության զարգացման հիմնական գործոնը, կենտրոնացնում է քաղաքում՝ մասնավորապես Երևանում: Իսկ մարզային բնակչության այն մասը, որը կարողացել է մեկնել մայրաքաղաք կրթություն ստանալու համար, ավարտելուց հետո հիմնականում մնում և աշխատում են Երևանով, դրանով իսկ նպաստելով մարզային բնակչության արտահոսքին:

Վերոնշյալ և մի շարք այլ խնդիրներիցից խուսափելու համար, որոնք հանգեցնում են կենտրոնացման գործընթացին, դրանով իսկ խոչընդոտելով տարածքային համաչափ զարգացմանն, անհրաժեշտ ենք համարում մարզային տարածքներում զարգացնել բարձրագույն կրթական համակարգը, ինչը հնարավորություն կտա իրականացնել տարածքային համաչափ զարգացում հետևյալ գործոնների հաշվին.

1. Մարզային երիտասարդության կենտրոնացում մարզերում, նվազագույնի հասցնելով մարզերից արտահոսքը:

2. Մարզերում անշարժ գույքի շուկայի, փոխադրամիջոցների գործունեության զարգացումը:

3. Կրթության հետ կապված ծախսերի իրականացում մարզերում:

4. Համապատասխան կադրերի ապահովում մարզերում, հաշվի առնելով մարզային առանձնահատկությունները:

5. Կրթական ստորաբաժանումների զարգացում մարզերում:

6. Մայրաքաղաքի մասնակի բեռնաթափում:

7. և այլն

Հարկ է նշել, որ կրթական հաստատությունների հիմունքը և զարգացումը մարզերում պետք է տեղի ունենա հաշվի առնելով որոշակի առանձնահատկություններ, ինչպիսիք են՝ մարզի առանձնահատկությունները, հնարավորությունները, բնակչության կազմը և թվաքանակը, կապը այլ մարզերի հետ և այլն:

Այս և մի շարք այլ գործոններ ուղղակիորեն ազդում են տարածքային համաչափ զարգացման վրա, իսկ եթե վերոնշյալ գործոնները բացակայում են տարածաշրջաններից, ապա այդ պարագայում, համաչափ զարգացումը դառնում է գործնականորեն անհնար:

Մարզերում բարձրագույն կրթական համակարգի ներդրումը, նպաստելով տարածքային համաչափ զարգացմանը, մեր կարծիքով կապահովի երկրի տնտեսության արագ զարգացմանը:

ՀՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սարգսյան Անի

*ՀՊՄՀ, ֆինանսական ֆակուլտետ, մազ. 1–ին կուրս
Գիտական դեկավար՝ տ.գ.թ. Կ. Գրիգորյան*

ՀՀ անկախացումն առաջադրեց արտաքին առևտրի կազմակերպման օբյեկտիվ անհրաժեշտություն, և այն կապերը, որոնք գոյություն ունեին նախկին ԽՍՀՄ հանրապետությունների միջև, այժմ կարող էին իրականացվել միայն արտաքին առևտրի միջոցով: Այդ պայմաններում առավել բարենպաստ էր վերջնական արդյունքներ թողարկող հանրապետությունների վիճակը: ՀՀ հայտնվեց արտահանվող արտադրանքի ռեսուրսներ չունեցող և ներմուծման խիստ կարիք ունեցող երկրների շարքում, ինչը լրացվեց տրանսպորտային ճանապարհների շրջափակման փաստով: Փորձը ցույց է տալիս, որ զարգացող այն երկրները, որոնք արտահանման միջոցով մեծացրել են համաշխարհային տնտեսությանն ինտեգրման աստիճանը, ձեռք են բերել տնտեսական աճի առավել բարձր տեմպեր: Ո՞ր ոլորտներում Հայաստանն ունի աճի պոտենցիալ, և ի՞նչ նոր արտադրատեսակներ կարելի է արտադրել ու արտահանել մեր տնտեսությունում առկա ռեսուրսներով: Անդրադառնամ ՀՀ տնտեսության ոլորտներին առանձին-առանձին:

Գյուղատնտեսության և սննդարդյունաբերության ոլորտում առկա են համեմատական առավելություններ՝ պայմանավորված համաշխարհային շուկայում էկոլոգիապես մաքուր արտադրանքի նկատմամբ մեծ պահանջարկով: Թեև ոլորտի շատ ապրանքատեսակներ (մեղր, կաթնամթերք, դեղաբույսեր, մրգեր ու բանջարեղեն և դրանց վերամշակված տարբերակներ, հանքային ջրեր, ոգելից խմիչք) ներկայումս Հայաստանից արտահանվում են, այնուամենայնիվ դրանց արտահանման ցուցանիշները չեն համապատասխանում իրական ներուժին: Նշենք, որ առավել զգալի արդյունք ստանալու համար, նշված խնդիրների լուծմանը զուգահեռ, անհրաժեշտ է խթանել հայկական գյուղատնտեսությունում շատ քիչ մշակվող այնպիսի մշակաբույսերի արտադրությունը, ինչպիսիք են գետնախնձորը, մասուրն ու թեյի վարդը: Ինչպես գիտենք, Հայաստանում առկա է գյուղատնտեսական հողերի թերզբաղվածություն, հետևաբար միանգամայն իրատեսական է գետնախնձորի և մասուրի ու թեյի վարդի պլանտացիաներ ստեղծելու գաղափարը, առավել ևս, որ նշված մշակաբույսերի աճեցումը հնարավորություն կտա զարգացնելու նաև դրանց հետ առնչվող շատ հարակից ճյուղեր: Մասուրի և վարդի հասունացումը Հայաստանում

համընկնում է իսլամական երկրներում ռամադանի շրջանին (մասուրի և վարդի թերթիկների հյուրերը, հատկապես Ռամադանի ժամանակ, որպես ըմպելիք լայնորեն օգտագործվում են Պարսից ծոցի երկրներում), ուստի առկա է բավականին մեծ ծավալով դրանց արտահանման ռեալ հնարավորություն: Գետնախնձորը շատ երկրներում անփոխարինելի միջոց է ինչպես սննդում կիրառության, այնպես էլ բժշկության մեջ, քիմիական արտադրությունում՝ հատկապես կոսմետիկայի բնագավառում, ավելին՝ գետնախնձորի աճեցումը օգտակար է նաև գյուղատնտեսական հողերի որակի բարելավման տեսանկյունից, հետևաբար դրա արտադրությունը կարևորում ենք ոչ միայն արտահանման, այլև ավելի շուտ բազմաթիվ հարակից ճյուղերի զարգացման նկատառումներով:

Անդրադառնալով **հանքահումքային** արդյունաբերության և մետալուրգիայի ոլորտներին՝ նկատենք, որ ներկայումս այս ոլորտների արտահանումը հիմնականում հումքի տեսքով է, ինչը ամենևին էլ ուրախալի հանգամանք չէ: Նույնիսկ չափազանց մեծ ռեսուրսային հնարավորություններ ունեցող երկրներն իրենց թույլ չեն տալիս հումքի ուղղակի արտահանում այն պարագայում, երբ երկրում առկա է դրանց նկատմամբ պահանջարկ և իրացման լայն հնարավորություններ: Առավել ևս Հայաստանի պարագայում հումքային ապրանքների արտահանումը չի կարող նպաստել Հայաստանի տնտեսության զարգացմանը: Դա նշանակում է, որ պետք է հրաժարվել արտահանման զգալի մասն ապահովող մասնագիտացման ներկա ուղղությունից, սակայն պետք է հաշվի առնել, որ չարտահանված հումքային ռեսուրսներով կարելի է տեղում պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն նախաձեռնել:

Այժմ ներկայացնեն մի քանի դիտարկումներ՝

1. Ռեսուրսների միջազգային գները ենթակա են խիստ տատանումների, ինչը բավականին մեղմ է պատրաստի արտադրանքի պարագայում, և, հետևաբար, եթե մեր արտահանման մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն ռեսուրսները, ապա մեր տնտեսությունը, ըստ էության, կախված է, այդ գների «քմահաճույքներից»: Ներկայումս հանքահումքային ապրանքների արտահանումը կազմում է ՀՀ ողջ արտահանման մոտ 50%-ը:

2. Համաշխարհային տնտեսությունում ներկայումս մեծ արագությամբ զարգանում է արտադրության և արտահանման մի ուղղություն, որը կոչվում է ներարտադրական առևտուր: Այսինքն՝ զարգացած երկրները իրենց կողմից ստեղծվող պատրաստի արտադրանքի միջանկյալ փուլերից որևէ մեկը արտապատվիրում են որևէ զարգացող երկրի, օրինակ՝ այն պատճառով, որ տվյալ փուլը առավել աշխատատար է, իսկ զարգացող երկրներում աշխատուժն առավել էժան է... Ուստի անփոփելով, նշեն, որ Հայաստանը կարող է

առկա ռեսուրսները հասցնել վերամշակման որոշակի փուլի, հետո միայն դրանք արտահանել: Այս պարագայում ստեղծված ավելացված արժեքը կլինի առավել բարձր, որն էլ կնպաստի տնտեսության հետագա զարգացմանը, ինչը չի կարելի ասել այն դեպքի համար, երբ պարզապես արդյունահանվում և արտահանվում է հումքը (այս իրավիճակում տնտեսության զարգացում տեղի չի ունենում, կամ գոնե նվազ չափով է տեղի ունենում):

Պարզապես մեկ ռեսուրսի՝ պեռլիտի¹ օրինակով մեկնաբանենք ներկայացված գաղափարը: Ջերմային վերամշակման արդյունքում պեռլիտն ունի փրփելու հատկություն և սկզբնական ծավալից մեծանում է 5-20 անգամ: Փքված պեռլիտի ավազից ստանում են թեթև բետոններ և տարբեր նշանակության լուծույթներ, կերամա և բիթումպեռլիտային արտադրանքներ, գիպսային և սիլիկատա-պեռլիտային նյութեր, ինչպես նաև ջերմա- և ձայնամեկուսիչ նյութերի բավականին մեծ տեսականի: Պեռլիտը նաև որոշակի մետաղների բաղկացուցիչ մաս է, ինչի արդյունքում դրանք դառնում են հրակայուն: Պեռլիտից ստանում են ավելի, քան 400 անուն ապրանքներ, որոնք կիրառվում են հիմնականում շինարարության, գյուղատնտեսության, այգեգործության մեջ, ինչպես նաև ամենատարբեր նյութերի, ընդհուպ մինչև խմելու ջրի ֆիլտրման համար: Ընդ որում, Հայաստանում պեռլիտի պաշարները համեմատաբար ավելի շատ են:

Այժմ անդրադառնամք այն հարցին, թե արդյոք տնտեսապես արդյունավետ է ՀՀ-ում պեռլիտի վերամշակումը: Միայն մեկ կազմակերպության՝ Էկոպեռլիտի օրինակով կարող ենք տեսնել, որ ներկայումս տարեցտարի ավելանում են փքապեռլիտե և ջերմամեկուսիչ սալերի արտադրությունը: Հետևաբար՝ կարող ենք ասել, որ կազմակերպությունը կարողացել է գտնել այն տեխնոլոգիան, որի միջոցով արդյունավետորեն կազմակերպում է արտադրության գործընթացը: Այսպիսով՝ միանգամայն հնարավոր է առկա ռեսուրսներով (բնականաբար՝ ոչ բոլորով, յուրաքանչյուրի պարագայում անհրաժեշտ են մանրամասն հաշվարկներ՝ դրնացով կազմակերպվող արդյունավետությունը կամ անարդյունավետությունը հիմնավորելու համար: Իսկ արդեն առկա արտադրությունների պարագայում, կարծում են պարզ է, որ արդյունավետությունը հիմնավորված է) տեղում կազմակերպել արտադրություն:

Թեթև արդյունաբերության ոլորտը, թեպետ, ներկայումս բավարար չափով մրցունակ չէ, սակայն եթե հաշվի առնենք երկրում առկա բոլոր, մետաքսի սեփական արտադրություն հիմնելու նախադրյալները, գորգագործության, հագուստի, կոշիկեղենի

¹ www.ooo-perlit.ru/perlit_isp.htm

արտադրության մեջ հարուստ ավանդույթների, էժան և որակյալ աշխատուժի առկայությունը, ինչպես նաև ԱՊՀ երկրների շուկաներ ազատ մուտքի հնարավորությունը, հեռանկարային է դառնում ոլորտում արտահանման և արտադրության փոխկապակցված աճի հնարավորությունը: Վերջին ժամանակներս ոլորտում հայտնված արտերկրյա մի քանի հայտնի ընկերություններ ցույց տվեցին, որ հնարավոր է առկա ռեսուրսներով միջազգայնորեն մրցունակ արտադրանք թողարկել: Բացի այդ, տեքստիլ արդյունաբերությունը քիմիական արդյունաբերության հետ փոխկապակցված զարգացնելու պարագայում լայն հնարավորություն է բացվում նաև քիմիական արհեստական մանրաթելերի և դրանցից արտադրանքի արտահանման ծավալների մեծացման համար: Ներկայումս նման արտադրանք արտահանվում է, սակայն չեն ծավալներով (ընդհանուրի 0.1%-ը):

Վերոնշյալից բացի, կարելի է զուգահեռաբար սկսել համաշխարհային շուկայում այս ոլորտի համեմատաբար նոր ճյուղի զարգացումը՝ չիրկիզվող պոլիմերային նյութերի և կտորների արտադրություն, որոնք օգտագործվում են մեքենաների, ինքնաթիռների, մավերի ներքին սրահների երեսպատման, հյուրանոցների, դպրոցների և այլ կառույցների շինարարության մեջ, ինչպես նաև վարագույրների, գորգերի արտադրության մեջ: Հարկ է նշել, որ այս նյութերը ներկայումս չունեն այլ փոխարինիչներ: Իհարկե, ասվածը ենթադրում է միջնաժամկետ և երկարաժամկետ զարգացում, քանզի անհրաժեշտ է նորարարական մոտեցում ցուցաբերել և նախ և առաջ մշակել նման նյութերի արտադրության արդյունավետ տեխնոլոգիա: Ընդ որում, հարկ է նշել, որ համաշխարհային տնտեսության մեջ նման նյութերի բավականին զգալի պահանջարկ կա: Տեքստիլ արդյունաբերության մեջ նորարարության ներդրման պարագայում կարելի է մտածել նաև Հայաստանում տեխնիկական տեքստիլի արտադրություն սկսելու մասին, որը, ի դեպ, կնպաստի ոչ միայն ՀՀ արտահանման աճի հնարավորությանը, այլ նաև տնտեսության մյուս ճյուղերի զարգացմանը (տեխնիկական տեքստիլն օգտագործվում է բժշկության, շինարարության, գյուղատնտեսության և այլ ոլորտներում):

Վերոնշյալ 2 նոր ճյուղերը կարող են դառնալ ՀՀ տնտեսության առանցքային ոլորտներից, քանի որ ՀՀ-ն ունի դրանց զարգացման համար անհրաժեշտ թե՛ հումքային և թե՛ մտավոր ներուժ: Դրա համար անհրաժեշտ է հնարավորինս արագացնել հանրապետությունում մանուտեխնոլոգիաների ներդրումը, որն էլ կօգնի Հայաստանի տնտեսությանը զարգանալ ժամանակին համընթաց:

Ադամանդագործության և ոսկերչության ոլորտում մասնագիտացումը պետք է ընթանա ավելի շատ ոսկերչական իրերի, քան ադամանդի վերամշակման արտադրությունում, քանի որ այդ


ենթաճյուղում առկա են առավելություններ բազմաթիվ գործոնների առումով՝ աշխատուժի որակ, հումքային ներուժ, համաշխարհային շուկայում բարձր պահանջարկ և այլն: Եվ բացի այդ, ոսկերչական իրերի արտադրության պարագայում ստեղծվող ավելացված արժեքն ավելի մեծ է, քան ադամանդի վերամշակման դեպքում:

Ստավոր սեփականություն

Գիտելիքը միշտ եղել և մնում է հիմնարար արժեք բոլոր ժամանակներում և տարբեր մշակույթներում: Սակայն գիտելիքահենք տնտեսության ձևավորման անհրաժեշտությունը դարձել է ներկայիս տնտեսական զարգացման հիմնապայմաններից մեկը: Տնտեսական զարգացումը մշտապես պահանջում է նոր գաղափարների և տեխնոլոգիաների շարունակական հոսքեր: Այսօր ակնհայտ է, որ նորությունները և հասարակության ստեղծագործական ներուժը պայմանավորում են երկրների ու տնտեսությունների մրցակցային կարողականությունը: ՀՀ-ի համար ավելի քան արդիական է գիտելիքահենք տնտեսության ձևավորումը, հետևաբար և մտավոր սեփականությանն առնչվող հիմնահարցերի քննարկումն ու այս ոլորտի բարելավմանն ուղղված միջոցառումների ձեռնարկումը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին անդրադառնալով՝ նշենք, որ Հայաստանում այս ոլորտի մասնագիտացումն ընթանում է հիմնականում վեբ-դիզայնի և ծրագրային ապահովման ուղղությամբ (27%), մինչդեռ այսօր համաշխարհային և տեղական շուկայում մեծ պահանջարկ կա միկրոսխեմաների նախագծման, բանկային և ֆինանսական ծրագրերի, ինչպես նաև՝ կառավարման տեղեկատվական համակարգերի նկատմամբ:


Գծապատկեր 1. Հայաստանի ՀՆԱ-ի արտադրության կառուցվածքը՝ ըստ ոլորտների, %



Գծապատկեր 1-ում արտացոլված է բավականին հետաքրքիր պատկեր. 2008թ., 2002թ. Համեմատությամբ, ՀՆԱ-ի կառուցվածքում նվազել է ինչպես գյուղատնտեսության, այնպես էլ՝ հանքագործական,

մշակող արդյունաբերությունների ու էլեկտրաէներգիայի տեսակարար կշիռը: Փոխարենն աճել է շինարարության և ծառայությունների ոլորտի տեսակարար կշիռը: Այսինքն՝ մինչև 2008թ. ՀՀ տնտեսության երկնիշ տնտեսական աճն ապահովվել է գերակշռաբար ոչ արտադրական ոլորտների հաշվին: Տնտեսական աճի ապահովման գործում ծառայությունների ոլորտի ունեցած մեծ տեսակարար կշիռը ներկայումս զարգացած երկրների տնտեսական քաղաքականության բնորոշ գծերից է: Սակայն, հարկ է նշել, որ զարգացած երկրներն այդ իրականությանը հանգել են արդեն իսկ զարգացած գյուղատնտեսություն և արդյունաբերություն ունենալուց հետո, քանզի առանց տնտեսության արտադրական ոլորտի զարգացման՝ հնարավոր չի լինի տնտեսությունում պահպանել երկարատև աճի միտում, ընդամենը կապահովվի ժամանակավոր թվացյալ աճ: Թերևս, 2009-2011թթ. ՀՆԱ-ի կառուցվածքում շինարարության տեսակարար կշռի նվազումը հոգուտ գյուղատնտեսության և արդյունաբերության լավատեսական հույս է ներշնչում:

2011 թվականի տվյալներով արձանագրվել է արդյունաբերության ոլորտի 14.1 տոկոս աճ



Արդյունքում 2011 թվականին ՀՀ կառավարությանը հաջողվեց ՀՆԱ կառուցվածքի փոփոխություն արձանագրել. արդյունաբերության ճյուղի 14.1 տոկոս աճի շնորհիվ դրա մասնաբաժինը ՀՆԱ կառուցվածքում հասավ 16.5 տոկոսի՝ 2007 թվականի 14.9 տոկոսի փոխարեն:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ

Սարգսյան Մարիամ

ԵՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ, մագ. 2-րդ կուրս
Գիտական դեկանար՝ տ.գ.դ., պրոֆ. Ա. Առաքելյան

Ներածություն: Աշխատանքը նվիրված է ՀՀ պետական գնումների գնահատմանը և վերլուծությանը: Վերլուծությունը իրականացվել է պետական գնումների 9 ամսյա տվյալների հիման վրա՝ ներկայացված 144 մարմինների կողմից: Ներկայացվել են գնումների դինամիկ մոդելներ, ուսումնասիրվել է գնումների կայունությունը, գնահատվել են գնումների պայմանագրային արժեքի և նախահաշվային արժեքի փոխադարձ ցնցումները:

VAR ՄՈԴԵԼԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՄՔԸ

VAR մոդելի ընդհանուր տեսքը երկու փոփոխականների և երկրորդ լազի համար, համաձայն $[1,3]$ ¹ աշխատանքների ունի հետևյալ տեսքը:

$$x_{1t} = a_{10} + \sum_{j=1}^2 a_{11j} x_{1,t-j} + \sum_{j=1}^2 a_{12j} x_{2,t-j} + \varepsilon_{1t},$$

(1)

$$x_{2t} = a_{20} + \sum_{j=1}^2 a_{21j} x_{1,t-j} + \sum_{j=1}^2 a_{22j} x_{2,t-j} + \varepsilon_{2t},$$

որտեղ $x_{i,t-j}$, $i=1,2, j=1,2, t=1,2,\dots,T$, ուսումնասիրվող փոփոխականներն են, $t-j$ լազերն են $j=1,2$: Վեկտորական ավտորեգրեսիայի համակարգը ուսումնասիրվել է $[1,3]$ աշխատանքներում որպես բազմահավասարումային մոդելավորման եղանակ: Համաձայն այդ աշխատանքի ենթադրվում է, որ բոլոր փոփոխականները ենթոգեն են: VAR մոդելի օգնությամբ լուծվում են

¹ 1. **Pindyck R.S., Rubinfeld D. L.**, Econometric Models and Econometric forecast Irwin/Mc Graw-Hill, New York, 1998, p.275-289

2. **Rudoy M.B.** Multistage Mean – Variance Portfolio Selection in Cointegrated VAR. MIT, 2009.

3. **Sims C.A.** Macroeconomic s and Reality, Econometrica, vol. 48, pp.1-48, 1980. Econometrica,

երկու խնդիրներ. ա/ փոփոխականները /էնդոգեն և էզոգեն/ ազդում են միմյանց վրա, բ/ ուսումնասիրվում են լագերը, որոնցով պայմանավորված է փոփոխականների ազդեցությունը մեկը մյուսի վրա:

ԳՆՈՒՄՆԵՐԻ VAR ՄՈԴԵԼԸ:

Աշխատանքում որպես փոփոխականներ ուսումնասիրենք.

PROCONT- ողորկված գնումների պայմանագրային արժեքը ժամանակի t -րդ պահին,

PROEST- ողորկված գնումների նախահաշվային արժեքը ժամանակի t -րդ պահին:

Այսպիսով, (1) VAR մոդելը կներկայացվի հետևյալ կերպ

$$PROCONT(t) = a_{10} + \sum_{j=1}^2 a_{11j} PROCONT(t-j) + \sum_{j=1}^2 a_{12j} PROCONT(t-j) + \varepsilon_{1t} \quad (2)$$

$$PROEST(t) = a_{20} + \sum_{j=1}^2 a_{21j} PROEST(t-j) + \sum_{j=1}^2 a_{22j} PROEST(t-j) + \varepsilon_{2t} \quad (3)$$

